

1782.

ԱՆ ԳԼԻԱ

ԳԵՐՄԱՆԻԱ

ՔՐԱՆՍԻԱ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶ. ՍՈՍԿՎԱ, 1931

9(4)

Պ-50

30 MAY 2011 CA 32-1
244

Վ. ՊԵՏՐՈՎԱ

9007 3074 0 1

ԱՆԳԼԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ՖՐԱՆՍԻԱ

ՊՐԱԿ Ի.

Պետ. Գիտ. նորհրդի Մանկավարժա-
կան Սեկցիայի թույլտվությամբ — 1 տո-
ախանի զարդոցների համար:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1931

1789

МОСКОВСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
 ГОС. БИБЛИОТЕКА
 ЗУУН-АРМ СССР
 И. И. А. МЯСНИКОВ
 Ц. УВНПРИБОИСТ. СБДНП

60554.67

Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

Այս գրքի վիպական նյութը, համաձայն խմբի պատրաստու-
թյան ընդհանուր մականդակի, կարող է ողտագործվել կամ դա-
սաբանական պարապմունքների համար և կամ յերեխաների տնա-
յին ընթերցանության համար: Դիրքը բաղկացած է 3 պրակից. —
I պրակ՝ Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, II պրակ՝ Հյուսիսային Ամե-
րիկայի Միացյալ Նահանգներ, III պրակ՝ Զինատան, Յապոնիա:

Ա Ն Գ Լ Ի Ա

Կոլյան սովորում էր Մոսկվայի I աստիճանի դպրոցում
և արդեն փոխադրվեց չորրորդ խումբը:

Նա շատ մտերիմ էր իրենց հարևանի վորդու՝ Կոստյայի հետ:

Նրանք սովորում էին միասին միևնույն խմբում, սակայն Կոստյան յերկու տարով մեծ էր: Դեռ անցյալ ամառ նա պիոներ գրվեց և գնացել էր ճամբար՝ գյուղ:

Կոլյան շատ էր տխրել առանց իր մտերիմի և անհամբեր ասպետի՝ Նա նամակներին: Կոստյան գրում էր հաճախ: Նա պատմում էր նամակներում, վոր ինքն ու ընկերները ապրում են դաշտում, վրանների մեջ, պատքաստում են իրենց կերակուրը խարույկի վրա և ամեն առավոտ զարթնում են թմբուկների վորոտից: Յերեկը նրանք աշխատում են գյուղի ամենաչքավոր գյուղացու հողամասում: Շուտով կկրեն հնձած հացը: Այս բոլորը թվում էր Կոլյային անսահման գեղեցիկ, և նա մտքով ալանում էր գյուղ, Կոստյայի մոտ: Այժմ, յերբ Կոստյան նրա հետ էր, նա այնուամենայնիվ ափսոսում էր, վոր ընկերը առանց իրան ե գնում պիոներական հավաքույթներին:

— Գիտե՞ս, Կոլյա, մեզ մոտ գալիս են անգլիական յերեխաներ, — պատի վրայով ձայն տվեց մի ուր յերեկոյան հավաքույթից նոր վերադարձած Կոստյան: Դրանք պիո-

ներներ են: Անգլիական իշխանությունը արգելում էր նրանց խորհրդային Միություն գալը, չէր տալիս նրանց անցագրեր, սակայն նրանք գաղտնի փախել են մեր խորհրդային շոգենավով և շուտով Մոսկվա կլինեն:

Կոլյան իսկույն վաղեց Կոստյայի մոտ մանրամասնություններն իմանալու: Ընկերը պատմեց նրան, վոր այսօր իրանց ակումբում պետրուշկա ունեյին: Տիկնիկներից մեկը նմանեցրել էյին անգլիական արտաքին գործերի մինիստր Չեմբերլենին*, վորը մեծ թշնամի յե խորհրդային Միության բանվորներին և գյուղացիներին: Մյուս տիկնիկը նման էր անգլիական ներքին գործերի մինիստր Հիկսին, վորը նույնպես թշնամի յե բանվորներին: Ներքին գործերի մինիստրը մեծ իրավունքներ ունի Անգլիայում: Նրանք ե յենթարկվում վոստիկանական ամբողջ բանակը: Այդ տիկնիկների մեջ տեղի ունեւր այսպիսի խոսակցություն.

Չեմբերլեն. — Յես — սեր Չեմբերլենս — անգլիական ազգից,

Լավ եմ հասկանում արտաքին գործից.

Անթիվ, անհամար ունեմ շատ հոգսեր:

Քնել չեմ կարող յես որ ու զիշեր.

Մոռցել եմ անգամ շամպայնի բաժակ:

Կորցրել անգամ իմ լավ ախորժակ:

Չե, չեմ կարող այլևս այս հոգսը տանել:

Պետք ե մեր Հիկսին շուտ գանգահարել:

Հիկս. — Ներքին գործերի քաջ մինիստր եմ,

Կոմունիստներին յես վողջ-վողջ կուտեմ:

(Վերցնում ե լսելափողը).

Միտեր Չեմբերլեն, այդ գո՛ւք եք, իմ տեր:

Չեղ համար գլխով կծակեմ պատեր:

Չեմբերլեն. — Մենք ձեզ ասել ենք:

Հիկս. — Հա, հա, ասել եք:

Չեմբերլեն. — Յեվ վորոշեցինք...

* Այն ժամանակ Անգլիայում կառավարության գլուխ էյին կանգնած կոնսերվատորները:

Հիկս. — Հա, վորոշեցինք:

Չեմբերլեն. — Չթողնել...

Հիկս. — Չթողնել:

Չեմբերլեն. — Բա ո՛ւր են նրանք:

Հիկս. — Ո՛վ (ամբողջ խոսակցությունը կրկնվում ե):

Չեմբերլեն. — Պիոներները, ջուրը քեզ տանի:

Հիկս. — Դուք այն տղերանց մասին եք խոսում,

Վոր «միշտ պատրաստ ենք» գոչում են, ասում:

Ո՛ւր կերթան նրանք, սիրտդ տեղը դիր,

Չե՞ վոր ձեռքերին չունին անցագիր:

Չեմբերլեն. — Ինձ ճիշտ աղբյուրից լուրեր են հասել,

Վոր ձեր վորոշման վրա յես թքել:

Սովետական նավ նստել են մթնով,

Սովետի յերկիր փախել են խմբով:

Հիկս. — Հասեք, բռնեցեք, բերեք, կախեցեք:

(Վազում են պիոներների յետևից):

Սպասավոր. — Հասեք, բաց դաշտում քամի փնտրեցեք...

— Իսկ ինչո՞ւ անգլիական կառավարությունը չէր ուզում թողնել մեզ մոտ պիոներներին, — հարցրեց Կոլյան:

— Նրա համար, վոր Անգլիայում, ինչպես և ամբողջ աշխարհում, բացի ԽՍՀ Միությունից, իշխանությունը կապիտալիստների ձեռքին ե: Նրանք չեն ցանկանում, վոր իրանց բանվորները մեր հանրապետության մասին ճիշտ բան իմանան, և վախենում են՝ չլինի թե փողբիկ կոմունիստները, վերադառնալով տուն, պատմեն յուրայիննեքին, վոր աշխատավորության համար խորհրդային յերկրում անհամեմատ ավելի հեշտ ե ու լավ, քան բուրժուական յերկրներում:

— Դիտե՞ք արդյոք, յերեխաներ, խառնվեց նրանց խոսակցությանը Կոստյայի հայրը՝ գործարանային ելեկտրատեխնիկ, — վոր Անգլիայում մինչև որս իշխում ե թագավորը: Բայց նա չի կառավարում յերկիրը: Յերկիրը կառավարում են մինիստրները, վորոնց նա նշանակում ե պարլամենտի ամենագորեղ կուսակցությունից: Պարլամենտը

Անգլիայում — ամենահին պետական հիմնարկությունն է՝
Դա ազգաբնակչությունից ընտրվածների ժողովն է։ Թեև
Անգլիայում ընտրական իրավունքից ղեկավարվում է ամբողջ
ժողովուրդը, բայց փաստորեն իշխանությունը միշտ կա-
պիտալիստների ձեռքումն է, Կապիտալիստների արամա-
դրություն տակ են ֆաբրիկները, գործարանները, յերկա-
թուղիները, զորքը, վոստիկանությունը։ Քանի դեռ նրանք
տապալված չեն — պարլամենտն ու մինիստրները պիտի
յենթարկվեն նրանց, անկախ նրանից, թե վոր կուսակցու-



Նկ. 1. Անգլիական պարլամենտը

թյունն է կանգնած կառավարության գլուխը — լիբերալ-
ները, կոնսերվատորները, թե լեյբորիստները։

Կոստյայի հայրը ցույց տվեց յերեխաներին անգլիական
պարլամենտի լուսանկարը (տես նկար 1)։

— Ախ, Կոստյա, վրձան դու յերջանիկ ես — հառա-
չեց Կոլյան։ — Շուտով դու կտեսնես անգլիական պիոներ-
ներին, կխոսես նրանց հետ, իսկ յես պետք ե՛նստեմ տանը։

— Մի վշտանար։ Մենք կկազմակերպենք մեծ տոնա-

կատարություն և կհրավիրենք անկազմակերպ յերեխանե-
րին։ Դու հույնպես կտեսնես անգլիական տղաներին, —
մխիթանում եր նրան Կոստյան։

Լ Ո Ն Դ Ո Ն

1927 թ. հունիս ամսի վերջն է։ Քաղաքային դպրոց-
ներում արդեն պարապմունքներ չկային, սակայն Կոլյան
ամեն ուր վազում եր մանկական հրապարակ, վորը բացել
եյին նրա խմբի աշակերտները բանվորական թաղի յերե-
խաների համար։ Հաճախակի մանկական հրապարակ գալիս
եր նաև Կոլյայի դպրոցի ուսուցչուհին տեսնելու, թե ի՞նչ-
պես են աշխատում իր աշակերտները։

— Ալեքսանդրա Պավլովնա, — վազեց նրա մոտ Կո-
լյան, — ինչպե՞ս են ապրում անգլիացիք։

— Ի՞նչու այդ բանը հանկարծ գիտենալ ցանկացար, —
զարմացած հարցրեց ուսուցչուհին։

Մեզ մոտ գալիս են անգլիացի տղաներ. յես ուզում
եմ խոսել նրանց հետ և այնպես, վոր նրանք չկարծեն,
թե յես տգետի մեկն եմ։

— Շատ լավ։ Իսկ դու անգլիերեն գիտե՞ս, — ժպտաց
Ալեքսանդրա Պավլովնան։

— Մի քիչ գիտեմ. ամբողջ ձմեռ հայրիկն ինձ ուղար-
կում եր Ձոն Կարլովիչի մոտ անգլիերեն սովորելու։

— Այ թե ինչ։ Վոր այդպես ե, յես վաղը կբերեմ
այստեղ լավ գրքեր և արի միասին կարդանք Անգլիայի մասին։

— Իսկ գրքերը հետաքրքիր կլինեն։ Այդ դեպքում յես
Կոստյային ել հետս կբերեմ։

— Այ, կտեսնես։

Հետեյալ ուրը Ալեքսանդրա Պավլովնան բերեց յերեխա-
ների համար գրքույկներ և նկարներ անգլիական կյանքից։

Բոլորն ել ուզում եյին պատկերները տեսնել, և
ուսուցչուհու շուրջը հավաքվեց յերեխաների խմբակը։ Բո-
լորը նստեցին ավազի վրա, նստարանի շուրջը։

— Պատմեցե՛ք մեզ անգլիական աշակերտների մասին:

— Վե՛հ, պատմեցե՛ք գյուղի մասին:

— Քաղաքի մասին:

— Ծովապետները և ճանապարհորդների մասին —
լավում եյին յերեխաների ձայները:

— Վոչ բոլորը միանգամից, յերեխաներ: Անգլիան ընդարձակ յերկիր ե, նրա մասին կարելի չե պատմել մի քանի օր ու գիշեր անընդհատ: Այ, յես այսօր կսկսեմ Անգլիայի Լոնդոնից, վորը ամենամեծ քաղաքն է աշխարհում:

Յերեխաները լռեցին: Ալեքսանդրա Պավլովնան սկսեց կարդալ և պատմել:

— Յամաքով մենք Լոնդոն հասնել չենք կարող. ամբողջ Անգլիան տեղավորված է կղզիների վրա:

Ալեքսանդրա Պավլովնան ձեռքն առավ մի ձող և ավազի վրա գծեց Անգլիայի քարտեզը:

— Ահա, յերեխաներ, նայեցե՛ք. մեծ կղզին կոչվում է Մեծ Բրիտանիա: Նրա վրա գտնվում են Անգլիան, Ուելսը և Շոտլանդիան. կողքի ավելի փոքր կղզին՝ Իռլանդիան է: Յեթե մենք կամենանք Անգլիա գնալ, մենք պետք է Լեյնինգրադում շոգենավ նստենք, դուրս գանք Բալթիկ ծովից Կիլ ջրանցքով Հյուսիսային ծովը և մանենք Լոնդոն: Լոնդոնը վոչ միայն իր մեծությամբ առաջին քաղաքն է ամբողջ աշխարհում, այլև հիանալի նավահանգիստ է: Կարող ե պատահել, վոր անգլիական մայրաքաղաքին մոտենալու ընդերքին մեզ զարմացնի թանձր ու միապաղաղ ծխի և մառախուղի ծածկոցը, վորը Լոնդոնի յերկնքի գույնը դարձնում է դեղին կամ գորշ: Մառախուղը այնքան թանձր է լինում, վոր յերկու քայլ այն կողմ վոչինչ չես նշմարի: Մի ուրա ճանապարհորդ հետաքրքիր ձևով պատմում է, թե ինչպես ընկել է այդպիսի մառախուղի մեջ յերկաթուղու քաղաքային կայարանից տուն վերադառնալիս:

«Դուրս գալով դռնից, յես կասկածեցի, թե շփոթել եմ կայարանը — չեյին յերևում վոչ ծանոթ փողոցը, վոչ էլ

սովորական առարկաները: Ուշի ուշով նայելով, յես զարմանքով համոզվեցի, վոր առհասարակ վոչինչ չի յերևում — վոչ տները, վոչ սալահատակը, վոչ լապտերները, վոչ ել չուսավորված վիտրինները (ցուցափեղկ): Ինձ հետ միասին կայարանից դուրս յեկած մարդկանց խումբը հանկարծ չքացավ, կարծես կայարանի շեմքի առաջ կար սեպացած անդունդ, վորը կլանեց նրանց: Մնացի մենակ: Ծովելով դեպի հարկավոր կողմը, յես գնացի սովորական ճանապարհով, առանց ճանաչելու այն: Մի քանի քայլից հետո իմ գլխի վերև թանձր խավարի մեջ հանկարծակի և անսպասելի փայլատակեց գազային լապտերը: Հագիվ մի քայլ հեռացել եյի լապտերից, — լույսն էլ անհայտացավ, հանգավ այնպես հանկարծ, ինչպես յերևացել եր: Շուրջս ավելի մթնեց: Վտանգից խուսափելու համար յես սկսեցի քայլել փողոցի միջով: Յերբ հաշվում եյի, թե հասել եմ մեջ տեղը, հանկարծ զարկվեցի ինչ վոր տան դուրս ցցված մասին: Թվում եր թե այս սոսկալի անորոշության մեջ տներն անգամ կորցրել են իրանց և չիմանալով այլևս ուր կանգնել, սկսել են ընկնել մարդկանց վտանգների տակ ամենաանսպասելի տեղերում: Հեռանալով տնից, վորին դիպա, յես ինձ զգացի ինչ վոր կենդանի եյակի գրկում: Մենք սկսեցինք հարց ու փորձը, թե վորն է աջ և վորն է ձախ կողմը, վորովհետև մեզնից և վոչ մեկը չգիտեր այդ: Մայթի փոսից սայթաքելով, դիպչելով մարդկանց և լապտերների, ցած գլորելով չարաբախա մոտոցիկլետիստին, վորը զուր ջանք եր թափում ճեղքել մթության ծովը, յես այնուամենայնիվ գտա փողոցի այն պտույտը, վորը 2 բոլեյի ճանապարհ է կայարանից: Ձեռքերով հաշվելով տները, դռներն ու լուսամուտները, խարխափելով, մի կերպ գտա իմ դուռն ու ներս ընկա: Տանս տերերը շատ զարմացան:

— Միթե դուք կարողացա՞ք գտնել ճանապարհը կայարանից:

Յես նրանցից ավելի զարմացա:

Ատլանտյան ովկիանոսն ու ծովերն են, վոր շրջապատելով Բրիտանական կղզիները, տարվա մեծ մասը դարձնում են նրանց կլիման խոնավ և մառախլապատ: Մառախուղին ավելանում է ֆարերիկների և գործարանների անհամար ծխնելույզների ծուխը, վորը վարագուրում է քաղաքի յերկինքը:

Յերբ ոտաքականը նավից իջնելով անցնում է Լոնդոնի փողոցներով, նրան զարմացնում է այն, վոր այստեղ այնչե, ինչ վոր ուրիշ յերկրներում: Տներից յուրաքանչյուրը իր յեկը ունի դեպի փողոց: Դռների վրա գանգի փոխարեն կա ծանր թակոց, վորով մտնել ցանկացողը թակում է դուռը: Քաղաքի կենտրոնում կան զբոսավայր-պարտեզներ, ուր մոլորվել կարելի յե: Գայդ-պարկը (պարտեզը) մի մեծ մարգագետին է, տեղ-տեղ յերևացող ծառերով, և նրա վրա արածում են վոչխարներ: Ամենուրեք կանաչի վրա յես քայլում: Զինվորները ման են գալիս առանց զենքի, ձեռնաձողիկներով: Վոստիկանները զենք չեն կրում: Պոստատարները վազում են, պայուսակի տեղ քաթանե պարկերը մեջքին: Անցնում են յերկանիվ տարորինակ կառքեր: Կառապանները նստում են ձանապարհորդի յետևը, տանիքի վրա: Գրգռացնում են շոգեղնացները յերկու բռնատար վագոններով: Սլանում է հսկայական բռնակիր ավտոմոբիլը: Պեծին են տալիս պոստատար գեղեցիկ ավտոմոբիլները, վորոնց վրա գրված է «Արքայական պոստ»: Անվերջ շարանով ձգվում են հանրակառքերը: Անհամար մանուկներ հեծանիվներով կրում են գնած իրերը: Անցորդներին թիվ չկա: Բոլորը շտապում են, բայց հրող չկա: Ազմուկ է փողոցում, սակայն ճիշ ու աղաղակ չկա: Փողոցային ամբողջ շարժման մեջ ապշեցուցիչ կարգ կա: Քաղաքը հսկայական է:

1927 թ. Լոնդոնում յեղած մի ուսս ձանապարհորդ պատմում է.

«Մեկ անգամ, կիրակնորյա զբոսանքի դուրս գալով, փորձեցինք վոտով դուրս գալ քաղաքից: Ճաշից հետո ճա-

նապարհ ընկանք: Կենտրոնական և նրանց կից թաղերն անցանք գետնի տակից գնացող յերկաթուղով և ավտոբուսով և միայն այն ժամանակ սկսեցինք վոտով գնալ, յերբ յերևացին ծայրամասերի նշանները: Մենք անցանք բանվորական աղքատ թաղով, վորտեղ յերեխաները թավալվոր գնում էյին իրանց գնդակների յետևից: Յերկար ժամանակ գնում էյինք: Արդեն պատահում էյին առանց չենք տարածուկթյուններ և անմարդաբնակ տներ: Թվում էր, թե քառորդ ժամից հետո արդեն կլինենք քաղաքից դուրս, կանաչների վրա. և իրոք, շուտով հանդիպեցինք մի փոքրիկ մարգագետնի, սակայն... նրանից դենը նորից ձգվում էյին տների շարքեր և փողոցներ: Դուրս յեկավ, վոր դա քաղաքի հարավային մասն է: Յերեկոյան դեմ անցանք այդ մասը և հասանք մի դատարկ տարածության, բայց նրա այն կողմում նորից փայլվում էյին քաղաքային լապտերների կրակները: Լապտերները լուսավորում էյին անծայր մի փողոց, վորի վրա տներ նույնիսկ չկային, այլ ձգվում էյին միայն քարե յերկար ցանկապատեր: Մոտեցանք քաղաքապահին (պոլիսմեն) և հարցրինք, թե ի՞նչ տեղ է սա:

— Ի հարկե, սա Լոնդոնը չե, — հետաքրքրվեցինք մենք:


— Լոնդոնն է, — պատասխանեց քաղաքապահը, մտերմաբար ժպտալով:

Մենք վերադարձանք տուն ավտոբուսով, վորը բերեց մեզ աշխարհի մյուս ծայրից: Գիշերվա ժամը 1-ն էր: Շատ հոգնել էյինք, իսկ այն տեղը, ուր վերջանում է Լոնդոնը, այնուամենայնիվ չտեսանք:

Իսկ կար ժամանակ, յերբ Անգլիայի մայրաքաղաքը բաղկացած էր միայն այն փողոցներից, վորոնք այժմ կազմում են Լոնդոնի կենտրոնը: Սակայն յերեք հարյուր տարի առաջ Լոնդոնն սկսեց արագ մեծանալ, և այժմ նա աշխարհի ամենամեծ քաղաքն է, Յեվրոպայի և Ամերիկայի բոլոր մայրաքաղաքներից ամենամեծը: Նրա բռնած տարածությունը հավասար է մեր Միության մի ամբողջ գա-

վառի: Նրա բնակչությունը նույնպես աճողին է. միայն այս քաղաքում բնակիչներն ավելի յեն, քան հարևան ամբողջ պետություն մեջ — Իսլանդիայում: Այժմ Լոնդոնն ունի մոտ 8 միլիոն բնակիչ:

Ի հարկե, վորպեսզի բանվորների և ծառայողների մի ամբողջ բանակ արագ կարողանար շարժվել այդպիսի մի տարածություն վրա և ժամանակին հասնել աշխատանքի, պետք էր ստեղծել մեծ քանակությամբ փոխադրություն միջոցներ: Քաղաքի միջով անցնում են յերկաթուղային գնացքներ, ելեկտրաքարշեր և հանրակառքեր: Հարուստները գնում են ավտոմոբիլներով և կառքերով: Գետնի



Նկ. 2. Տունել Լոնդոնում:

տակից անց են կացրած յերկաթուղագծեր, տրամվայի գծեր, վոտամոբիլների համար առանձին ճանապարհներ, փոփոխելի նրանք կարողանան գետնի տակից անցնել փոփոցի մի մայթից մյուսը և չընկնեն անցնող կառքերի շարքերի տակ: «Լոնդոնում գործունյա մարդը, — գրել է շարքերի տակ: «Լոնդոնում գործունյա մարդը, — գրել է մի ճանապարհորդ դեռ 1916 թվին, — տարեկան 3 շաբաթ անց է կացնում քաղաքի յերկաթուղու վազոնում, տրամվայում կամ հանրակառքում»: Թե վորքան մեծ է փողոցային շարժումը, յերևում է նրանից, վոր 12 ժամում Լոն-

դոնի կամուրջով անցնում է $14\frac{1}{2}$ հազար կառք, Տոուերի կամուրջով՝ 10.250 միայն բեռնակիր կառք: Յուրաքանչյուր ուր Լոնդոնում մեռնում է կառքի տակ ընկած 2 մարդ, իսկ հաշմանդամ են դառնում 70 հոգի (26 հազար մարդ տարեկան): Թեմզան համարյա ել խոչընդոտ չի հանդիսանում քաղաքային շարժմանը, — նրան կտրատում են 25 կամուրջ և չորս ստորերկրյա ճանապարհներ: Լոնդոնի շարժումը անմիջականորեն ձուլվում է ամբողջ Անգլիայի ապրանքային և մարդատար շարժման հետ: Այստեղից սկիզբն են առնում մոտ 10 յերկաթուղագծեր: Հսկայական կայարաններն են մտնում որական մի քանի հազար գնացքներ: Թեմզա գետով Լոնդոնի նավահանգիստն է բերվում անգլիական տմբողջ ներմուծանքի $\frac{1}{3}$ մասը: Լոնդոնի պոստը տարեկան ուղարկում է աշխարհի բոլոր ծայրերը միլիարդից ավելի նամակներ և բացիկներ և 26 միլիոն հեռագիր: Վոչ մի բուլե դադար չառնելով է ընթանում Բրիտանական կայսրության մայրաքաղաքի կյանքը: Մարդիկ, գումարներ, ապրանքներ անհամար գետերի պես լցվում են յերկրի սիրտը և նորից դուրս են նետվում տարածվելու ամբողջ աշխարհում:

Բայց ահա դուք Սիտիի* սրտումն եք... աշխարհիս ամենաշեռուն կետում. մեկ որում այստեղից անցնում է միլիոնից ավելի մարդ: Այստեղ է գտնվում թագավորական առևտրական բորսան, հռչակավոր Անգլիական բանկը, և ուր էլ նայեք, — ամեն տեղ բանկերի, գրասենյակների, պահեստների, ապահովագրական և շոգենավային ընկերությունների բյուրոների անվերջ շարքեր կտեսնեք (տես նկար 3):

Սեղմ շարքերով կանգնած են տները, և նրանց բոլոր հարկերում տեղավորված են գրասենյակներն ու բանկերը: Շինությունները տասնյակ տարիներից ի վեր վերականգնվածն են յեն յենթարկված: Ամենանշանավոր, հարուստ

* Սիտին — Լոնդոնի ամենաբանուկ մասն է:

բանկերում անգամ մութն է, անհամբույր։ Ստորին հարկերի լուսամուտների մոտ կայցրած են հայելիներ, վորոնք արտացոլում են Լոնդոնի յերկնքի ժլատ լույսը։ Փազն ու ելեկտրականութունը վառվում են ամբողջ որը։ Առավոտյան ժամը 9-ից մինչև յերեկոյան ժամը 6-ը Միտին անընդհատ շարժման մեջ է։ Հանրակառքերի և ավտոմոբիլների անավերջ կարավանը ձգվում է փողոցներով։ Արագ և լուռ գնում են մայթերով կլերկները* (նրանցից շատերը



Նկ. 3. Անգլիական բանկ

առանց գլխարկի), բանկերի թղթատարները ցիլինդր ծածկած և կաշվե պայուստակներով, ժիր մանուկ սուրհանդակները կլոր գլխարկներով, վորոնք այն աստիճան թեքված են դեպի ախանջը, վոր համարյա չեն ծածկում գլուխը։ Կանայք համարյա չեն յերևում։ Ամբողջ որը փողոցներով շարժվում են մարդկանց անհամար խմբեր, և անտեսանելի կերպով ձեռքից ձեռք, բանկից բանկ անցնում են չեկեր, աղցիաներ և վոսկիլն։ Միտին շահագետ և ճարպիկ

* Կլերկ — հաշվետան ստորին ծառայող

մարդկանց թագավորութուն է։ Այստեղ վճռվում են վոչ միայն Լոնդոնի և Անգլիայի, այլև ամբողջ աշխարհի գործերը։

Միտիյում հավաքված են շատ մեծ դրամական միջոցներ, վորոնք աշխուժացնում են ծովային ճանապարհները և հսկայական յերկաթուղագծերը Ասիայում և Աֆրիկայում։ Այդ միջոցներով է տարվել Աֆրիկայի հյուսիսային ծայրից մինչև հարավային ծայրն անցնող, Կահիրեն Կապշտադի հետ միացնող յերկաթուղագիծը, վորով Անգլիան հաստատուն է դարձնում իր իշխանութունը աֆրիկական գաղութներում։ 1916 թվականի նախորյակին Անգլիան տեղափոխեց 35 միլիարդ գանազան յերկրներ և ստանում էր տարեկան $1\frac{1}{2}$ միլիարդ տոկոս-շահ։ Փողերը հավաքել էին գլխավորապես Միտի գործիչները։ Շատ վաղուց չե, վոր Միտին վողողում էր ամբողջ աշխարհը իր կապիտալներով և պետութուններին թելադրում էր իր կամքը։ Բայց հիմա արդյունաբերական ճգնաժամի հետևանքով, դրությունը սկսվում է փոխվել։

Սուեզի ջրանցքով անցնող և մինչև Չինաստան՝ Հոնգ-Կոնգ, Ամերիկա և Ավստրալիա հասնող առևտրական նավերի $\frac{2}{3}$ -ը ծառայում են Միտի գործիչների կարիքներին, վորոնք քամում, բերում են Անգլիա հում նյութեր գործարանների համար և սննդամթերքներ։ Անգլիական բուրժուալի նախաճաշի մեջ դուք կգտնեք Կանադայի հացը, Ավստրալիայի միսը, Նոր-Ջեզանդիլայի պանիրն ու յուղը, Հնդկաստանի շաքարը, կակաոն, թեյը, Պաղեստինի մրգերը և այլն։ Այժմա ել անգլիական նավթային ընկերությունների գործիչները, հայտնի Դետերդինգի գլխավորությամբ, զրդում են Ֆրանսիական կառավարությանը խզել հարաբերությունները մեր Միության հետ, վորպեսզի ուստական նավթը չկարողանա խել անգլիական նավթի գնորդներին։ Վորպեսզի իմանան, թե ինչ է կատարվում աշխարհում, Միտիում մեծ ուշադրությամբ կարդում են թերթերը։ հեղափոխական ղյուղացիներից բանակներ կազմվելը Չի-



նաստանում, յերկրի զգալի մասի խորհրդայնաձևը, չինական կարմիր բանակի հաջողությունները, պրոլետարական պայքարի սրումն ու ապստամբությունները Հնդկաչինում, Մարոկկոյում, Հնդկաստանում և այլ գաղութային յերկրներում, ինդուստրացման փոխառությունների հաջողությունները Խորհրդային Միության բոլոր մասերում և հրաբանվորության խանդավառ վորոշումները՝ 5-ամյակը 4 տարում կիրառելու վերաբերյալ, արտասահմանյան կապիտալիստների վարձկան մի քանի ինժեներների և մենեջերների վնասարարությունները մեր ուժեղացող արդյունագործության մեջ, Ազգերի լիգայի աչքակալությունները զինաթափման խնդիրներում, իմպերիալիստական պետութայինների գաղտնի ու հայտնի զինվելը, — այս բոլորը արագ հաշվի յե առնվում Սիտիյում: Սիտին, լսելով վորեն կարևոր նորություն, իսկույն և յեթ սկսում և հաշվել, թե տեղի ունեցած անցքը ո՞ւմ ինչքան ոգուտ կբերի և ո՞ւմ ինչքան վնաս:

Անգլիական բանկից և բիրժայից վոչ շատ հեռու սկսվում և մյուս, արդեն անշուք Լոնդոնը, վոր կոչվում և Արևելյան Լոնդոն: Յեխոտ, աղբոտ փողոցներ, այստեղ զարշահոտ փալատների կույտերի մեջ խաղում են յերեխաներ: Գունատ, հյուծված բնակիչները, պատառտված և կեղտոտ հագուստներով, թափառում են ստվերների պես, անցնելով կեղտոտ տների և կասկածելի, հոտած մթերքներ վաճառող խանութների մոտով: Անգլիայի մեծ մայրաքաղաքի այս մոայլ ու տխուր մասում ապրում են «սև» բանվորները, բռնակիրները և նավաստիները: Այստեղ ել տեղ են գտել բազմաթիվ գործազուրկներ և բախտ վորոշելու յեկած ոտարականներ:

Փինետների կողքին գտնվում են քրիստոնեական ապաստարանները աղքատների և հիվանդների համար: Թե մեկը և թե մյուսը միատեսակ տխուր են և անմաքուր: Մեկ կամ յերկու թաղից չե, վոր կազմված և այս տխուր Լոնդոնը, — ամբողջ կիլոմետրերով ձգված են միատեսակ, սե-

վացած, կաղարմային տեսք ունեցող տները, վորոնք բռնում են համաշխարհային այս քաղաքի կեսից ավելին: Նրանցում վխտում են միլիոնավոր մարդիկ, վորոնք իրենց տեսքով վախ են ազդում և խրանեցնում կենտրոնական փողոցների պճնված հասարակութայինը:

Սրանով վերջացավ Ալեքսանդրա Պավլովնայի զրույցը յերեխաների հետ:

— Յեկեք, յերեխաներ, նորից մի որ հավաքվենք, — առաջարկեց Կոստյան, — և Ալեքսանդրա Պավլովնան թող պատմի մեզ, թե ընչպես են ապրում անգլիական բանվորներն ու գյուղացիները:

Յերեխաները հաճույքով համաձայնեցին. նրանց շատ հետաքրքիր թվաց մի ժամ արևի տակ ավազների վրա նստելը, պատմություններ և ընթերցում լսելը, պատկերների ավելումներ նայելը: Այսպիսի ընդմիջումից հետո նրանք նորից հաճույքով վերսկսեցին մանկահրապարակի աշխատանքները: Վոմանք խաղեր սարքեցին փողբիկների համար, վոմանք գնացին ջրելու իրենց տնկիները և մաքրելու թփերը, իսկ չարածճիները սկսեցին վազվզել և թավալվել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԻՈՆՆԵՐՆԵՐԻՆ

Հուլիսի սկզբներին Կոստյան Կոլյայի հետ գնաց Սոկոլ-Նիկի անտառային դպրոցը, ուր մի քանի որով իջել էին անգլիացի հյուրերը: Կոլյան խորամանկ հայացք գցելով ընկերոջ վրա, մոտեցավ պիոներուհի Նենսին և հարցրեց նրան անգլերեն, թե ինչպես և դուր գալիս նրան մեր Խորհրդային Միությունը: Կոստյան իսկապես շատ զարմացավ, լսելով իր բարեկամի անգլերենը, սակայն Կոլյայի ինքնագոհությունը յերկար չտևեց: Հենց վոր Նենսին արագորեն սկսեց պատասխանել, նա իսկույն նկատեց, վոր ամենևին չի հասկանում նրան: Նման դեպքեր շատ են պատահել բոլոր ոտարագործների հետ. նրանք, սովորելով կարդալ և մի քիչ ել անգլերեն խոսել, յերեխայել են,

թե տիրապետեցին լեզվին: Իսկ փաստորեն անգլերեն լեզվի մեջ ամենազգալի — ճիշտ արտասանությունն է: Կոլյան ստիպված եր շփոթված մի կողմ քաշվել և ղեմել թարգմանի ոգնության:

Նենսին պատմեց տղաներին, վոր իր քաղաքի բանվորները բուռն ցանկություն ունեն իմանալ, թե ինչպես են ապրում աշխատավորները Խորհրդային Միության մեջ: Յերբ նրանք իմացան, թե պիտներական կազմակերպությունները ուղարկում են իրանց պատգամավորներին մեր յերկիրը, մասնակցեցին պատգամավորների ընտրությանը: Նրա մեկնելու նախորդ որը կազմակերպվեց հրաժեշտի յերեկո և նրան մատուցին մի գեղեցիկ տուփիկ՝ զրելու պարագաներով, խնդրելով նրան հաճախակի գրել այն բոլորի մասին, ինչ նա կտեսնի և կլսի Խորհուրդների յերկրում:

Խոսակցություն քացվեց Անգլիայի դպրոցների մասին: Հյուրերը պատմեցին, վոր նրանց յերկրում վաղուց գոյություն ունի պարտադիր ուսում: Ծնողներն իրավունք չունեն իրանց յերեխաներին թողնել տանը. նրանք պարտավոր են նրանց ուղարկել դպրոց: Շատ հաճախ յերեխաներն սկսում են հաճախել փոքրահասակների դպրոցները յերեք տարեկան հասակից: Բոլոր դպրոցներում կրոնը պարտադիր է, և տերտերներին պետք է լսեն ինչպես յերեխաները, այնպես ել ուսուցիչները: Դպրոցների դրության մեջ շատ մեծ տարբերություններ կան. այն դպրոցները, վորտեղ սովորում են հարուստ ծնողների յերեխաները, ունեն հիանալի դասատուներ, ընդարձակ ու լուսավոր շենքեր՝ կաքինետներով, լաբորատորիաներով, գրադարաններով, խաղի և սպորտի հրապարակներով: Այդպիսի դպրոցների գրադարաններն թեքարաններում կան շատ գրքեր կազմերով և պատկերակարգ: Կաքինետներում դրված են ամեն տեսակ գործիքներ և մոդելներ, մարդու մարմնի քանդակի մոդելը, դանադան յերկրների կենդանիների և թռչունների գեղեցիկ ու նուրբ շինված խրտվիլակներ:

Պատերից կախված են պատկերներ, վորոնք ներկայացնում են լեռնաշղթաներ, սառցադաշտեր, ծովեր, կղզիներ, — մի խոսքով՝ յերկրագնդի զանազան անկյուններ:

Իսկ չքավորների յերեխաների դպրոցները կահավորված են խղճով. նրանցում յեղած պատկերները ամենաեփաներից են, մոդելներ և խրտվիլակներ շատ անգամ բոլորովին չկան, հաճախ նշանակվում են նվազ պատրաստված և անփորձ ուսուցիչներ:

Անգլիական դպրոցներում կա նաև ինքնավարություն, սակայն վոչ այնպես, ինչպես մերն է. սովորաբար յերեք տղա ընտրվում են դասարանի ավագ և ամբողջ տարի հրամայում մյուսներին: Մյուս տարի դպրոցի վարչության ազդեցությամբ նրանց նորից ընտրում են, և նրանք այնպես ել իշխում են մյուսների վրա տարեցտարի: Այս յերկու-յերեք տղան սովորում են հրամայել իրանց հասակակիցներին, իսկ վերջիններս սովորում են հպատակվել նրանց: Ունեն և մանկական դասարաններ. վորեւ հանցանքի մեջ բռնված աշակերտները ընկնում են իրանցընկերների դատի տակ. դատարանը կազմված է ընտրովի դատավորից, մեղադրողից, պաշտպանից, վկաներից, ինչպես չափահասների դատարաններում: Հանված դատավճիռները յերբեմն շատ խիստ են լինում. — զրկում են հագուստից, ճաշից, գրում են վատ կարծիք ավարտական վկայականի մեջ և այլն:

Անգլիական դպրոցներում յերեխաների հետ հաճախ շատ վատ են վարվում: Անգլիացի պիտները հարցրեց Մոսկվայի անտառային դպրոցի աշակերտներին.

— Դպրոցներում ձեր ձեռքերին քանոն չէ՞ն խփում: Ձե՞ն ստիպում, վորպես պատիժ, յերկար ժամանակ ձեռքերը պահել զլխի վերև:

Մեր յերեխաները պատասխանի փոխարեն ծիծաղեցին. այս տխուր հարցը նրանց շատ տարորինակ թվաց:

Անգլիայում յեղած մի ուսուսուցչուհի պատմում է, վոր մի մանկատնում, վորտեղ դաստիարակվում են քան-

վորներին յերեխաներ, ինքը հանդիսատես ե յեղել մի այս-
պիսի տեսարանի. դպրոցին կից կա մի հրաշալի մրգաբեր
այգի, վորը առաջներում պատկանում եր կալվածատիրոջ:
Այդ այգում բուսնում են դեղձ և խաղող: Սակայն յերե-
խաներին արգելված ե այդ մրգերի համն անգամ տեսնել:
Դեղձը ծախում են, իսկ խաղողը տալիս միայն ուսուցիչ-
ներին և ուսուցչուհիներին: Բոլորը միևնույն սեղանից են
ճաշում—մանկատուն յեկած հյուրերը, վարիչը, ուսու-
ցիչներն ու դաստիարակները և յերեխաները: Բայց ուտում
են տարբեր բաներ: Բոլոր մեծերը նախաճաշի ժամանակ
ստացան միս սխեռով և սոուսով, ճենապակե ավանե-
րով, իսկ յերեխաները—միայն խաշած կարտոֆիլ եփան
կավե ամաններով (քարդան): Յեվ սա բանվորների յերեխա-
ների ամենալավ մանկատունն եր, «լավ» ղեկավարներով:

Յերբ Կոստյան և Կոլյան վերադարձան տուն, այնտեղ
նստած եր Կոլյայի անդլերենի ուսուցիչը՝ Ջոն Կարլովիչը,
վոր գանձապահի պաշտոն ուներ գործարանում: Նա վա-
ղուց եր հեռացել Անգլիայից, բայց նրա վորդիքը աշխատե-
լու բանվորներ եյին Ուելսի շախտաներում (ածխահանքե-
րում): Յերբ յերեխաները պատմեցին ծնողներին, թե ինչ
լսեցին անգլիական պիոներներից, Ջոն Կարլովիչն ավե-
լացրեց.

— Անգլիայում բացի սովորական դպրոցներից կան
եւլի մեծ քանակությամբ մասնագիտական և արհեստագի-
տական կրթական հիմնարկներ, վորոնց թվին պատկանում
են գործարանային դպրոցները: Ձեռնարկատերերին ան-
հրաժեշտ ե ունենալ լավ պատրաստված, իրանց գործը
կատարելապես գիտցող վորակյալ բանվորների վորոշ թիվ,
այդ պատճառով նրանք սիրով բաց են անում մասնագի-
տական դպրոցներ այս կամ այն արտադրության համար:

Անգլիայում կան լավ համալսարաններ:

Հարուստ և արտոնյալ խավի յերիտասարդության հա-
մար կա յերկու հին, արհեստակրատական համալսարան՝

Ոքսֆորդի և Կեմբրիջի: Սրանք հայտնի յեն ամբողջ Յեվ-
րոպայում: Կեմբրիջի համալսարանը տեղավորված ե մի
բանի հին, միջնադարյան դղյակներում, շրջապատված դա-
րավոր պարտեզով, վորը իջնում ե դեպի գետը: Համա-
լսարանն ունի—սեփական յեկեղեցի, մի քանի գեղեցիկ
մատուռներ, շինված գոթական վոճով, հին նկարներ
սրահներ, հանդիսասրահներ, ամենահարուստ գրադարան-
ներ, հսկայական սեղանատներ ուսանողների համար, ըն-
դարձակ հանրակացարաններ, սպորտի և մարմնամարզական
հրապարակներ, բիլիարդներ և այգիներ: Ուսանողներն ու
պրոֆեսսորները դեռ հագնում են միջնադարյան հագուստ-
ներ և ամեն բանում պահպանում են հին սովորություն-
ները: Ճեմելիքներում և դանիճներում—այն ել XX դա-
րում—շարժվում են մատաղ դեմքեր՝ քղամիտներ (ֆա-
րաշա) հագած, քստանկյունի ծոպավոր գլխարկներով:
Անգլիական հայտնի տոհմից սերված յուրաքանչյուր ուսա-
նողի հատկացված ե յերկու-յերեք սենյակ համալսարանի
պալատներում: Հին կանոնները այնքան խիստ են պահ-
պանվում, վոր վորոշ սանդուխտներով իրավունք ունեն
անցնել միայն գիտական աստիճանի արժանացած մարդիկ:
Ճիշտ այդպես ել տարբեր աստիճանի գիտնականներին
հատկացված ե տարբեր հագուստ: Կեմբրիջի և Ոքսֆորդի
համալսարանները պերճախոս ապացույցներ են այն բանի,
համալսարանները բուրժուական հասարակությունը նվիր-
ված ե հնությանը, վորը անարժեք ե ու անպետք: Բացի
ված ե հնությանը, վորը անարժեք ե ու անպետք: Բացի
դպրոցներից և համալսարաններից, բոլոր կուլտուրական
յերկրներում ժողովրդական լուսավորության գործին ծա-
ուայում են զրադարանները, թանգարանները, պատկերա-
սրահները և այլ գիտական հաստատություններ: Ջոն Կար-
լովիչը շատ հետաքրքիր ձևով պատմեց, թե ինչ տեսով
նա Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Անգլիացիք
իրենց ամենահարուստ թանգարանն են բերել աշխարհի
զանազան ծայրերից հազվագյուտ գանձեր: Այստեղ տեսել

ե նա Հին Հունաստանի հիանալի արձաններ, Յեգիպտոսի փառահեղ հուշարձաններ, չինական ֆիգուրներ՝ փղոսկրից քանդակված և բարակ ու նուրբ, ինչպես հաշիան: Վորոշ սենյակներում դրված եյին տնային սարք ու կարգի առարկաներ և կախված եյին յերկրի յերեսից անհետացած ժողովուրդների զենքեր, մյուսներում գնավում եյին հնդկական աստվածների կուռքեր, մի նեգրիտական ցեղի դոհարանը մարդկային գանգերով, աֆրիկական յերաժշտական գործիքներ: Մի խոսքով, թանգարանում հավաքված եյին անթիվ ու անհամար թանգարժեք առարկաներ զանազան տեսակի: Թանգարանին կից գտնվում է աշխարհիս ամենահին և ամենամեծ գրադարաններից մեկը, ուր գալիս են պարապելու զանազան յերկրների գիտնականները:

Անգլիան ունի ընդամենը 47 միլիոն ազգաբնակչություն, սակայն կղզու վրա գտնված այս պետություն իշխանությունը տարածվում է նրա սահմաններից շատ հեռու — 400 միլիոն հպատակների վրա: Ասիայում, Աֆրիկայում և Ամերիկայում ընդարձակ յերկրներ յենթարկվում են նրան:

Յեգիպտական Անգլիան այլ աշխարհամասերում նրան հպատակվող յերկրների հետ միասին կազմում է Բրիտանական կայսրությունը — մեկը աշխարհի ամենամեծ և ամենարնգարձակ կայսրություններից:

Յերբ Զոն Կարլովիչը 1924 թ. Անգլիայում եր, հենց այն ժամանակ այնտեղ Բրիտանական կայսրության մեջ պատրաստված ապրանքների ցուցահանդես կար:

Ամեն ուր այստեղ եյին գալիս դպրոցականների անհամար եքսկուրսիաներ. ազմուկով հրմշտվում և վազվզում եյին աղաները կտր գլխարկներով և աղջիկները, իրար ձեռք բռնած: Նրանք դիտում եյին այստեղ Նոր Զելանդիայից բերված խնձորները, որիցե (բրնձի) ավելները՝ Ավստրալիայից, յուղը՝ Կանադայից: Այդ յուղից շինված եյին փոքրիկ արձան և լիճնաշղթաներ:

Սակայն ամենից հետաքրքիր եր ինժեներական արվեստի պալատը: Այստեղ կարելի յեր տեսնել ժամանակակից տեխնիկայի բոլոր հրաշալիքները. մեքենաներ պղպեղի պես կարմիր, գորշ, սև և գերեզմանի պես մուգլ: հղկված և բրնձի պես փայլուն, ազդու և կատարելագործված ձևի:

— Կարգացել եմ մի զրքում, ասաց Զոն Կարլովիչը. «Յեվ այս բոլորը շարժվում են, ճռնչում, շաշում իրանց միտցներով, թափահարում իրանց պողպատե չանչերը և փայլում պղնձե մասերով: Մեքենաները հիանալի յեն և կատարյալ, սակայն կյանքը, վորին նրանք ծառայում են, հիանալի չե, վոչ ել կատարյալ: Բրիտանական կայսերական ցուցահանդեսը մեծ է և լեցուն: Այստեղ կա ամեն ինչ, չկա միայն 400 միլիոնանոց ազգաբնակչության վոգին»:

Վոչ մի կերպ չեն ներկայացված Անգլիայի գաղութային բազմամիլիոն հպատակները — հնդիկները, բուրերը, ասիական և ավստրալիական կղզիների բնակիչները, աֆրիկական նեգրերը և յեգիպտացիք: Նրանց կենցաղի, կարիքների և տառապանքների, նրանց շահագործման մասին լուում է աշխարհի ամենահարուստ այս ցուցահանդեսը:

Զոն Կարլովիչը ավելի տաքացավ: Նա պատմեց մանուկներին, վոր անգլիացիք գեղեցիկ իրերը միայն ապակուտակ են սիրում — թանգարաններում և սրահներում: Այդ իրերը յերբեմն կարելի յեր տեսնել նաև հարուստների պալատներում: Սակայն միջակ անգլիացիների բնակարաններում, փողոցում կամ այգում դուք հազիվ կպատահեք գեղեցիկ արձանի, շենքի, կամ հազիվ կլսեք ժողովրդական հուետորի փայլուն, գրավիչ ճառը:

— Իսկ ինչպես եյին դպրոցում մեզ ասում, վոր անգլիացիք շատ զարգացած ժողովուրդ են — հարցրեց Կոստյան:

— Ո՛հ, այո: Նրանք շատ զարգացած և կուլտուրական են: Նրանք չափազանց շատ բան են արել գիտություն, արվեստի և զրականություն բնագավառում: Յեթե ուզում եք

խնքներդ համոզվիլ, թե արդյոք լաւ են գրում անգլիացիները, կարդացե՛ք հռչակաւոր հեղինակ Դիկկենսի «Ուլիվեր Տվիստ» վեպը կամ «Դավիդ Կոպպերֆիլդ»-ը: Դիկկենսը շատ առաջ եր ապրում, և թեև նրա վեպերը մեր ժամանակի համար հնացած են, այնուամենայնիւ դեռ շատ հետաքրքիր են: Ժամանակակից հեղինակներից յերեւոյնների մտտչելի յեն Ուելսի մի քանի վեպերը, ինչպես որինակ՝ «Յերբ քնածը կգարթին», «Ժամանակի մեքենա» և այլն: Վաղուց չե, վոր ամբողջ Յեվրոպան մեծ ուշադրությամբ կարդում եր նրա ֆանտաստիկական սոցիալական (հասարակական) վեպերը:

Մի քանի խոսք ել պատանեկական շարժման մասին։ Բուրժուական մանկական և պատանեկական շարժման ձե-
վերից մեկն է Բոյ-սկաուտիզմը, վոր հանդես յեկավ և
զարգացավ XX դարի սկզբներին, բնորոշ զծեր ընդունե-
լով Անգլիայում։ Նրա հիմնադիրը համարվում է գեներալ
Բադեն-Պաուելլը, Բոյ-սկաուտ — նշանակում է տղա-հե-
տախտեյգ։ Բոյ-սկաուտիզմի գլխավոր խնդիրն է ստեղծել
համարյա զինվորական դիսցիպլինայով կապված պատանե-
կական խմբեր (պատանի հետախույզներ), ոգտագործելով
գեռահասների սերը դեպի շարժումը, ճանապարհորդո-
թյունը, արեկածները, արշավանքը և այլն, Միևնույն ժա-
մանակ Բոյ-սկաուտիզմը ունի նաև վորոշ քաղաքական
նպատակ՝ ոժանդակել գոյություն ունեցող բուրժուական
կարգերի ամրացմանը։ Այս նպատակին հասնելու համար
նա ձգտում է Բոյ-սկաուտիզմի առանձին «որենքների»
ոգնությամբ լցնել «պատանի հետախույզներ» գլուխները
միապետական և սեփականատիրական գաղափարներով,
ինչպիսիք են՝ հավատ դեպի աստված, հավատարմություն
թագավորին, «տիրոջ» շահերի պաշտպանություն և այլ
«առաքինություններ», վորոնք հատուկ են կապիտալիս-
տական կարգերին։ Ոգտագործելով մանկական և պատա-
նեկական մղումներն ու ակտիվությունը, Բոյ-սկաուտիզմը

պահանջում ե «պատանի հետախույզից» ժրություն և ճարպիկություն, գործնեյություն, արհամարհանք դեպի բացողյա և թափառական կյանքի անհարմարությունները և ամեն տեսակի նեղ պայմաններից դուրս գալու հմտություն: Բոյ-սկառուտները շատ են խաղում, այդ խաղերը ևս պետք է նպաստեն դիտելու, «հետախուզելու» և շրջապատի պայմաններին հարմարվելու ընդունակության զարգացմանը: Բոյ-սկառուտիցմը Անգլիայում հանդիսանում է զինվորական ծառայության կամավոր և յուրահատուկ նախապատրաստություն: Այդ պատճառով ել նրա կազմակերպմանը մասնակցում են զխավորապես զինվորականները: Նման կազմակերպություններ կան նաև Յեվրոպայի մյուս յերկրներում, թեև վոչ այդչափ ցայտուն կերպով արտահայտվող զինվորական բնույթով: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ սկառուտները ոգտագործվում եյին գործող բանակների թիկունքում վորպես կապ պահողներ և վիրավորներ հավաքողներ: Ռուսաստանում բոյ-սկառուտիցմը սկսում է զարգանալ ու տարածվել 1910 թվականներին: Նա անգլիական բոյ-սկառուտիցմից վերցնում է արտաքին կողմը (հագուստ, նշաններ և այլն) և ներքին բովանդակությունը, ուժեղացնելով լոկ նրա միապետական բնույթը: Ռուսական բոյ-սկառուտիցմի նպատակն եր պատրաստել դեռահասներից «արժանավոր քաղաքացիներ, թագավորի և հայրենիքի անվեհեր պաշտպաններ»: Բացի անդալվորի և հայրենիքի անվեհեր պաշտպանների համապալիական սկառուտների կարգերին միանգամայն համապատասխանող «որենքներից», սահմանվում եյին նաև «պատվիրաններ», վորոնց թվում կային այսպիսիները. «աստծուն սրտումդ ունեցիր», «նմանվիր հետախույզների ծուն սրտումդ ունեցիր», «նմանվիր հետախույզների ծուն սրտումդ ունեցիր» և այլն: Չնայած պաշտպան բազմահողթ սուրբ Գեորգին» և այլն: Չնայած իր բուրժուական միապետական բովանդակությանը, բոյ-սկառուտիցմն ունի և դրական կողմեր: Այդ դժերը հետևյալներն են. — մանկական և պատանեկական ակտիվության ճիշտ ոգտագործում, ոժանդակություն համարձակ

ու կոփված, զանազան անհարմարությունների ընտելացած պատանու զաստիարակություն, «պատանի հետախույզների մեջ» դիտողական ունակությունների զարգացում: Աշխատանքն արհեստանոցներում, արհեստներ սովորելը, վորոնք նույնպես մտնում են սկստի զաստիարակության խնդիրների մեջ, պետք է ապահովեն աշխատանքային ունակություններ ձեռք բերելը: Հասկանալի յե, ուրեմն, վոր կոմունիստական մանկական շարժումը բոլորովին այլ հիմքերի վրա յե կազմակերպված և իր շարժման իդեոլոգիական (գաղափարական) կողմը բոլորովին այլ բնույթ ունի:

Յերբ Զոն կարլովիչը գնաց, յերեխաների մեջ միտք հղացավ իրանց համար պատրաստել Անգլիային վերաբերյալ ալբոմ: Նրանք Կոստյայի հորից վերցրին հաստ մոխրագույն թղթի մի կտոր և նրանից շինեցին ալբոմի շապիկը: Յերեսին նկարեցին Լոնդոնի տեսքը, իսկ մեջը դրեցին. — 1) Անգլիայի քարտեզը (առայժմ նրա յեվրոպական մասի, առանց նրա հպատակ յերկրների), 2) Լոնդոնի նկարագիրը, գրված հիշողությամբ, բոլոր լսած պատմությունների հիման վրա: Կոստյայի հայրը նայեց նրանց պատրաստած ալբոմն ու ասաց.

— Առայժմ դուք արտանկարում եք պատրաստի պատկերներ և քարտեզներ և կրկնում լսած պատմություններ: Հապա փորձեցեք ինքնուրույն կերպով աշխատել. այլ գրեցեք մի փոքրիկ հոդված «Ժողովրդական լուսավորությունն Անգլիայում և Խորհրդային Միության մեջ» և համեմատեցեք ժողովրդական լուսավորության վիճակը մեզանում և Անգլիայում:

Մյուս որը յերկու բարեկամները կատարեցին իրանց տրված առաջադրանքը:

Իսկ դուք, ընթերցողներ, կարո՞ղ եք կատարել նույնը:

ՄՈՍԿՎԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ԾԱՆՈթԱՆՈՒՄ ԵՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ

Մանկական հրապարակում, ուր վաղեցին մեր մանուկները ջրելու տունկերը, հանդիպեցին իրանց դպրոցական ընկերուհուն՝ Միմային: Նրանք սկսեցին խոսել անգլիացի յերեխաների և Սոկոլնիկի անտառային դպրոցը գնալու մասին:

— Իսկ դուք լսեցի՞ք, — հարցրեց Միման, — թե ինչպես մի անգլիացի մանուկ մեզ հարց տվեց. «Անտառային դպրոցում կարո՞ղ են արդյոք սովորել գործադուրկների երեխաները»: Մեր կողմարը պատմեց, վոր ամեն տեղ, բացի Խորհրդային Միությունից, չքավոր կամ գործադուրկ ծնողների յերեխաները շատ ավելի վատ կրթություն են ստանում, քան ունևոր մարդկանց տղաներն ու աղջիկները:

— Մենք այդ բանն արդեն գիտենք: Մենք այդ մասին նույնիսկ շարադրություն գրեցինք, — ասաց Կոլյան:

Յեվ վոչ միայն վատ կրթություն է բաժին ընկնում նրանց, — խոսքի մեջ խառնվեց Ալեքսանդրա Պավլովնան, — այլև այդ յերեխաներն ստիպված են ծանր ֆիզիկական աշխատանքով ձեռք բերել իրանց հացը:

Յեվ ուսուցչուհին պատմեց յերեխաներին հետեյալը.

— Անգլիական որենքներով չի կարելի յերեխաներին շատ ծանր աշխատանքի դնել և շատ յերկար աշխատեցնել: Այդ նշանակում է, վոր որենքը պաշտպանում է մանկական աշխատանքը: Սակայն այդ բոլոր կանոնները այստեղ խախտվում են, ինչպես և Յեվրոպայի բոլոր բուրժուական պետություններում: Մի քառորդ միլիոն յերեխաներ սուրհանդակների, ցրիչի, լրագրավաճառի, հեռախոսային մանուկների և այլն պաշտոն են կատարում: «Բոյը» (անգլերեն նշանակում է տղա) բարձրացնում է լիֆտը մեծ տներում և հիմնարկներում, տանում է խանութից հարուստների գնած առարկաները և կատարում է «աղայի»

իր բազմատեսակ հանձնարարությունները (տես նկար 4)։ Մանկահասակներն աշխատում են նույնիսկ շախտաներում։



Նկ. 4. Ապրանքներ ցրող մանուկ։

գետնի տակ։ Միայն 1925 թ. մինչև 60 հազար փոքրահասակ բանվորներ կային։ Քանի վոր աշխատանքը շատ վտանգավոր է, ապա տարեկան 10 հազարի չափ փոքրահասակներ վիրավորվում և հաշմանդամ են դառնում։

Փոքրահասակ բանվորներին դրությունը սերտ կապված է անգլիական պրոլետարիատի ընդհանուր դրության հետ։

— Ալեքսանդրա Պավլովնա ուսուցչուհուն ընդհատեց կոստյան. — ասում են, վոր բուրժուական Անգլիան հոգում է իր բանվորների մասին։

— Վհչ, դա ճիշտ չէ, պատասխանեց Ալեքսանդրա Պավլովնան։ Դուք արդեն գիտեք, վոր Յեվրոպական Անգլիայի ազգաբնակչությունը կազմում է ամբողջ կայսրության ազգաբնակչության մի տասներորդ մասը միայն։ Յեվ անապա ժամանակ, յերբ Լոնդոնում և ուրիշ խոշոր արդյունաբերական քաղաքներում

բանվորներն ստանում էին բավական բարձր աշխատավարձ, հեռու, գունավոր ժողովուրդները — ինդուստրիալ, մալայա-ցիդ, նեգրերը — ապրում էին միշտ չափազանց ծանր պայ-

մաններում։ Անգլիական կապիտալիստները մաս էին հանում իրանց հսկայական ոգուտներից կայսրության յեվրոպական մասում վորակյալ բանվորներին բավարար վարձատրելու համար և բանվորական միությունների ղեկավարներին կաշառելու համար, և առանց քաշվելու կեղեքում էին մյուսներին։ Այս ճանապարհով նրանք ապահովում էին խաղաղությունը պետության ներսում և չէին վախենում ապստամբություններից և հուզումներից։ Յեվ իրոք, յերկար ժամանակ Անգլիայում չկային բանվորական հուզումներ։ Յեվրոպայում շատ փոթորիկներ և ապստամբություններ տեսած և Անգլիա յեկած ոտարյերկրացի հեղափոխականները ցավով ասում էին, վոր Լոնդոնում չկա մի փողոց, վորի ցանկապատերի վրա վառողով գրված լինեք վորևե նշանաբան ազատության մասին։ Չկան հրապարակներ և նրբանցքներ, վորոնք պահած լինեյին հիշողություններ ժողովրդական հերոսական կռիվների, վորևե կրակոտ հեղափոխականի կոստյան մասին։

Սակայն պատերազմից հետո աշխատավորության դրությունը փոխվելով, դեպի վատը գնաց։ Յերկրի արդյունաբերությունը մեծ ցնցումներ եր կրում։ Գործարանատերերը, տեսնելով, վոր իրանց ոգուտները պակասում են, սկսեցին քիչ վարձատրել բանվորներին, կրճատում և նույնիսկ զաղարեցնում էին աշխատանքները։ Միևնույն ժամանակ բոլոր անհրաժեշտ ապրանքների գները սկսեցին արագ աճել։ Բազմահազար մարդիկ կորցրին իրանց վաստակը։ Բնակարանների վարձը թանգացավ։ Սննդամթերքները, բրդե և բամբակե գործվածքները, փայտն ու ածուխը, — ամեն ինչ սաստիկ թանկանում եր։ Որավոր ապրուստը դժվարանում եր։ Սաստիկ վատացավ հատկապես ածխահատների դրությունը։ Շախտաների տները 1920—25 թ.թ. մեծ վնասներ կրեցին։ Նրանք վորոշեցին իրանց գործերն ուղղել նրանով, վոր 1926 թվին իջեցրին իրանց բանվորների աշխատավարձը ¹/₁₀-ի չափով և դրա

հետ միասին նրանց բանվորական ուրը մեկ ժամով յերկարացրին: Հանքափորները գործադուլ արին: Նրանց ոգնում էյին արդյունաբերության այլ ճյուղերի բանվորները, վորոնք նույնպես սաստիկ անբավական էյին իրանց տերերից: Բռնկվեց 1926 թվականի ընդհանուր գործադուլը, վորի նմանը Անգլիան յերբեք չեր տեսել: Հինգ միլիոն մարդ դադարեցրեց աշխատանքը: Յերկրում զինվորական դրություն հայտարարվեց: Վոստիկանությունը, զորքը, նավատորմը, ոդանավերը, հեղձուցիչ գազերի ջուկատները, սև-հարյուրակային խմբերը, — բոլորը համախմբված էյին բանվորների դեմ կռվելու համար: Լոնդոնի փողոցներն ամայացան: Հսկայական քաղաքի բնակիչները, վորոնք զաղափար չունեյին քաղաքացիական կռիվների մասին, այժմ կարող էյին տեսնել ռազմական տեսարաններ: սալահատակների վրա կանգնած էյին զրահապատ ավտոմոբիլներ, հազվադեպ ավտոբուսները գնում էյին զինված վոստիկանների ուղեկցությամբ:

Տասներկու ուր տեեց ընդհանուր գործադուլը, ապա վերջացավ այսպես կոչված բանվորական կուսակցության առաջնորդների դավաճանության հետևանքով: Սակայն անձնատուր յեղան վոչ բոլոր բանվորները: Առաջին ուժեղ և ընդհանուր գործադուլից հետո 8 ամիս շարունակվեց անգլիական հանքափորների գործադուլը: Նրան շանակությունը մեծ է: Հանքափորների միության գլուխ կանգնած էյին ձախ բանվորական առաջնորդներ: Հանքափորների արհմիության բոլոր անդամները պողպատե դիսցիպլինա էյին պահում և, չնայելով բոլոր զրկանքներին, չնայած անգլիական կառավարության՝ հանքատերերին հասցրած ոգնությանը, արիաբար մղում էյին պայքարը ավելի քան կես տարի:

Հիշում եք, յերեսաներ, «Բարաբան» թերթի հոդվածը՝ «Անգլիական ածխահատների կռիվը» վերնագրով, վորը ձեզ հետ կարդացինք դասադանում: «Անգլիան» սև վոսկու

յերկիր ե», ասված է այնտեղ: — Ամբողջ յերկրում տարածված են յերեք հազարից ավելի հանքահորեր, վորոնց մեջ խլուրդների պես վխտում են միլիոնից ավելի բանվորներ, վորոնք քանդում են քարածուխը, ամբողջ ուրերով առանց արևի լույս տեսնելու: Գետնի տակ կան ամբողջ քաղաքներ՝ իրանց փողոցներով և նրբանցքներով: Այստեղ ամեն բան սարսափ է շնչում: Ամեն քայլափոխում հանքափորին սպառնում է մահ կամ հաշմանդամություն: Փլվածքները, վորոնք վողջ-վողջ թաղում են հարյուրավոր բանվորների, ածխահատների մշտական պատուհասն են հանդիսանում: Դյուրավառ գազի պայթյունները գետնի տակ թողնում են բազմաթիվ դիակներ, իսկ վերևում՝ հարյուրավոր վորեր և այրիներ:

Զուր չե, վոր ածխահատները յերգում են.

Ժայռերի կրծքին, մոայլ ծերպերում,
Ուր մեզ փլվածքն է միշտ սպառնում,
Մութ անձամբերում, խորը շախտերում,
Շիրիմի նման սառն անցքերում,
Թունոտ, մահացու գազեր ենք շնչում,
Հավետ մթության, մոայլի գրկում, —
Կենդանի թաղված գանձեր ենք հանում,
Թե ինչ է աղան ցոփ կյանք և ուղում:

Ծանր և վտանգավոր է հանքափորի աշխատանքը: Իսկ լսե՛լ եք դուք տասնյակ հազարավոր այսպես կոչված «սահնակավոր» յերեսանների մասին, 10—12 տարեկան, վորոնք իրանց թույլ ձեռքերով հրում են ածուխով բարձած վազոնետիկաները: Ծնողների վաստակը չի բավակա-նացնում, և յերեսանի վորը հասակից հարկադրված են իջնել այդ մութ անդունդը, ապրել և աճել առանց արևի և ոդի, իրենց մանկական ձեռքերով պտրտել վոսկի՝ մի խումբ հանքատերերի համար: Այս շահագործողները, վորոնք դիզում են անհամար հարստություն, չեն ապրում գետնի տակ և չեն կորչում փլվածքների տակ: Նրանց յերեսանները ածուխով բարձած վազոնետիկաներ չեն քա-

շում: Այն ժամանակ, յերբ անգլիական հանձնաժողովը, շաբաթական 12—20 ո. յե աշխատում, հանձնատերերը պատերազմի մեկ տարում «աշխատեցին» $1\frac{1}{2}$ միլիարդ ուրբ.: Սակայն նրանք այս դեռ քիչ են համարում: Նրանց հարկավոր են միլիարդներ, իսկ բանվորներին տալիս են կոպեկներ: Անգլիական հանձնաժողովը կիսաքաղց վիճակումն է գտնվում: Ահա թե ինչո՞ւ ածխահատները գործադուլ արին, ահա թե ինչո՞ւ անգլիական բոլոր պրոլետարները վրդովվեցին և դայրույթով լցվեցին: Ութամսյա գործադուլից հետո քաղցից ընկճված ածխահատները դադարեցրին ստաշկան, կարողանալով հսկայական ֆլաս հասցնել Անգլիայի կապիտալիստական տնտեսությանը:

Ածխային գործադուլի հետևանքները համեմատում են մեծ յերկրաշարժի հետևանքների հետ. այսպես մեծ են տնտեսական ավերածություններն ու քայքայումը: Ածուխի արդյունաբերությունը անգլիական արդյունաբերության մեջ համարյա թե առաջին տեղն է բռնում: Մինչև գործադուլը մեկ ամսում ստացվում էր 22,000,000 տոննա քարածուխ: Հետո, գործադուլի առաջին չորս ամսում ածուխ բոլորովին չէր ստացվում, մինչև վոր հինգերորդ ամսում շտրեյկերելներին* կազմակերպված ուժերով վերսկսվեց նրա ստացումը, սակայն յերկու միլիոն տոննա ամսական, այսինքն նորմայից 11 անգամ պակաս: Ածխարդյունաբերության անկումը այն դրությանը հասցրեց, վոր վառելիքի պակասության պատճառով ստիպված էյին կանգ առնել պողպատի և չուգունի գործարանները: Վորպեսզի հնարավորություն տրվի աշխատելու մյուս գործարաններին — տեքստիլ, թղթի և այլն — Անգլիան ստիպված էր ուրիշ յերկրներից քարածուխ ներմուծել, մինչդեռ մինչև գործադուլը ինքն էր արտահանում իր քարածուխը Յեվրոպա: Քանի վոր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը կապված են իրար հետ, քարածուխի արդյունաբե-

* Շտրեյկերելներ — դավաճան, գործադուլի ժամանակ աշխատող:

րության դադարումը առաջ բերեց քայքայում արդյունաբերության նաև մյուս ճյուղերում, — սննդամթերքների թանկացում, պետության դրամական յեկամուտների ընդհանուր քայքայում, նրա վոսկու պաշարի քչացում: Մի խոսքով հանձնաժողով բանվորների բազմամսյա գործադուլը Անգլիայի ժողովրդական տնտեսությունը յետ տարավ մի քանի տարով:

1926 թվի ընդհանուր գործադուլը և ածխահատների 8-ամսյա հերոսական պայքարը նոր շրջան բաց արին անգլիական բանվորական շարժման մեջ: 1929 թվից ամբողջ կապիտալիստական աշխարհը ընդգրկած և որեցոր ծավալվող ու խորացող տնտեսական ճգնաժամը, անչափ սրելով կապիտալիստական յերկրների միջև, առաջին հերթին Ամերիկայի ու Անգլիայի միջև յեղած հակասություններն ու մրցումը, ահագին հարվածներ հասցրեց ու հասցնում է կապիտալիստական Անգլիայի տնտեսությանը և խոշոր չափերով նպաստում է բանվոր դասակարգի հեղափոխականացմանը: Լրիվ գործազուրկների թիվը Անգլիայում հասնում է արդեն $2\frac{1}{2}$ միլիոնի, աճելով շարթե-շաբաթ տասնյակ հազարներով, չհաշված կիսագործազուրկներին: Տընտեսական ճգնաժամը, կապիտալիստական անողորմ ռացիոնալացումը ի հաշիվ բանվորների, գործազուրկների որեցոր աճող բանակը, կապիտալիստների արշավը բանվորների աշխատավարձի վրա — այդ բոլորը առաջացնում են ուժեղ բանվորական հեղափոխական շարժում: Բանվորները այլևս չեն վստահանում իրենց դավաճան «առաջնորդներին» — ռեֆորմիստական պրոֆբյուրոկրատներին ու իբրբ-բանվորական կուսակցությանը, վորը կառավարության գլուխ անցնելով շատ շուտ մերկացրեց իր սոցիալ-ֆաշիստական եյությունը: Կոմունիստական կուսակցության և հեղափոխական պրոֆմիլիտյունների ազդեցության տակ անգլիական բանվորները աստիճանաբար յերես են դարձնում իր սնանկությունը յերևան բերած բանվորական կուսակցու-

շում: Այն ժամանակ, յերբ անգլիական հանձնաժողովը, շաբաթական 12—20 ա. յե աշխատում, հանձնառուները պատերազմի մեկ տարում «աշխատեցին» 1¹/₂ միլիարդ ուրբ.: Սակայն նրանք այս դեռ քիչ են համարում: Նրանց հարկավոր են միլիարդներ, իսկ բանվորներին տալիս են կուպեկներ: Անգլիական հանձնաժողովը կիսաքաղց վիճակում է գտնվում: Ահա թե ինչո՞ւ ածխահատները գործադուլ արին, ահա թե ինչո՞ւ անգլիական բոլոր պրոլետարները վրդովվեցին և զայրույթով լցվեցին: Ութամսյա գործադուլից հետո քաղցից ընկճված ածխահատները դադարեցրին ստաշկան, կարողանալով հսկայական մեծ հասցնել Անգլիայի կապիտալիստական տնտեսությանը:

Ածխային գործադուլի հետևանքները համեմատում են մեծ յերկրաշարժի հետևանքների հետ. այսպես մեծ են տնտեսական ավերածություններն ու քայքայումը: Ածուխի արդյունաբերությունը անգլիական արդյունաբերության մեջ համարյա թե առաջին տեղն է բռնում: Մինչև գործադուլը մեկ ամսում ստացվում էր 22.000.000 տոննա քարածուխ: Հետո, գործադուլի առաջին չորս ամսում ածուխ բոլորովին չե՞ր ստացվում, մինչև վոր հինգերորդ ամսում շտրեյկբրեյկներին* կազմակերպված ուժերով վերսկսվեց նրա ստացումը, սակայն յերկու միլիոն տոննա ամսական, այսինքն նորմայից 11 անգամ պակաս: Ածխարդյունաբերության անկումը այն դրությանը հասցրեց, վոր վառելիքի պակասության պատճառով ստիպված էլին կանգ առնել պողպատի և չուգունի գործարանները: Վորպեսզի հնարավորություն տրվի աշխատելու մյուս գործարաններին — տեքստիլ, թղթի և այլն — Անգլիան ստիպված էր ուրիշ յերկրներից քարածուխ ներմուծել, մինչդեռ մինչև գործադուլը ինքն եր արտահանում իր քարածուխը Յեվրոպա:

Քանի վոր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը կապված են իրար հետ, քարածուխի արդյունաբե-

* Շտրեյկբրեյկեր — դավաճան, գործադուլի ժամանակ աշխատող:

րության դադարումը առաջ բերեց քայքայում արդյունաբերության նաև մյուս ճյուղերում, — սննդամթերքների թանկացում, պետություն դրամական յեկամությունների ընդհանուր քայքայում, նրա վոսկու պաշարի քչացում: Մի խոսքով հանձնաժողովը բանվորների բազմամսյա գործադուլը Անգլիայի ժողովրդական տնտեսությունը յետ տարավ մի քանի տարով:

1926 թվի ընդհանուր գործադուլը և ածխահատների ծամսյա հերոսական պայքարը նոր շրջան բաց արին անգլիական բանվորական շարժման մեջ: 1929 թվից ամբողջ կապիտալիստական աշխարհը ընդգրկած և որեցոր ծավալվող ու խորացող տնտեսական ճգնաժամը, անչափ սրելով կապիտալիստական յերկրների միջև, առաջին հերթին Ամերիկայի ու Անգլիայի միջև յեղած հակասություններն ու մրցումը, ահագին հարվածներ հասցրեց ու հասցնում է կապիտալիստական Անգլիայի տնտեսությանը և խոշոր չափերով նպաստում է բանվոր դասակարգի հեղափոխականացմանը: Լրիվ գործազուրկների թիվը Անգլիայում հասնում է արդեն 2¹/₂ միլիոնի, աճելով շաբթե-շաբթ տասնյակ հազարներով, չհաշված կիսագործազուրկներին: Տնտեսական ճգնաժամը, կապիտալիստական անողոր ռաջիոնալացումը ի հաշիվ բանվորների, գործազուրկների որեցոր աճող բանակը, կապիտալիստների արշավը բանվորների աշխատավարձի վրա — այդ բոլորը առաջացնում են ուժեղ բանվորական հեղափոխական շարժում: Բանվորները այլևս չեն վստահանում իրենց դավաճան ճառաջնորդներին — ռեֆորմիստական պրոֆբյուրոկրատներին ու իբր-բանվորական կուսակցությանը, վորը կառավարության գլուխ անցնելով շատ շուտ մերկացրեց իր սոցիալ-ֆաշիստական ելությունը: Կոմունիստական կուսակցության և հեղափոխական պրոֆմիությունների ազդեցության տակ անգլիական բանվորները աստիճանաբար յերես են դարձնում իր սնանկությունը յերևան բերած բանվորական կուսակցու-

թյունից և պրոֆմիութենական կաշառված լիզերներից ավելի և ավելի վճռականորեն անցնում են կոմկուսակցության շարքերը, ուժեղացնելով կռիվը բանվոր դասակարգին շահագործողների դեմ:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ

Յեթե աշխատանք ունեցող բանվորների դրությունն այնքան ծանր է, վոր նրանք ստիպված են գործադուլներ սարքել. ապա այն պրոլետարների դրությունը, վորոնք աշխատում են վոչ լրիվ ուր, և կամ բոլորովին կորցրել են աշխատանքը, — ավելի ևս վատ է: Վորոշ ժամանակ նրանք արհմիություններից նպաստ են ստանում, իսկ յեթե գործադրկությունը յերկար է շարունակվում, նրանց կյանքն ավելի դառնանում է:

— Նայեցեք այս նկարին, — ասաց Սլեքսանդրա Պավլովնան: — Դուք տեսնում եք, թե ինչպես են ապրում մարդիկ հարուստ Անգլիայում: Սակայն նկարները շատ քիչ բան են ասում: Անգլիայի, Սմերիկայի, Ֆրանսիայի շատ հայտնի գրողների գրքերում դուք կկարդաք անգլիացի չքավորների անտանելի ծանր կյանքի նկարագիրը:

Գրեխեմ հեղինակը գիշերը գնացել էր Լոնդոնում թափառելու: Նա պարլամենտի պայծառ լուսավորված շենքից մի քիչ հեռու կանգ առավ: Սյնտեղ նիստ կար: Կապիտալիստների ուղարկած ժողովրդական ներկայացուցիչները մինչև լույս վիճում էին որենքների մասին, վորոնք ոգուտ պետք է բերեն յերկրին, և կարծում էին, վոր հարկավոր է մեծ գործ են անում: «Սակայն Համայնքների նպատակում* վեճերը լուսավորող կրակները, — գրում է Գրեխեմը, — մութն են թվում նրանց համար, վորոնք գիշերներով նստում են գետափնյա փողոցի նստաբանների վրա... Պարլամենտը ինձ թվում է վոչ վորպես

* Համայնքների պալատը — անգլիական պարլամենտի ստորին պալատն է:

գեմոկրատիայի պալատ, այլ հսկայական և մռայլ Բաստիլա*։ Թվում էր, թե նա ամբողջապես բաղկացած է վանդակներից, նիզերից, յերկաթե ձողերից և տանջարաններից, և վոչ թե ազատության ապաստարան է հանդիսանում, այլ մի բերդ, ուր վորպես գերի գտնվում են մեր բոլոր ազատությունները: Յերկու-յերկու, յերեք-յերեք, չորս-չորս սառն նստարանների վրա առավոտյան ժամը 2-ին նստած են թշվառները՝ քնաթաթախ հայացքները հառած ջրի մեջ արտացոլվող կրակներին և գետի այն կողմը գտնվող պարլամենտի շենքին: Այս մարդիկ անց են կացնում գիշերային ժամերն այստեղ, «հառաչելով և սպասելով լուսաբացին»: Նայեցեք նրանց ուշադրությամբ, նրանցից մի քանիսը քնած են: Մեկի գլուխը մեռած մարդու գլխի պես յետ է ընկած: Մեծամասնությունն էլ քնած է կզակը կրծքին հենած. վոմանք էլ խելք են արել պառկել նստարանի նստելատեղի մեջտեղով անցնող ձողի և թիկունքի արանքում գտնված տարածության մեջ: Սակայն գիշերապահը (պոլիսմեն) իր պտույտը կատարելիս բոթում է քնածներին, հրամայելով նրանց վեր կենալ և վոտքերը կախել:

Սյնտեղ միշտ ցուրտ է: Խոնավ և ցուրտ քամին գետից փչելով մտնում է նրանց ցնցոտիների տակ և անցնում մինչև վոսկրների ծուծը: Գիշերվա գեղեցկությունը չի զրավում անտունին:

— Յեթե գիտենայի, վոր այսպես ցուրտ կլինի, մի դյուժին լուցկի կվերցնեյի, — ասում է մեկը:

— Մի դյուժին ևս ավելի ծախելով գուցե այսպիսի մի գիշեր փողոցում չմնայի:

Սակայն նրա հարևանն անտարբեր է: Նա լուցկի չի վաճառում: Հարուստ անգլիացիք, փողոցում հանդիպելով

* Բաստիլան Ֆրանսիական անվանի բանտն էր քաղաքական բանտարկյալների համար, վորը ավերվեց Ֆրանսիական Մեծ հեղափոխության ժամանակ:

լուցկի ծախող խեղճերին, մուրացկանի տեղ են դնում նրանց:

— Նա կամենում է ստանալ մի պեննի (մանր դրամ), — մտածում են հարուստները, — նրա նպատակը լուցկի ծախելը չէ:

Վե՛չ, նրանք ցանկանում են, վոր դուք պենք նրանց լուցկիները: Գուցե նրանք հույս ունեն, վոր դուք մի տուփին մեկ պեննուց ավելի կտաք, սակայն յուրաքան-



Նկ. 5. Անոթեկները գիշերում են տուններում:

չյուր տուփ, վոր գնում էք այդ դժբախտից փողոցում, ոգնում է նրան դրստել այն 8—9 պեննին, վոր պահանջվում է գիշերային ոթեկների վարձը տալու համար, ոգնում է մեկ տղամարդու կամ կնոջ՝ ցուրտ գետափնյա փողոցից տաք բնակարան տեղափոխվելու:

Գիշերային ապաստարանը, ի հարկե, փրկություն չէ Լոնդոնի թշվառների համար: Ինձ պատահել է գիշերել այդ տխուր ապաստարաններում: Պետք է խոստովանեմ,

վոր այնքան ել հաճելի չէ ընդհանուր ննջարանում հանգնելը հարյուրավոր, դանադան հասակի մարդկանց ներկայությամբ: Ձեր անկողինը լքած մի տեղ է: Ի հարկե, նա գետափնյա փողոցի սառն քարերից ավելի հարմար է: Դուք ուշադրություն անգամ չեք դարձնում, վոր այդ անկողնի մեջ վիտում են միջատներ: Սակայն դուք այստեղ զգում եք, վոր դուք անոթեկան մարդ եք: Յուրաքանչյուր մանող գտնում է յուր նեղ անկողինը և հարկավոր չի համարում խոսել հարևանի հետ: Շատերը քնած են բոլորովին մերկ. վորը սպիտակեղեն չունի, վորն ել չի ցանկանում իր սպիտակեղենը կեղտոտել ապաստարանի անկողնում: Նրանք թափառաշրջիկներ են, ցնցոտիներ հագած, սակայն հավատացած են, վոր իրենք ավելի մաքուր են, քան գիշերային այդ ոթեկանները, ուր իրենք քնած են:

Անտուն պատանին ամբողջ որը թափառում է Լոնդոնում, քնում է վորտեղ պատահի, և նրա հոգին լիքն է անհույս վհատությամբ: Ձմեռային գիշերը ամեն տեսակ ծակուծուկերում, խավար փողոցներում կարելի չէ հանդիպել քնածի. կիսաքանդ տների ավերակներում, սանդուխդների աստիճանների վրա, տունեկների անկյուններում, մեծ տների պատերի խորշերում, յեկեղեցիների կամարակալ սրահներում: Շատերն ունեն իրանց վորջերը: Մյուս կողմից շատ այնպիսիները կան, վորոնք ամբողջ գիշերը շրջում են, իսկ ցերեկը քնում են վորևե տեղ:

Հիշում եմ, Կովենտ-Գարդենում յես դիպա մի կնոջ: Յուրտ եր. գիշերվա ժամը 3-ն եր: Շուրջը խաղաղ եր և ամալի: Ձմեռային շուկան դեռ բացված չեր: Դա մի փոքրիկ, նիհար պառավ եր, կարմիր ալյուրով, նեղ աչքերով և խուզած մազերով: Ամբողջ ժամանակ նա քայլում եր ու քայլում: Յերբ յես մոտեցա նրան, նա կանգ առավ, սակայն վոչինչ չխոսեց: Նա շեշտակի նայեց ինձ անգույն, վոչինչ չարտահայտող աչքերով: Յերբ տվեցի նրան յերկու պենն, վոր նա գիշերային խանութում տաք թեյ խմե, նա

շարժում արավ, վոր իբր թե պատրաստվում ե գնալու աշխտեղ, սակայն փողերը պահեց և դարձյալ վոչինչ չսաց: Հետո յես տեսա նրան փողերիկ, կարմիր սրճարանի մոտ: Նա վոչինչ չեք գնում:

Փողերիկ սրճատների մոտ սովորաբար կարելի յե հանդիպել շատ թափառաշրջիկների: Նրանք սպասում են՝ չէ՞ն տա արդյոք նրանց մի քանի մանր դրամ կամ չէ՞ն հյուրասիրի սուրճով և յերշիկով: Լոնդոնի արևելյան մասը շուտ ե քնում: Այստեղ մութն ե և ամայի: Տխուր և սարսափելի յե միայնակ թափառող անցորդի համար: Դրա փոխարեն արևմտյան մասը լուսաշող ե և փարթամ: «Այստեղ խավարը թաղված ե և վռնդված դեպի գետափնյա փողոցները: Նվեկտրական լուսավորությունը վատնվում ե առատությամբ: Նա փայլում ե, ճաճանչներ տալիս և տարածվում գեպի յերկինք: Լապտերների սյուները՝ փայլուն գուններով ներկված, հիշեցնում են շքեղ ու լուսաշող մի թափոր, կարծես ցույց են տալիս դեպի պալատը, դեպի մեծ դարպասները, գեպի ինչ վոր հրաշալիք տանող ճանապարհը: Շլացուցիչ, ճաճանչավոր լույսը հիանալի ճեմելիքի յերկարությամբ վազում ե ձեր դեմ: Դուք տեսնում եք ձեզ մարդկային հսկա ալիքի մեջ, վոր ձգտում ե դեպի ցրիկը, դեպի մեծ դռները, վորոնք տանում են ուր վոր... Մետաքսե գլխարկների վրա խաղում են կրակների գունավոր շողքեր: Լույսը դեպի իրան ե ձգում ամեն մեկին և բոլորին: Այստեղ շատ են զանազան սրճատները (կաֆե): Սպասավորները ճանապարհ են բաց անում իրանց համար սեղանների և աթոռների մեջ, տանելով տաք միսը, գինով լի բաժակները, գարեջրի գավաթները: Խուլ աղմուկը զարնվում ե կամարակապ առաստաղին: Կյանքը աղբյուրի պես խփում ե այնտեղ, վորտեղ փրփրում են բաժակները, քսակը լիքն ե վոսկով»:

Ճիշտ ե, վոր ասում են, թե Լոնդոնի մի մասը չգիտե, թե ինչպես ե ապրում մյուսը: Նույն հեղինակը՝ Գրեյսեմը

շարունակում ե. «Յերեք որ առաջ տեսա մի մարդու, վոր տանում եր լիքը մի պարկ ձկան գլուխ և կանչում եր անտուն կատուներին, վոր նրանց հյուրասիրե: Բայց քանի վոր կատուների մեծամասնությունը քնած եր գերեզմանոցում քարերի վրա, նա մտավ յեկեղեցու բակը և բարձր սկսեց նրանց կանչել — «փիսո՛, փիսո՛, միսո՛, միսո՛»: Նստարանի վրա նստած եյին յերեք կին: Նրանցից մեկը կոտրված սանրով սանրում եր բաց թողած մազերը, մյուսը կզակը կրծքին հենած քնած եր, իսկ յերրորդը ուղղակի նստած եր և վոչինչ չեք անում:

— Այդ ի՞նչ ես տանում, հարցրեց կանանցից մեկը տոպրակը տանող մարդուն:

— Մի տուր կատուներին, ավելի լավ ե՛ բեր եստեղ: Յես առավոտից վոչինչ չեմ կերել: Լսիր, մի տուր այդ կատուներին:

— Սա ուտելու բան չե, — ասաց մարդը:

— Միկնույն ե: Կատուները պետք ե ուտեն: Բեր այստեղ:

Բայց մարդը անցավ, շարունակելով կատուներին կանչելը, վորոնք, թողնելով իրենց տաքացրած տեղերը, սկսեցին դանդաղ և կասկածոտ մոտենալ տոպրակին, հոտոտելով այն ամեն կողմից: Նրանք չեյին շտապում ընդունել հյուրասիրությունը, ինչպես այդ ցանկանում եր անել նստարանի վրա նստած կինը: Աղքատության ինչպիսի սարսափելի տեսարան: Դժբախտ կինը պատրաստ եր խել ուտելիքի դեն չպրտված մասերը նույնիսկ կատուներից: Լոնդոնում յեկեղեցական պարտեզները ծառայում են հյուրանոցի տեղ նրանց համար, վորոնց ննջարանը գետափնյա փողոցն ե:

Կարդացեք ամերիկական հայտնի հեղինակ Ջեկ Լոնդոնի «Լոնդոնի հատակում» գրքի XI գլուխը՝ «Փրկության բանակ» և դուք կտեսնեք, թե ինչպես ե նկարագրում նա իր թափառումները Անգլիայի մայրաքաղաքում (բերում ենք կրճատված):

«Ամբողջ գիշերը թափառելով յես առավոտյան պառկեցի քնելու Գրին-պարկում: Ծիշտ ե, յես թըշվել եյի մինչև վոսկորներես ծուծը և չեյի քնել ամբողջ 24 ժամ, սակայն վճռեցի նախ՝ նախաճաշ փնտրել ինձ համար, իսկ հետո և աշխատանք: Գիշերվա ընթացքում ինձ հաջողվեց լսել Թեմզայի ափին գտնվող մի տեղի մասին, վորտեղ փրկության բանակը ամեն կիրակի առավոտյան տալիս ե նախաճաշ «անվաներին»: «Սա, — մտածեցի յես — այն ե, ինչ հարկավոր ե ինձ. առավոտյան նախաճաշ և ապա ամբողջ մի ազատ ուր դործ փնտրելու համար»:

Ճանապարհը հոգնեցուցիչ եր: Յես քարշ եյի տալիս հոգնած վտառներս Լոնդոնի յերկար փողոցներում, մինչև հասա փրկության բանակի դռներին: Այստեղ տեսա գիշերն անձրևի տակ թափառած, խղճալի և ընկճված արարածների մի խայտաբղետ ամբոխ: Ինչպիսի ծայրահեղ աղքատություն և թշվառություն: Յե՛վ վորքան են նրանք: Ծեր տղամարդիկ, ջահել պատանիներ, ամեն տեսակի և ամեն հասակի մանուկներ: Վոմանք նիրհում եյին կանգնած: Նրանցից մոտ տասն հոգի պառկած եյին քարե աստիճանների վրա ամենաանհարմար դրությամբ և քնած: Նրանց ցնցոտիների ծակերից յերևում եր կարմիր մաշկը: Ամբողջ փողոցում, ամեն քայլափոխին, ամեն աստիճանի վրա նստած եյին մարդիկ յերկու-յերկու, յերեք-յերեք և զլուխները կախած քնած եյին: Պետք ե հիշել, վոր այդ ժամանակները ծանր չեյին Անգլիայի համար: Կյանքը ընթանում եր սովորական ճանապարհով: Մոտեցավ պոլիսմենը (քաղաքապահ):

— Կորեք այստեղից, անիծվածներ: Հեռացեք:

Յե՛վ նա վռնդեց նրանց դռների առջևից, քշելով դանազան կողմեր: Բայց աստիճանների վրա քնածներին տեսնելով, նա զարմացավ:

— Վրդովեցուցի՛ն ե, անհանդուրժելի, բացականչեց նա: Յե՛վ այս բոլորը տոնորվա առավոտյան: Հաճելի տեսարան... Հեռացեք այստեղից, անիծվածներ:

Պոլիսմենն անցավ, և մենք նորից խմբվեցինք, ինչպես ճանձները մեղրով լիքը բաժակի շուրջը: Չե՛ վոր մեզ սուսում եր նախաճաշը: Մենք գուցե չխմբվեյինք այստեղ ավելի վճռականությամբ և հուսահատությամբ, յեթե նույնիսկ բաժանելու լինեյին մեկական միլիոն դոլլոր յուրաքանչյուրիս: Մի քանիսը փորձեցին նորից քնել, սակայն պոլիսմենը վերադարձավ, և մենք ճանձերի նման ցրիվ յեկանք նորից, միայն այն մտքով, վոր վերադառնանք, յերբ վտանգն անցնի:

Ժամը 7^{1/2}-ին փոքրիկ դռնակը բացվեց, և Փրկության բանակի զինվորը դուրս հանեց գլուխը:

— Վոչ մի իմաստ չունի մուտքը փակելը, ասաց նա: Նրանք, վորոնք տոմսեր ունեն, կարող են ներս գալ հենց այժմ, իսկ ովքեր չունեն, թող գան ժամը 9-ին:

— Ու, այդ նախաճաշը: Ժամը իննին: Ելի մեկ և կես ժամ: Տոմս ունեցող մարդիկ մեծ նախանձ եյին շարժում: Նրանց թույլ տվին մտնել: Նրանք կարող եյին լվացվել և նստել, հանգստանալ մինչև նախաճաշ տալը, մինչդեռ մենք պետք ե սպասեյինք նույն նախաճաշին փողոցում: Տոմսերը բաժանվել եյին նախորդ գիշեր փողոցներում, և նրանց ստացման մեջ դեր եր խաղացել վոչ թե արժանիքը, այլ լուկ պատահականությունը: Յոթ և կեսին տոմս ունեցող շատ մարդ ընդունեցին, իսկ ժամը 9-ին դռները բացվեցին և մեզ համար: Մենք մի կերպ ներս ընկանք և լցրինք բակը ճիշտ այնպես, ինչպես սարգիսկաները լցնում են տուփը: Լինելով թափառաշրջիկ, յես յերբեմն աշխատում եյի, վոր նախաճաշ ունենամ, սակայն դեռ յերբեք այնպիսի դժվարությամբ չեյի ձեռք բերել այդ նախաճաշը, ինչպես այս անգամ: Յերկու ժամից ավելի յես սպասում եյի փողոցում և մի ժամ ել մարդկանցով լի այս բակում: Ամբողջ գիշեր վոչինչ չեյի կերել, դրա համար ել թույլ եյի և ուժասպառ, իսկ կեղտոտ շորի և չլվացած մարմնի հոտից, վոր բուրում եր փակ բակում:

խիտ կերպով իմ շուրջը սեղմված մարդկանցից, խառնում եր սիրտս: Այնքան նեղ եր, վոր շատերը, ոգավելով հանգամանքից, քնել եյին վտաքի վրա:

Մի ժամի չափ մենք հանգիստ կանգնած եյինք այս փակված բակում: Հետո սկսեցինք անհանգստանալ, առաջ սեղմել, իրար հրել. լավում եյին ցածր ձայներ: Բայց չեր նկատվում վոչ կոպտութիւն և վոչ ել բռնութիւն, այլ լոկ հոգնած ու քաղցած մարդկանց անհանգստութիւն: Աղմուկից դուրս յեկավ ոգնականը: Նա ինձ դուր չեկավ: Նայեց մեզ, և նրա մոտ կանգնածները վախ զգացին: Այդ ժամանակ նա ձայնը բարձրացրեց.

— Կանգնեցեք հանգիստ, յեթե վոչ այլ կերպ կխոսեմ ձեզ հետ: Յես կվռնեմ ձեզ այստեղից և նախաճաշ չեք ստանա:

Թղթի վրա չեմ կարող տալ այդ բառերի անտանելի տոնը: Ինձ թվում եր, վոր նա հղփացած ե այն զիտակցութեամբ, վոր իրավունք և հնարավորութիւն ունի ասելու 500 վողորմելի սովյալներին.

— Դուք կկերակրվեք կամ կհեռացվեք քաղցած, նայած թե յիս ինչպես կկամենամ:

Զրկել մեզ նախաճաշից, յերբ մենք կանգնած եյինք այստեղ մի քանի ժամ: Այս մի սարսափելի սպառնալիք եր: Մենք չեյինք կարող քաղցած հեռանալ այստեղից: **Բայց ոգնականը չբավականացավ դրանով: Մեռելային լուության մեջ նա նորից իր ձայնը բարձրացրեց և կրկնեց իր սպառնալիքը, բայց արդեն ավելի ընդարձակ ձևով:**

Վերջապես մեզ թույլ տվին մտնել հացկերութի դահլիճը, վորտեղ հանգիստեցինք տոմսերով մտած մարդկանց արդեն լվացված, սակայն դեռ չկերակրված: Հալանորեն այստեղ կիներ մոտ յոթհարյուր մարդ՝ սպասող... Բայց վոչ միս և վոչ հաց, այլ առայժմ միայն ճառեր, աղոթք և յերգեցողութիւն: Ոգնականը կարդաց աղոթքը, բայց յիս չեյի լսում նրան, տարված լինելով մասսայական թշվա-

ռության պատկերով, վորը բացված եր իմ առաջ: Ոգնականն ասում եր.

— Դուք միշտ խնձույքներ կունենաք դրախտում: Ինչ վնաս, վոր այս կյանքում դուք տառապում եք և չարչարվում: Դուք քեֆեր կանեք դրախտում, յեթե կատարեք պատվիրանները:

Այս խոսքերը լսող մարդիկ շատ եյին ընտելացած յերկրային դժոխքին, վոր վախենային գալիք դժոխքից: Անքուն և ծանր գիշերից տանջված, յերկար սպասելուց հոգնած, սովից ու ժառսպառ, նրանք սպասում եյին կերակրի և վոչ թե փրկության:

Ժամը 11-ին բերեցին նախաճաշը: Սակայն նա բերվեց վոչ թե ավսեններով, այլ թղթե փաթեթների մեջ: Յես չստացա այն, ինչ վոր ինձ հարկավոր եր և հավատացած եմ, վոր այստեղ նստողներից և վոչ մեկը չստացավ իր սպասածը՝ նուշխիսկ նրա կեսը: Յես իմ հացի մի մասը տվեցի կողքիս թափառաշրջիկին, և նա, ուտելով այդ հացը, քաղցած եր այնպես, ինչպես սկզբում: Ահա ինչից եր բողկացած նախաճաշը. յերկու կտոր հաց, մի կտոր հաց չամիչով, մի փոքրիկ կտոր պանիր և մի բաժակ «թեյ»: Բազմաթիվ մարդիկ սպասում եյին այդ նախաճաշին 5 ժամից ավելի, իսկ մենք սպասում եյինք առնվազն չորս ժամ: Մեզ ներս քշեցին խոզերի պես, շարեցին սարդինկաների պես, վարվում եյին մեզ հետ վորպես շների, կարգում եյին մեզ քարոզներ, ստիպում եյին լսել յերգեցողութիւն և աղոթքներ: Սակայն այս դեռ բոլորը չե: Հենց վոր նախաճաշը վերջացավ (իսկ դրա համար այնքան ժամանակ եր հարկավոր, վորքան ինձ՝ այս խոսքերը գրելու համար) հոգնած գլուխներն սկսեցին խոնարհվել և հինգ րոպեից հետո մեր կեսը քնած եր խորը քնով: Վոչ մի նշան չկար, թե մեզ շուտով կարձակեն: Ընդհակառակը, փողովի ակնհայտ նշաններ եյին յերևում: Յես նայեցի պատից կախված փոքրիկ ժամացույցին: 11-ից 25 րոպե անցել եր:

— «Ե՛նե, մտածեցի յես, ժամանակը թռչում է, իսկ
 ինձ դեռ հարկավոր է աշխատանք վորոնել»:

— Յես ուզում եմ գնալ, ասացի յես իմ կողքին նստած յերկու մարդկանց:

— Պետք է մնալ այստեղ և լսել ժամասացությունը, յեղավ իմ պատասխանը:

— Դուք ուղղում եք մեան, — հարցրի յես:

Նրանք գլխով բացասական նշան արին:

— Այդ դեպքում գնանք և նրանց ասենք, վոր ուղղում ենք գնալ, — շարունակեցի յես: Գնանք:

Սակայն վողդորմեի արարածները սարսափի մեջ ելին։ Այդ պատճառով յես նրանց թողեցի իրանց բախտին և մոտեցա Փրկության բանակի ամենամոտիկ անդամին։

— Յեա ուզում եմ գնալ, — ասացի յես: Յես յեկա
այստեղ նախաճաշելու, վոր ուժ ունենամ աշխատանք
վնտրելու: Յես չեյի կարծում, վոր նախաճաշի համար
այսքան շատ ժամանակ կվատնվի: Յես մտածում եյի, վոր
հնարավորություն կունենամ Ստեպանեյում աշխատանքի
տեղ ստանալ և վորքան շուտ գնամ. այնտեղ, այնքան
ավելի շանսեր կունենամ գործ գտնելու:

Իմ պահանջը նրան ապշեցրեց:

— Ինչպէս, — ասաց նա: — Մենք պատրաստովում ենք
ժամերգութեան, և դուք յալ կանգնեք, յեթե մնաք:

— Սակայն այդ կխանգարի ինձ գործ գտնելու, — պնդում է յի յես: Իսկ ներկայումս ինձ աշխատանքը ամենից կարևորն է:

Նա ինձ ուղարկեց ոգնականի մոտ: Յեա կրկնեցի նրան իմ չմտալու պատճառները և քաղաքավարի կերպով խընդ-րեցի ինձ արձակել:

— Բայց դա անհնար է, — ասաց նա առաքինի զայրույթով, տեսնելով իմ կողմից այսպիսի յերախտամոռություն: Այ քեզ միտք, — փնչացրեց նա: Այ քեզ գաղափար:

— Դուք ուզում եք ասել, վոր յես չեմ կարող գնալ
այստեղից, — հարցրի յես: Դուք կպահեք ինձ այստեղ իմ
կամքին հակառակ:

— Այո, — փնչացրեց նա:

Զգիտեմ, թե ինչ կպատահեր, վերոմհետև ինքս սկսում եյի գայրանալ, սակայն հասարակության մեջ հուզում չառաջացնելու համար նա տարալ ինձ մյուս սենյակը: Այնտեղ նա նորից հարցրեց իմ հեռանալու պատճառները:

— Յեւ ուզում եմ գնալ, բացատրեցի յես, վորովհետեւ ուզում եմ գործ վորոնել Ստեպանյում, և ուշացման ամեն մի ժամը նվազեցնում ե հաջողությունն ունենալու իմ հույսերը: Այստեղ գալով յես չեյի կարծում, թե նախաճաշ ստանալը այսքան յերկար ժամանակ կխլե:

— Դուք վորեւե գործ ունեք, հմ — վիրավորվեց նա: — Դուք զգործունյա մարդ եք, հմ: Ել ինչո՞ւ յեկաք այստեղ»:

Խեղճը սկսեց բացատրել նրան, վոր ամբողջ գիշեր փո-
րոցումն է յեղել, չի քնել, նստարանից նստարան է թա-
փառել, ուժից ընկել և քաղցել է։ Սակայն նրա խոսքերը
չազդեցին ոգնականի վրա։ Նա ծաղրում եր կարոտյալին,
սպառնում եր նրան, և միայն ավագ պաշտոնյան ոգնու-
թյան հասավ խեղճ անգործին և արձակեց նրան։ Դժբախտ
մարդը դուրս պրծավ այս բարեգործական հիմնարկից,
ինչպես բանտից, և խոսք տվեց ել այստեղ չգալ։ Իսկ
յեթե գար ել, հավանորեն նրան ներս չեյին թողնի, վո-
րովհետև գերադաս համարեց գործ վիտրելը ժամերգու-
թյունից և աղոթքից։ Այսպիսի սարսափելի կյանք են վա-
րում միլիոնավոր աղքատացած բանվորներ, նավաստիներ,
բեռնողներ, քաղաք յեկած՝ տնտեսապես քայքայված գյու-
ղացիներ, և այս բոլորը մի յերկրում, վորը հռչակված է
իր հարստություններով։

ԱՆԳԼԻԱՅԻ ՖԱՐՐԻԿՆԵՐԸ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Յեվորդական Անգլիան ունի քարածուխի հարուստ պաշար, մետաղի հանքեր, ունի զինվորական և առևտրական առաջնակարգ նավատորմ, վորը դարձնում է նրան «ծովերի թագուհի»։ Մեծ-Բրիտանիա կղզում տարածված են տեկստիլ գործարաններ, վորոնք պատրաստում են հսկայական քանակությամբ բամբակե, վուշե, բրդե և մետաքսե գործվածքներ, այս գործվածքները գնվում են ինչպես յերկրի ներսում, նույնպես և արտասահմանում։ Անգլիական մահուղներն ու կտորեղենները վաղուց հայտնի յեն դարձել գործվածքի նրբությամբ, գեղեցիկ ներկվածքով և դիմացկունությամբ։ Տեքստիլ արդյունաբերությամբ Անգլիան բռնում է առաջին տեղը։ Իլիկների թիվը հասնում է 66 միլիոնի, վորից 57 միլիոնը պատկանում է բամբակի արդյունաբերությանը։

Տեքստիլ արդյունաբերության մեջ միայն Մեծ-բրիտանական կղզին բռնում գրաված են $1\frac{1}{4}$ միլիոն բանվորներ, վորոնք պատրաստում են մի քանի միլիարդ գանալյան տեսակի գործվածքներ։

Անգլիական տեքստիլ արդյունաբերության կենտրոն հանդիսանում են յերկու քաղաք՝ Մանչեստեր և Լիվերպուլ։ Այդ քաղաքների մեջ յեղած տարածությունն այնքան փոքր է, վոր կարելի յե յերկաթուղով անցնել 45 րոպեյում։ «1894 թ. շինվեց հուշակավոր ջրանցքը — գրում է մի ուսս ճանապարհորդ, — վորպեսզի ծովային խոշոր նավերը Լիվերպուլից ուղղակի կարողանան մոտենալ Մանչեստերի գործարանային պահեստներին։ Վորպեսզի Մանչեստերի արդյունաբերողներին և Լիվերպուլի վաճառականներին և նավատերերին հնարավորություն տրվի արագ գնալ միմյանց մոտ տեսակցության, Ստեֆենսոնը հնարեց շոգեկառքը։ Դրանից հետո 5 յերկաթուղագծեր են տարված այդ յերկու քաղաքների մեջ և նրանք բոլորն էլ յերկգիծ են։ Ընկալնթաց գնացքով Մանչեստերի զլխավոր կայարա-

նից Լիվերպուլի կայարանը գնալու համար հարկավոր է 45 րոպե։ Այս կարճ ժամանակամիջոցում մեզ հանդիպեցին հակառակ կողմից յեկող ութը գնացքներ»։

Ինչպես բոլոր տեղերն Անգլիայում, Մանչեստերն ու Լիվերպուլը, բացի ջրանցքից և յերկաթուղագծերից, միացած են նաև ասֆալտե ճանապարհներով։ Անգլիական լավ ավտոմոբիլը ասֆալտե լավ ճանապարհի վրա արագընթաց գնացքից յետ չի մնա։

Մանչեստեր և Լիվերպուլ քաղաքները վաղուց արդեն միաձուլվել են։ Մանչեստերը ավելի սև է Լոնդոնից։ Նրա տների մեծ մասը ծածկված է ածուխի մրի միապաղաղ շերտով, և լուսամուտների շրջանակների սպիտակ շերտերը սև ֆոնի մեջ փայլում են, ինչպես նեզրի ատամները ժպտալիս։ Յեթե քաղաքի կենտրոնը սև է, ապա նրա գործարանային ծայրամասերը գորշ գույն ունեն, ինչպես զինվորական հին շինելը։ Մանչեստերի գործարանները մեծ մասամբ գեղեցիկ տեսք չունին, աչքի չեն ընկնում վոչ կառուցվածքի տեսնիկայով, վոչ էլ կորպուսի մեծությամբ։ Շենքերը տխուր տեսք ունեն, կառուցված են անգլիական գորշ աղյուսից, ցածր հարկերով և փոքրիկ լուսամուտներով։ Իսկույն աչքի յե ընկնում, վոր կառուցողի գլխավոր նպատակը մինչև հիմա բոլոր պայմաններում յեղել է շենքի եժանությունը։ Մանչեստերի անվանի բամբակի արդյունաբերությունը ամբողջապես կենտրոնացած չե քաղաքի սահմաններում և նրա ծայրամասերում։ Մանվածքային և գործվածքային գործարանների մի խոշոր մասը գտնվում է քաղաքից մի քանի մղոն հեռու, շրջակայքում։ Այստեղ մեր ճանապարհորդը տեսել էր բամբակի մանվածքային մի գործարան, վորը նրա վրա թողել էր անջնջելի տպավորություն։ Համարյա բոլոր աշխատանքները գործարանում կատարում են մեքենաները՝ առանց մարդկային ձեռքերի ոգնության։ Ավելի ևս կատարելագործել գործի ղրվածքը, կարծես, անկարելի յե։ Առաջին մեքենայում

դեղին փայլով, սպիտակ, մամուլով սեղմված բամբակը քրքրվում, բացվում է, անցնելով դաման առաջին աստիճանը: Ապա բամբակը մեքենայորեն ընկնում է հետևյալ մեքենայի մեջ: Ողի հոսանքը տանում է նրան առաջ փակված խողովակներով: Նույն կարգով շարունակ ուղեւորվում է առաջ մղվելով ողի հոսանքից, ինչպես հարած սերուցք, թավ բամբակը անցնում է յերկրորդ մեքենային և գնում է դեպի յերրորդը: Անցնելով յերկրորդ հարկի բոլոր մեքենաներից, բամբակը ինքն իրեն իջնում է վարի հարկը նույնպիսի փակ խողովակներով: Վերին հարկի մեքենաները խուլ կերպով փակված են մետաղե ծածկոցներով: Այդ ծածկոցների մեջ վերևից և կողքերից դրված են տափակ ապակիներ, վորոնց միջից կարելի չէ նայել ձեռքով լույսի առաջն առնելով, ինչպես անում են փողոցի լուսամուտներից ներս նայելիս: Մեքենաների ապակիներից յերևում է, թե ինչպես է փոթորկվում, քրքրվում և և զգգվում մամուլի սեղմած բամբակե զանգվածը, բաժանվելով թելիկների: Մեքենաների մոտ մարդիկ չեն յերևում: Ինչպես յերևում է, նրանց վրա վոչ մի բանվոր պաշտոնյա չի կարգվում: Յերբեմն յերբեմն վում է մի մարդ սպիտակ խալաթով: Ձեռքը վահանաձև բռնած ձակատին նայում է մեքենայի փոքրիկ լուսամուտից ներս, մի քիչ կանգնում, լուռ ահանջ դնում մեքենայի ադմուկլին և հեռանում:

Ներքևի հարկում կանգնած են կարդերը: Այստեղ սկսվում է բամբակի մանվածքը: Կարդերի բաժնում լույս է և ողը մաքուր: Փոշու վոչ մի նշույլ չկա: Գոգ մեքենայի վերջին վալանից* լայն ալիքով թափվում է կիսաթափանցիկ, գորշ-կապտավուն թեթև ջրվեժը, կազմված նուրբ թելիկներից: Ծուրաբանչյուր թելիկ սանրված է, մշակ-

* Կարդ — գոգ մեքենա:

** Վալան — մեքենայի մասը, վոր մանվածքին տալիս է հավասարաչափ ամրություն:

ված և ազատ պառկած է յուր հարևանի կողքին: Թեթև, կապտավուն ամպի մեջ կարելի չէ խորասուզել ձեռքը, և ձեռքը չի զգա համարյա վոչ մի հպում: Ձեռքով կարելի չէ պոկել թելիկների ամպից բավական մեծ մաս: Գոյացած անցքը իսկույն լցվում է և անհետանում այնպես արագ, ինչպես յերևացել էր: Թելիկների լայն ու հարթ հոսանքը վազում է դեպի պողպատե սալի մեջ բացված կլոր անցքը: Սալի տակից դուրս է թափվում արդեն վոչ թեթև ու թափանցիկ զանգվածը, այլ թանձրացած, ձյունի պես սպիտակ բամբակե հյուսքը: Հյուսքերը սահուն կերպով ու անաղմուկ իրանք իրանց դարսվում են բարձր, գլանաձև ամանների մեջ:

Անգլիական հարուստ արդյունաբերության մյուս կարևոր ձյուն է նավաշինությունը: Անգլիան վորոգող ծովերի ափերին դասավորված են հսկայական նավաշինարաններ, վորտեղ կառուցվում են գետային և ովկիանոսային նավեր: Դարերից ի վեր անգլիական նավատորմը բարձր հռչակ է վայելում: Անգլիային թշնամի պետություններն անգամ իրանց թե առևտրական և թե պատերազմական լավագույն նավերի կառուցումը պատվիրում էին նրան: Անցյալ դարի վերջին աշխարհի բոլոր նավերի 90%-ը պատրաստվում էին այստեղ. դեռ մինչև 1927 թվականն էլ յերկրագնդի բոլոր նավերի կեսից ավելին շինվում էր անգլիական նավաշինարաններում:

Քառասուն հազար տոննա քաշով ծովային ահեղի հրեշների կառուցման համար հարկավոր են վոչ սովորական կառուցողական միջոցներ: Նավաշինարաններում բարձրանում են հսկայական յերկաթե սյուներ, կամուրջներ և բարձրացնող կերտվածքներ: Նրանք գեղեցիկ են և վսեմ: Յերկաթե հաշիայով ձգված են նրանք ծովածոցերի կանաչավուն ջրերից մինչև ծխակապույտ յերկնակամարը: Յերբեք չես հոգնի նրանց վրա նայելուց, չես ձանձրանա նրանց աշխատանքից առաջացած միալար մետաղահնչյուն վորոտը լսելուց:

Իր արդյունաբերության զարգացմամբ Անգլիան յերկար ժամանակ ամբողջ աշխարհում առաջին տեղերից մեկն էր բռնում: Բնական մեծ հարստությունները, հարմար աշխարհագրական դիրքը, ազգաբնակչության կուլտուրականությունն ու աշխատունակությունը, պատմական պայմանները — բոլորը նպաստում էին արդյունաբերության և առևտրի վաղ և բարձր զարգացմանը: Այսպիսի խիստ ազգաբնակչությունը բրիտանական կղզիներում ապրում է աշխարհի բոլոր ծայրերից այստեղ բերվող հսկայական քանակության հումքերի վերամշակությամբ և առևտրով: Անգլիական գործարանները վերամշակում են վոչ միայն սեփական յերկաթահանքի պաշարները կամ իրանց վոչխարներից ստացված բուրդը, ինչպես այդ արվում է մյուս յերկրների մեծամասնության կողմից, վոչ — նրանք իրանց գաղութներից և այլ յերկրներից բազմաթիվ առևտրական նավերով բերում են մետաղ, փայտ, բամբակ, բուրդ, շաքար և այլն, պատրաստում են նրանցից բազմատեսակ ապրանքներ և ապա նորից արտահանում և ծախում են ինչպես իրանց գաղութներին, այնպես էլ ոտար յերկրներին: XIX դարը և XX դարի սկիզբը անգլիական արդյունաբերության և առևտրի համար ամենաբարենաջող ժամանակներն էին: Բայց համաշխարհային պատերազմից առաջ արդեն սկսվում է բեկում դեպի վատը. արդյունաբերությունն սկսում է զարգանալ անգլիական գաղութներում և Անգլիայի հետ մրցության դուրս յեկած անկախ պետություններում՝ Գերմանիայում, Միացյալ Նահանգներում, Յապոնիայում և այլն: Անգլիական գործարանատերերն ստանում են նվազ պատվերներ, անգլիական վաճառականները կորցնում են իրանց գնորդներին: Այնուամենայնիվ, պատերազմից առաջ այդ յերկույթները դեռ շատ քիչ էին նկատելի կողմնակի դիտողի համար: Անգլիան մնում էր վորպես համաշխարհային առևտրական պետություն գործարանների անթիվ քանակով, իր և ուրիշների

անհամար քանակությամբ ապրանքները փոխադրող առաջնակարգ առևտրական նավատորմով, անգլիական բուրժուազիան դեռ հսկայական ոգուտներ էր ստանում, բարձր աշխատավարձով կարող էր իր կողմը գրավել բանվոր դասակարգի վերնախավը: Նա միջոցներ էր ձեռք առնում լայնացնելու իր արդյունաբերությունը և նոր գաղութներ, վաճառքի նոր շուկաներ գտնելու համար: Սակայն պատերազմից հետո, չնայած տարած հաղթությանը, դրությունը վատացավ և մինչև հիմա յեղ շարունակում է վատանալ:

Անգլիան մեկն էր աշխարհի այն առաջին յերկրներից, վորոնք սկսեցին լայն չափով մշակել և գործադրել քարածուխը: 1900 թվականին նրան բաժին էր ընկնում քարածուխի համաշխարհային հանույթի 50%-ը, բայց տաս տարուց հետո արդեն Միացյալ Նահանգները այդ կողմից նկատելի չափով անցան Անգլիայից, իսկ Գերմանիան լուրջ մրցակից դարձավ նրան: Պատերազմից հետո քարածուխի արդյունաբերությունը սկսեց ընկնել, վորովհետև հանքահորերի սարքավորումը հնացել է և նրանք քիչ կարող են դիմանալ ավելի յերիտասարդ յերկրների կոնկուրենցիային:

Քարածուխի հանույթի և արտահանության խիստ անկումը 1926 թ. բացի սովորական պատճառներից ուներ նաև արտասովոր պատճառ՝ հանքավորների ութամսյա գործադուլը: Պարզ է, վոր քարածուխի արդյունահանության դրությունը այնքան սպառնալի յե, վոր հարկավոր են ինչ վոր առանձնահատուկ միջոցներ նրան բարձրացնելու համար: Կոմունիստները անհրաժեշտ են համարում բոլոր շախտանքներ վերցնել պետության ձեռքը, իսկ շախտատերերը ձգտում են խուզել բանվորների աշխատավարձը և յերկարացնել նրանց բանվորական որը: Շատ զարգացած է նաև մետաղագործական արդյունաբերությունը: Մինչև XIX դարի վերջը չուգունի և պողպատի արդյունագործու-

* Կոնկուրենցիա — մրցություն:


Թյամբ Անգլիան առաջին յերկիրն եր աշխարհում, բայց հետո նրանից անցան Միացյալ Նահանգներն ու Գերմանիան: Մետաղների և քարածուխի մեծ քանակությամբ ներկայությունը յերկրում հնարավորություն տվեց Անգլիային լայն չափով զարգացնել նավաշինարարությունն ու մեքենագործությունը: Հասկանալի յե, թե ինչու այդ պետությունը վաղ սովորեց նավեր շինել: Նա, ինչպես գիտենք, գետեղված ե կղզիների վրա, ջրային մեծ տարածություն մեջ: Բրիտանական կղզիների բնակիչներին անհրաժեշտ եր դառնալ հիանալի ծովագնացներ:

Մեծ, արդյունաբերական պետությունը հնարում և շինում ե բազմատեսակ մեքենաներ: Հսկայական գործարաններ պատրաստում են շոգեկառքեր, ավտոբուսներ, տրամվայի և յերկաթուղային վագոններ, գյուղատնտեսական, կարի և տեկստիլ մեքենաներ:

Պատերազմից հետո անգլիական արդյունաբերության գրությունը փոխվեց դեպի վատը. նրա բոլոր ճյուղերում նեկտելի յե անկում, սակայն մինչև հիմա յել այդ յերկիրը հանդիսանում ե աշխարհի ամենահարուստ յերկրներից մեկը: Նա մշակում ե շատ ապրանք և ուղարկում ե ծախվելու աշխարհի բոլոր յերկրները: Նայեցեք հապա Լիվերպուլի նավակայանին: Ի՞նչ կտեսնեք դուք:

«Դեղին ջուր, փնչացող շոգեշարժ լաստանավեր, բուկաիրներ՝ հաստ ու սև խոզերի նման, ալիքների մեջ վիտում են յետ ու առաջ: Ատլանտական սպիտակ նավեր, դոկեր, ավազաններ, ծորակներ, ծանրություններ բարձրացնող մեքենաներ, ելեվատորներ, տակառներ, արկղներ, կիսատակառներ, հակեր, խողովակներ, ծխացող գործարաններ, առագաստանավեր, պահեստներ, նավակայաններ, կայմեր, պարաններ, գնացքներ, ծուխ, քառս, գոշյուն, աղմուկ, թխկթխկոց, նավերի ծանր հեք, ձիերի, քրտնքի, պղտոր ջրի և յերկրի զանազան ծայրերից բերված ապրանքների հոտ:

Յեվ այժմ այդպես հարուստ, իսկ առաջ ավելի ևս հարուստ յեղած այդ յերկրում մենք տեսանք դառն աղքատություն սարսափեցնող պատկերներ: Այդ տեղի յե ունենում նրա համար, վոր կապիտալիստները, իշխանությունն իրանց ձեռքում ունենալով, աշխարհի բոլոր հարստություններն իրանց են վերցնում, յերբեք կանգ չեն առնում, յերբեք չեն բավականանում, ուզում են ավելի և ավելի հարստանալ, թողնելով մնացած ազգաբնակչությանը չքավորության և սուր կարիքի մեջ: Նրանք գերադասում են պետական դրամները ծախսել թնդանոթների, տանկերի, ուղային նավատորմի վրա, վոր պաշտպանեն իրանց յեկամուտները դրսից կամ ներսից յեկող ամեն մի թշնամական հարձա-



Նկ. 6. Անգլիական հեռավոր թնդանոթ:

կումից, քան թե միջոցներ տան գյուղական դպրոցների բարեկարգման կամ բանվորական տանելի բնակարաններ շինելու համար: Լոնդոնում վորպես աքսորական ապրած՝ Պարիզի կոմունայի գործիչներից մեկը ճիշտ ե ասել Անգլիայի մասին. «Այս յերկրում ամեն ինչ հսկայական չափերի յե հասնում: Յերբեմն ամբողջ թաղամասն սկսում եր քացախի կամ պտուղների հոտ արձակել: Այդ նշանակում ե, վոր Բլեկուել առևտրական տունը սկսել ե պատրաստել պիկուլի կամ մուրաբա մեր մոլորակի յերկու կիսագնդերի համար: Յեվ ամեն ինչ այնտեղ ամենալայն

չափերի յե հասնում — և հարստությունը և աղքատությունը, միլիարդ գիների (անգլիական վոսկե դրամ) կողքին՝ միլիարդներով վոշիլներ։ Ամբողջ գումարտակներ մեռնում են սովից, հազարավոր ինքնասպաններ կորչում Թեմզա գետի մեջ»...

— Շնորհակալություն, Ալեքսանդրա Պավլովնա, աղա-
զակեցին յերեխաները. — այժմ մենք կարող ենք գեկու-
ցում տալ Անգլիայի մասին գյուղում, ուր ամառը
կգնանք։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՇԵՐԸ

(Դեկտեմբեր 1924 թ.)

Այս գիշերը մառախուղը սովորականի պես չիջավ Լոն-
գոնի վրա։ Նա գալարվող, թանձր ամպերով հոսեց ցած։
Կարծես ծխե վարագույրով պաշտպանված անտեսանելի
թշնամին եր գրոհ տալիս քաղաքի վրա հեղձուցիչ գազե-
րով։ Նեղ փողոցները բոլորովին լցված էին մառախուղ-
ով, իսկ լայն փողոցներում նա լողում եր սպիտակ,
պատառոտված ու գալարուն փաթիլներով։ Գուցե փողոց-
ներում իսկապես քիչ ժողովուրդ կար, սակայն շատ եր
թվում։ Փողոցային լապտերները աղոտ լույսի միջից դուրս
էին ցցվում հարյուրավոր շարժվող ու խոսակցող գլուխ-
ներ։ Հարյուրավոր, հազարավոր գլուխներ... Մարդիկ
կանգ էին առնում, նայում էին անձանոթ դեմքերի,
վերոնք անսպասելի կերպով դուրս էին գալիս նրանց դեմ
սպիտակ խավարի միջից։

Ուշադրության արժանի տեսարան էին ներկայացնում
խորոված շագանակներով քի, շարժվող, շիկացած սալակ-
ները։ Չէին յերևում վոշ մարդկային կերպարանք, վոշ
անիմներ, միայն այրվող ածուխների դուրեկան, կարմիր
ու փայլուն կույտը դանդաղ մոտենում է ձեզ...

— Շագանակ, Բաթինը յերկու պենս։ Շագանակ, շա-
գանակ — լսվում եր խուլոտ մի ձայն, և հանկարծ ձեր

առաջ դուրս ե գալիս աղաղակող՝ մարդու կնճռոտ ու
ժպտուն դեմքը։

Շագանակ ծախողները լավ աշխատեցին այդ գիշեր։

— Շագանակ գնեցեք ձեռքերդ տաքացնելու։ Դրեք
զրպաններդ մի գույգ շագանակ։

Տրաֆալգար պարտեզը գլխավոր հավաքատեղին եր։
Հազարավոր մարդիկ խմբերով հավաքվում էին նրա ընդար-
ձակ տարածության մեջ։ Մառախուղը կարծես ավելի
թանձրացավ։ Ավտոբուսների կոնդուկտորները գնում էին
ճանապարհով իրանց մեքենաների առջևից, նրանց համար
ճանապարհ բանալով։ Աղմուկը, ուրախաձայն աղաղակ-
ները, յերգը, ծափահարությունները, բարձրաձայն ուռան,
փողերի ճղճղոցը և ժամանակ առ ժամանակ անբավակա-
նության արտահայտությունները միախառնվելով թռչում
էին ողի մեջ, անտեսանելի ամբոխի վերևում։ Ներքեր,
փողոցում, մեծ շինության առջև կանգնած եր մարդկանց
անտեսանելի բազմություն, և բոլորը գլուխները վեր
տնկած նայում էին վարագույրի վրա յերևացող թվերին։
Այդ թվերը ցույց էին տալիս այս կամ այն թեկնածվի
ստացած ձայների թիվը։ Մի անգամ ընկնելով այդ բազ-
մության մեջ, այլևս դուրս պրծնել այստեղից անհնար եր։
Մարդկանց խտությունից և սեղմվելուց շոգել կարելի չէր։
Բոլորը հետևում էին իրանց կուսակցությունների անդամ-
ների հաղթությանը։ Բանվորական կուսակցության հաջո-
ղությունը առաջացնում եր հիացմունքի և անհուն բերկ-
րանքի ամբողջ փոթորիկ։ Բանվորական կուսակցության
կողմնակիցները ամենից ավելի էին ազմկում։

— Կեցցե բանվորական կուսակցությունը։ Ե-հ, ինչ-
պես ե ձեր քեֆը, լրբերալներ։ Մեկն ել, մեկն ել։ Դար-
ձյալ բանվորական։ Ուռա... ա... Վոքեան, վոքեան։ Մեկ,
յերկու, յերեք...

Յուրաքանչյուր անգամ, յերբ փոխվում եր բանվորա-
կան կուսակցության թվի գումարը, յերիտասարդությունը

սկսում եր միասին և բարձր հաշվել. — մեկ, յերկու, յերեք և այլն, մինչև հասնում եր ընդհանուր թվին, և հետո քուռն թափ եյին ստանում խանդավառ աղաղակներն ու ծափահարությունները:

Սակայն այդ դիշեր հաղթեցին վոչ բանվորները, այլ կոնսերվատորները (պահպանողականները), չորս տարով իրանց ձեռքն առնելով իշխանությունը, վորպեսզի այդ ժամանակաշրջանում ամրացնեն բանկիրների և գործարանատերերի ուժը և թուլացնեն ու քայքայեն աշխատավորական դասակարգերը:

Մառախուղով եր վարագուրված ընտրությունների այդ դիշերը. մառախուղի մեջ թափառում եյին մարդիկ, չիմանալով, թե ինչո՞ւ համար ե տեղի ունենում այդ բոլորը, թե ի՞նչ կատացվի այդ բոլորից, ի՞նչ կանեն նրանց համար նրանց ձայներով ընտրված պարլամենտի անդամները:

Սակայն նրանք վոչինչ չարին բանվոր դասակարգի համար: Իշխանության գլուխ անցած Չեմբերլեններն ու Հիկսերը ավելի ուժեղացրին ճնշումն ու շահագործումը, անլուր խստությամբ ճնշում եյին գաղութներում ծագած ապստամբությունները, կանգ չառնելով մարդկային զոհերի առաջ: Նրանք պատերազմ եյին պատրաստում Խորհրդային Միության դեմ: Բանվորների դրությունը դարձավ անտանելի և 1926 թ. հանգեց ածխահատների հսկայական գործադուլին: Շարժվեցին բանվորական մասսաները, ուժեղացրին պայքարը և մյուս ընտրություններին՝ 4 տարի հետո, դրությունը փոխվեց: Իշխանությունն անցավ «բանվորական» կուսակցության առաջնորդների ձեռքը: Բանվորական մասսաներն սպասում եյին, վոր դրությունը կլավանա. — կվերանա գործադրկությունը, կբարձրանա աշխատավարձը, ամենուրեք կսանձանվի 8 ժամյա բանվորական որ, ազատ շունչ կըաչեն գաղութային ճնշված ու հարստահարված ժողովուրդները, կփոխվի վերաբերմունքը դեպի

Խորհրդային Միությունը: Արդարացան արդյոք նրանց հույսերը: Վոչ, Ինչո՞վ տարբերվեց Մադոննալդը Չեմբերլենից: Վոչնչով: Շարունակվեցին նույն ճնշումները, ավելի մեծ ծավալ ընդունեցին ապստամբությունները գաղութներում, գործադրվեցին ավելի խիստ միջոցներ այդ ապստամբությունները ճնշելու համար, սպառազինման գործը առաջ ե տարվում նույն թափով: Իբր «բանվորական» կուսակցության առաջնորդները դավաճանեցին մասսաներին և յուր են քսում կապիտալիստների հացին: Նրանք բուրժուազիայի կամակատարները հանդիսացան և բոլորովին բացվեց նրանց դիմակը: Գործադրկությունը հսկայական չափերի հասավ: Միլիոնավոր մարդիկ այսօր թափառում են անգործ, չկարողանալով մի կտոր ցամաք հաց հասցնել իրանց սովատանջ յերեխաներին: Մի շահ միայն ունեցավ բանվորությունը — լավ ճանաչեց դավաճաններին, և նրա ձախ թիւը որ ավուր ավելի և ավելի ստվարացնում ե կոմունիստական կուսակցության շարքերը, իսկ այդ շարքերը որ ավուր ուժեղանում են և մեծ ազդեցություն են ձեռք բերում մասսաների վրա:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Քսրաժուխի համաշխոտեհային պաշարը

Մի գիտնական հաշվել ե, վոր գետնի մեջ գտնված քարածուխի պաշարը կբավականացնի (սկսած 1913 թ. և ընդունելով, վոր կհանվի այնքան, վորքան 1913 թ.)՝ Կանադային (ընդարձակ շրջան Հյուսիսային Ամերիկայում, մտնում ե Բրիտանական կայսրության կազմի մեջ) 267 տարի, Չինաստանին — 259 տարի, Խորհրդային Միությունը — 206 տարի, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին — 183 տարի, Լեհաստանին — 162 տարի, Գերմանիային — 121 տարի, Անգլիային — 102 տարի, Ֆրանսիային — 99 տարի, Բելգիային — 92 տարի:

Յերկարահանվի համաշխարհային պաշարը

Յեվրոպան ունի յերկաթանքի հաշված պաշար 22.089 միլիոն տոննա: Նրանից բաժին է ընկնում Ֆրանսիային՝ 8.164 միլիոն տոննա, Անգլիային՝ 5.970 միլիոն տոննա, Խորհրդային Միությանը՝ 2.235 միլիոն տոննա, Շվեյցիային՝ 2.203 միլ. տոն., Գերմանիային՝ 1.317 միլ. տոն., և այլ յերկրներին՝ 2.200 միլ. տոննա:

Խնդիրն էր*. 1) Հաշվեցե՞ք՝ վերահղ և ավելի յերկաթի պաշարը, — Յեվրոպայում թե՛ Ամերիկայում և վերջանով: 2) Անգլիայի բաժինը յեվրոպական յերկաթանքի պաշարի վրա տոկոսն է կազմում:

ԳԵՐՄԱՆԻԱ

Յերևակայեցե՞ք մեր մանուկների ուրախությունը, յերբ Կոստյայի հայրը հայտնեց նրանց, վոր իրան գործուղում են վեց ամսով Գերմանիա և Ֆրանսիա մեքենագործություն ուսումնասիրելու համար և վոր նա յերեսաներին էլ տանում է իր հետ: Կոստյային նա տանում էր նրա համար, վոր ճանապարհորդությունը նրան զարգացնի և տա շատ գիտելիքներ, իսկ Կոլյային վերցնել իրանց հետ խնդրեցին նրա ծնողները, վորպեսզի յերեսան բժշկվի արտասահմանյան բժշկներին մոտ:

Յերեսաները շտապ կերպով ճանապարհի պատրաստություն տեսան, վերցնելով մեկական ձեռք Կոստյուկ, սպիտակեղեն, մատիտներ և թուղթ: Մեծերը վորքան համոզեցին նրանց թողնել մատիտներն ու տետրակները տանը, ասելով, վոր արտասահմանում նրանք այդ պիտույքներից կարող կլինեն ճարել վորքան ուզես, չեղավ. մանուկները չկարողացան բաժանվել գունավոր մատիտներից և ավրամներից: Ալեքսանդրա Պավլովնան և դպրոցական քնկերները գնացին նրանց հետ կայարան՝ ճանապարհ դնելու:

— Նայեցե՞ք, յերեսաներ, բերե՞ք մեզ համար հետաքրքիր պատմություններ և նկարներ Գերմանիայի և Ֆրանսիայի կյանքից, — ձայն էլին տալիս նրանց, յերբ գնացըը շարժվեց:

— Կբերենք, կբերենք, ուրախ պատասխանում էլին Կոլյան և Կոստյան:

* Ըստ Բատուեի — Հոլմույթի համաշխարհային աղբյուրները, Ռուս-պետերաու, 1928 թ.:

Գնում ելին ուրախ, հայում ելին լուսամուտներից վազող անտառների և գյուղերին, ձայն ելին տալիս գյուղական մանուկներին: Նորհրդային Ռուսաստանի ճիշտ սահմանագլխին հեռաքրքրությամբ զիտում ելին վայտե դարպասները, վորոնց՝ դեպի կապիտալիստական աշխարհը հայող յերեսին գրված եր. «Պրոլետարներ ըստ յերկրի, միացե՛ք»: Յերբ, լուսամուտներից հայելը ձանձրացնում եր նրանց, նրանք կարդում ելին կամ լսում Իվան Նիկիտիչի՝ Գոսսյայի հոր պատմությունները: Նա առաջ ել յեղել եր Գերմանիայում, զիտեր զերմաներեն և կարող եր շատ բան պատմել յերեխաներին:

— Գերմանիան վաղուց համարվում էր փերխոփաների և բանաստեղծների յերկիր, — այսպես սկսեց Իվան Նիկիտինը: — Գերմանացիք՝ կուլտուրական ազգ են, միաշափ ընդունակ՝ գիտությունների և արվեստի մեջ. նա շատ բան է մտցրել գիտությունների և գեղարվեստական արժեքների գանձարանը:

պատանեկության մեծ մասը սովորում ե յերկրորդ աստիճանում: Գոյութիւն ունեն չափազանց շատ մասնագիտական դպրոցներ ինչպես տղաների, այնպես ել աղջիկների. — գյուղատնտեսական, անտառային, տեխնիկական, արդշտանաբերական, գեղարվեստական և այլն: Գերմանական դպրոցը յուր սաներին տալիս ե հաստատուն գիտելիքներ, աշխատելու սովորութիւն, աշխատանքը ճշտապահությամբ և խնամքով կատարելու ունակութիւն: «Սա — գերմանական դաստիարակութիւն ե ստացել», — ասում են մեզ մոտ գովասանքով գերմանական վորակյալ բանվորների, ինժեներների, տեխնիկների, բժիշկների և հաշվետարների մասին: Խոշոր արժանիքների հետ միասին գերմանական դպրոցներն ունին մեծ պակասութիւններ: Ամենից առաջ վերաբերմունքը դեպի յերեխաները կոպիտ ե. հաճախ նրանց անսիրտ կերպով ծեծում են և այն ել շատ չնչին հանցանքների համար. պատիժներն առհասարակ ծաղկում են այստեղ: Յերկրորդ՝ չնայած նրան, վոր խոսքով սկզբնական կրթութիւնը միատեսակ տեսք ե լինի բոլոր դասակարգերի յերեխաների համար, գործնականում ունևոր ծնողների յերեխաները ստանում են բոլորովին այլ կրթութիւն և դաստիարակութիւն, քան բանվորների տղաներն ու աղջիկները, առավել ևս գյուղացիներին: Առաջիններին տրվում են լավագույն ուսուցիչներ, լավագույն պիտույքներ, դպրոցական ամենալավ շենքերը և, վերջապես, նրանց հետ մեղմ են վարվում: Յերրորդ՝ գերմանական դպրոցն այժմ յեկեղեցու ձեռքում ե գտնվում. ուսուցիչներն ու աշակերտները պետք ե հպատակվեն պատուրին կամ պատերին (այսինքն բողոքական կամ կաթոլիկ քահանային), հակառակ դեպքում դասատուները զրկվում են տեղից, իսկ յերեխաները դուրս են արվում դպրոցից այնպիսի վատ վկայականով, վոր ել գնալու տեղ չի մնում: Այս մութ կողմերից ազատ են միայն մի քանի առաջնակարգ դպրոցներ: Կոմունիստներն ու լավագույն

մանկավարժները ձգտում են առողջացնել պետությունը բոլոր դպրոցները, սակայն այդ ձգտումը հաջողությամբ կպսակվի միայն այն ժամանակ, յերբ յերկրի ամբողջ հասարակական կյանքը կվերակառուցվի նոր սկզբունքներով, յերբ Գերմանիան կդառնա խորհրդային:

Գիտության դարդաքանի և բարձրագույն կրթության տարածման համար Գերմանիան շատ բան է արել. այս պետությունը, վորի տարածությունը մեր միայն Արխանգելսկի նահանգից պակաս է, ունի մոտ 25 մասնագիտական բարձրագույն դպրոց և մոտ 25 համալսարան զանազան լեզուներում, այսինքն բնագիտություն համարյա 50 բարձրագույն կրթական հիմնարկներ: Գիտության բոլոր բնագավառներում — մատեմատիկայի, բնագիտության և հասարակագիտության, գրականության, փիլիսոփայության — ունեն մի շարք նշանավոր գիտնականներ, վորոնք համաշխարհային հռչակ են վայելում:

Այս Կոստյայի հայրը կարգաց և թարգմանեց Ռուսաստան գնացած յերկու գերմանացի յերեխաների պատմությունը:

«Դպրոցական Ֆրանցը ամեն առավոտ ողնում էր մորը թերթեր ցրելու: Մի անգամ նա շատ վաղ վերկացավ, անցավ մի քանի տուն, յերբեմն բարձրանալով 5-րդ հարկը, յերբեմն իջնելով նկուղը: Այդ որը նա իրան լավ չեր զգում. վորքերն այնպես արագ չեյին շարժվում, ինչպես միշտ:

Նա դպրոցից 10 բալետ ուղարկում, Ուսուցիչը — չարասրտությամբ նայեց նրան և ասաց.

— Համմերշլագ, յես քո անունը նշանակում էս: Այս ամսում յերկրորդ անգամ ուղանում ես:

Ֆրանցը վոչինչ չասաց և նստեց իր տեղը: Համեմատաբար փոքր դասարանում նստած էյին 50 բանվորական յերեխաներ՝ խիտ սեղմված: Առաջին դասը դեռ չվերջացած ոգն արդեն ծանրացել էր: Պատերը մերկ էյին ու տեղ: Մեկից կախված էր Գերմանիայի զգալի մասը:

տեղը, մյուսից՝ կուրծքը բազմաթիվ շքանշաններով զարդարած Վիլհելմ կայսրի պատկերը:

Առաջին դասը գերմաներեն էր: Մի յերեխա դասագրքից, քնեած ձայնով կարդաց, մի լավ և աշխատասեր, բայց աղքատ մանկան պատմություն, վորին աստված համեստության և ջանասիրության համար պարգևատրեց նրանով, վոր ներշնչեց բարեսիրտ հարուստին նվիրելու նրան հիանալի կապույտ կոստյում:



Նկ. 7. Մանկական յերգեցիկ խումբ գերմանական դպրոցում:

— Այդ բոլորը հիմարություն և, — լավեց մի ձայն յետևի նստարանից, — սակայն ուսուցիչը չլսեց այդ խոսքերը: Բարձրացավ մի մատ:

— Ի՞նչ ես ուզում, կրառուկոպֆ, — հարցրեց ուսուցիչը:

— Սա ճշմարիտ պատմություն է:

— Այո, իհարկե: Նա համապատասխանում է իսկական կյանքին և աստվածային ճշմարտությանը...

Գերմաներենի դասից հետո կրոնի դաս էր: Կրկնում էյին տասն պատվիրանները. «Մի սպանիր, մի գողանար, մի ցանկանա քո մերձավորի տանը, վոչ նրա ունեցածին, վոչ...»: Յետևից լավեցին ձայներ.

— Մենք չենք ցանկանում այդ լսել: Մենք չենք սպանում վոչ վոքի և աչք չունենք մեր մերձավորի տանը, վոչ ել նրա ունեցածին, վորովհետև մեր մերձավորները վոչ տուն ունեն, վոչ ել կայք, նրանք ել միանգամայն նույն խեղճ պրոլետարներն են, ինչպես և մենք, և ապրում են հասարակ շենքերում վարձած բներում, ինչպես և մենք: Այդ բոլորը գրված է հարուստների համար և մենք չենք — ցանկանում լսել այդ:

— Պետեր Հունգերբուխ (քաղցած փոր), — գոռաց վայրացած ուսուցիչը, տեղից վեր թռչելով. — Ի՞նչ ես գուայդտեղից մրթմրթում: Ի՞նչ ես ուզում ասել, Հապա յեկ աստեղ: Պետերը մոտեցավ:

— Թեև յես բոլորը չիմացա, բայց այդքանն ել բավական է: Մեկնիր ձեռքդ, տեսնեմ: Նա խփեց յերեսայի ձեռքին փայտով մի քանի անգամ: — Իսկ հիմա դու անմիջապես կհեռանաս դասարանից պարապմունքները չաբամտությամբ խանգարելուդ համար:

— Ի՞նչ արած, ավելի լավ, — պատասխանեց Պետերն ու ձեռքերը գրպանները կոխած համառորեն քայլեց դեպի դուռը:

Հետևյալը մայրենի պատմության դասն էր: Ուսուցիչը պատմում էր Ֆրիդրիխ թագավորի, նրա պատերազմների և հաղթութունների մասին:

— Այո, այն ժամանակ գերմանացիք դեռ կարողանում էին հաղթել, ասաց ուսուցիչը. այն ժամանակ դեռ չէին վռնդում նրանք իրանց հարազատ ու որինավոր թագավորին, ինչպես մեր որերում և չէին լսում հանցագործ ագիտատորներին, ինչպես հիմա: Դրանք դեռ հին կորովի և հայացքների տեր մարդիկ էին, հնազանդ, հավատարիմ և աստվածավախ: Նրանք թույլ չէին տալիս, վոր ֆրանսիացի շները կամ խոզ ուսները մեզ հաղթեն, նրանք թույլ չէին տալիս հայրենիքի դավաճաններին դանակը խրելու մեր թիկունքը: Նրանք «ուռա» գոչելով գնում

էին հաղթելու կամ մեռնելու աստծու, թագավորի և հայրենիքի համար: Ծիշտ է մի հին յերգի մեջ ասվածը:

«Հասարակ ժողովուրդը չեր, վոր Գերմանիային մեծ ու փառավոր դարձրեց»:

Այդ արեց իր ուժով նրա Ֆրիդրիխ թագավորը ծեր»:

— Ֆրանց Համմերշլագ, դու այսոր շատ անուշադիր ես: Վեր կաց և կրկնիր վոտանավորը, վորը յես հենց նոր ասացի:

Ֆրանցը կանգնեց, շեշտակի նայեց ուսուցչին և վոչ մի բառ չարտասանեց:

— Ե-հ, շոտ կսկսես, — գոռաց ուսուցիչը. — «Հասարակ ժողովուրդը»... հետո, շարունակիր:

Ֆրանցը կանգնած եր լուռ: Դասարանը սկսեց:

— «Հասարակ ժողովուրդը չեր»... կատաղեց ուսուցիչը. «Հասարակ ժողովուրդը չեր»...

Այն ժամանակ Ֆրանցը հանգիստ ձայնով ասաց, շեշտելով ամեն մի բառ.

— «Մենք բանվորների և գյուղացիների յերիտասարդ գվարդիան ենք»:

— Այդ ի՞նչ ես ասում, հանդուգն տգետ: Դուրս արի տեղից: Յեկ այստեղ, Այժմ կրկնիր ինձ հետ վոտանավորը. «Հասարակ ժողովուրդը չեր, վոր Գերմանիային մեծ ու փառավոր դարձրեց»:

Ֆրանցը գայրույթից կարմրած աղաղակեց բարձրաձայն.

— «Մենք բանվորների և գյուղացիների յերիտասարդ գվարդիան ենք»:

Ուսուցչի փայտը սուլեց ողի մեջ և յերեք անգամ իրար յետևից իջավ Ֆրանցի մեջքին այնպես, վոր փոշին ամպի պես բարձրացավ նրա կարկատած, հնամաշ բլուզից: Նա հանկարծ յետ դարձավ, խլեց փայտը ուսուցչի ձեռքից, յերկու կտոր արավ և նետեց անկյունը: Ապա դուրս թռավ դասարանից: Դեպի դուռը գնալիս նրա աչքն ընկավ կայսրի պատկերին: Բարկացած բռնեց նա պատկերը,

պոկեց պատից մեխի հետ միասին և շարտեց հատակին։ Ուսուցիչն ու դասարանը դեռ չեյին սթափվել զարմանքից, յերբ նա սանդուխդով ցած վազեց և կորավ փողոցում մարդկային ալիքի մեջ»։

— Դուք ուզում եք իմանալ, թե ինչ յեղով համարձակ Ֆրանցը, — հարցրեց Իվան Նիկիտիչը Կոլյային և Կոստյային։ Նա մտավ «Պատանի Սպարտակներին»՝ գերմանական յերեխաների կոմունիստական միության ժողովը, վորտեղ նրան բացատրեցին, վոր նա չպետք է մենակ դուրս գար ուսուցչի դեմ, վորքան ել բարկացած լիներ։ Նա պետք է կապակերպեր դասարանը այդ հակահեղափոխական դաստիարակի դեմ և պայքար մղեր հետևողական կերպով, աստիճանաբար։ Բայց քանի վոր իր այդ ապստամբական քայլի համար Ֆրանցը անկարող եր դպրոց վերադառնալ, վորովհետև նրան աշխտեղից կուղարկեյին մանկական ուղղիչ տուն, նա փախավ Խորհրդային Ռուսաստան և մտավ ֆաբզորժուս։ Առհասարակ սա շատ հետաքրքիր գիրք է գերմանական պիոներների մասին, և յերբ դուք լավ սովորեք գերմաներեն, ձեզ խորհուրդ եմ տալիս կարդալ այս գիրքը։

— Իսկ ինչ հետևեցրիք այս պատմությունից, յերեխաներ, հարցրեց Կոլյայի հայրը։

— Մենք այժմ գիտենք, վոր Գերմանիայում ել, ինչպես և Անգլիայում, յերեխաներին դպրոցներում դեռ ծեծում են։

— Այո, ավելի շատ, քան Անգլիայում։ Կարդացեք գերմանական պիոներական «Բարաբան» թերթը։ Դուք աշխտեղ կգտնեք բազմաթիվ մանկական նամակներ, վորոնց մեջ պատմվում է դպրոցներում գործադրվող ֆիզիկական պատիժների մասին։ Ծեծում են վոչ միայն չարությունների կամ դասեր չսովորելու համար, այլև ուսուցչի կամ դպրոցական կարգերի շուրջը ծագած ամեն մի անհամաձայնության ժամանակ։

— Դուք տեսնում եք, Ֆրանցը ստիպված եր բոլորովին հեռանալ դպրոցից, վորովհետև նա չցանկացավ կրկնել թագավորի գովեստ վոտանավորը, այլ նրա փոխարեն բերեց հեղափոխական յերգի խոսքերը։ Բոլոր յերեխաներին ստիպում են անպայման սովորել աղոթքներն ու պատվիրանները։ Քահանաներին պետք է լսեն վոչ միայն աշակերտները, այլ և ուսուցիչները։ Պատմում են այսպիսի դեպք։ Մի մանուկ, բանվոր կոմունիստի վորդի, հրաժարվեց կրոնի դասերից։ Պատերազմի ժամանակ եր այդ։ Այն ժամանակ թույլ եր տրվում ծնողներին, վորոնք չեյին ցանկանում իրանց յերեխաներին կրոն սովորեցնել, հայտնել այդ մասին դպրոցի վարչությանը։ Այժմ այդ բանն արդեն արգելված է։ Բոլոր յերեխաներն անպայման պետք է կրոն սովորեն։ Յեվ այսպես, Պավելը դադարեց դպրոցական քահանայից կրոնի դասեր վերցնել։ Դրա համար ուսուցիչը անդադար հայնոյում եր նրան, անարգում և դարձրել եր դասարանի ծաղրի առարկա։ Սակայն վոչ կոպտությունները, վոչ ծաղրը և վոչ ել նույնիսկ ծեծը չկարողացան ստիպել նրան իր վորոշումը փոխելու։ Այնուամենայնիվ քահանան և ուսուցիչը վորոշեցին ինչ գնով ել լինի կոտրել յերեխայի համառությունը։ Դրանք Գերմանիայի ամենաժանր տարիներն եյին։ Քաղաքներում սնունդը չեր բավականացնում, հագուստ, վառելիք շատ քիչ կար։ Պավլուչի հայրն ու յեղբայրները ճակատումն եյին, պառկած ցեխոտ խրամատներում։ Մանկան ապրուստը շատ վատ եր տանը։ Նրա ընտանիքը սարսափելի չքավորության մեջ եր։ Ահա հենց այստեղ ուսուցիչն ու քահանան միջոց գտան կոտորելու համառ յերեխայի կամքը։

Մի անգամ դասերից հետո քահանան քաղցր ձայնով կանչեց Պավլուչին իր տուն։ Պավելը գարմացավ, բայց հակառակվել չհամարձակվեց։ Այստեղ քահանան առաջարկեց նրան այսպիսի պայման. յեթե Պավլուչան կդառնա ղեպի կրոնը, կստանա քահանայից դրա փոխարեն նոր

կոստյում և մի գույգ լավ կոշիկ: Հետևյալ որը ուսուցիչը բաժանում էր աշակերտներին ինչ վոր բարեգործական ընկերութեան ուղարկած բանջարեղենը, կարտոֆիլը և մրգեղենը: Այն ժամանակ բանվորների յերեխաները այսպիսի բաներ շատ քիչ էին գտնում: Ուսուցիչը Պավլուշին վոչինչ չտվեց: Նա Պավլուշին ասաց, վոր ամբողջ դասարանից միայն նա վոչինչ չի ստանա, վորովհետև նվերներն ուղարկված են միայն հավատացող յերեխաներին: Դասերից հետո ուսուցիչը Պավլուշին մի կողմ կանչեց և խոստացավ այդ բոլոր համեղ բաներից յերկու բաժին տալ նրան, յեթե միայն նա կլսի պատուիրն (գերմանական քահանային) և նորից կվերադառնա յեկեղեցու գիրկը: Կոստյումից, կարտոֆիլից և կոշիկներից գայթակղվելով, Պավելն ու նրա մայրը գիշեցին քահանայի և ուսուցչի կամքին: Հենց հետևյալ որը Պավելը ամաչեց իր թուլութունից և ամբողջ կյանքում զգվանքով լցվեց դեպի յեկեղեցին և դպրոցը, վորոնք կաշառքով են գնում հոգեպետ դեռ չամրապնդված յերեխաների հնազանդութունը:

Ուշ եր արդեն. վագոնի հանդարտ տարուբերումները որոր էին ասում ճանապարհորդներին: Հոր պատմությունից հետո մանուկները բարձրացան վերևի դարակնիքի վրա և պառկեցին քնելու:

Մոսկվայից մեկնելուց յերկու որ հետո մեր ճանապարհորդները մտան Բեռլին:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ՝ ԲԵՌԼԻՆ

Բեռլինը ամբողջապես շինված է գորշ քարից: Հագիվ կպատահես մուգ կարմիր կամ սպիտակ գույն ունեցող շինութեան: Փողոցներն ուղիղ են, կարծես քանոնով քաշած: Որինակելի կարգուկանոն, կենտրոնում մաքրութուն: Իր մեծութեամբ Յեվրոպայի յերրորդ քաղաքը՝ չորս միլիոն ազգաբնակչութեամբ բռնում է հսկա տարածութուն: Քաղաքի մասերը մլացած են իրար հետ ամբողջ մայրաքա-

ղաքը կտրող յերկաթուղով. գնացքներն ուղևորվում են յուրաքանչյուր յերկու-յերեք րոպեն մի անգամ: Բացի գետնի յերեսին յեղածներից կա նաև ստորյերկրյա ելեկտրական յերկաթուղի, տրամվայներ, ոմնիբուսներ և հակայական քանակութեամբ սակագնով աշխատող վարձու ավտոմոբիլներ: Բեռլինում ձիեր համարյա թե չկան: Քաղաքի կենտրոնում խիստ վոճով շինված հիանալի շինություններ կան — ռայխստագը*, համալսարանը, հանրային գրադարանը, վոր աշխարհիս ամենահարուստ գրադարաններից մեկն է, թանգարաններ, պատկերասրահներ, պալատներ: Շատ են կայսրների, թագաժառանգների և գեներ-



Նկ. 8. Բեռլինի կենտրոնը:

ալներ, և շատ քիչ — գիտնականների, գեղարվեստագետների և բանաստեղծների արձանները: Քաղաքի մեջ շատ տեղերում կանգնեցրած են հաղթական կամարներ, նվիրված հին ժամանակներում գերմանական զորքի տարած այս կամ այն հաղթութեան պատվին: Բեռլինը մինչև 1918 թ. հեղափոխությունը և կրած պարտությունը պատերազմում վոչ միայն պետական և առևտրական կենտ-

* Ռայխստագ — գերմանական պարլամենտն է:

րոն եր, այլ և կարևոր ռազմական քաղաք: Այժմ գինվորականներ համարյա թե չեն յերևում, համազգեստով շրջում են միայն վոստիկանները: Հաղթող պետութիւնները ի չիք դարձրին գերմանական հպարտ բանակը: Ոտար հաճախորդին զարմացնում է շենքերի միաձևութիւնը. թատրոններ, հսկայական խանութներ, արդյունաբերական ձեռնարկներ, նավային, յերկաթուղային գրասենյակներ, դպրոցներ — բոլորը համարյա միաձև են:

Բեռլինի արևմտյան մասում համարյա բոլոր փողոցներում խիտ կերպով տնկված են ծառեր: Ծառերը շարքով ձգվում են մայթերի յերկարութիւնով և կազմում են ծառուղի: Յերբեմն յուրաքանչյուր մայթի վրա տնկված են յերկու շարք ծառեր, և փողոցը վեր է ածված յերեք տակ ծառուղու: Յերբեմն ել բացի դրանից ծառերի շարքերը անցնում են նաև փողոցի միջով տրամվայի և ավտոմոբիլների ճանապարհի յերկարութիւնով: Այստեղ արդեն փողոցն էլ փողոցն չէ, այլ յերկար և նեղ պարտեզ:

Անցնենք Բեռլինի բանվորական թաղամասերը: Այստեղ ևս չքավորութիւնը կա, նա միայն թագնված է. դուք կհանդիպեք նրան, յերբ մտնեք նկուղները, վորտեղ վխտում են բանվորական ընտանիքները: Պատերը խոնավ են, գազը մուր է արձակում, ցուրտ և մութն է: Ժամանակը անպետքացրել է շատ շենքեր, յետապատերազմյան արհաւիրքները հնարավորութիւն չեյին տալիս վերանորոգելու այդ շենքերը, գործազրկութիւնը ավերել է յերբեմն հարմարավոր կերպով կահավորված բնակարանները: Դեռ այժմ ել, յեթե դուք վերցնեք Բեռլինի թերթերից մեկը և կարդաք պատահականների բաժինը, կգտնեք այնտեղ աշխատանքից զրկված և աղքատութեան ուրվականից սարսափած բազմաթիւ բանվորների և ծառայողների ինքնասպանութիւնների մասին հաղորդագրութիւններ: Իսկ քաղաքի կենտրոնական փողոցները փայլում են այդտեղի խանութների շքեղութեամբ, զարդարված կիսեմատողրաֆների փարթամութեամբ և թանգ ճաշարանների շոյալութեամբ:

Իրենց ժամանումից մի օր անց մեր յերեխաները իրենց նոր ընկեր կարլ կրաֆտի հետ շրջում եյին Բեռլինում: Նրանք կանգ առան անուշարանի պատահանների առջև և տեսան այն, ինչ վոր տեսել եր հայտնի գրող Վերա Ինքերը, այսինքն՝ Շոկոլադից պատրաստած զամբյուղների մեջ դրած են քաղցրով պատրաստած բանջարեղեններ՝ գաղար, գոնգեղ, շաղգամ, կարտոֆիլ և սալաթ: Այդ զամբյուղների առաջ լուռ հիացմունքով կանգ եյին առնում դպրոցներից վերադարձող յերեխաները: Շաղգամ և գաղար... Այն, ինչ նրանք տեսնում և ուտում են ամեն օր, սակայն ինչպիսի զարմանալի կատարելութեան հասցրած: Յերեխաները յերկար նայում եյին քաղցրով պատրաստած բանջարեղեններին և արմտիքներին: Վորքան քաղցր են նրանք... Ծիշտ ե, պատուհանում կա ելի մի բան վոչ պակաս քաղցր, բայց մի քիչ... ինչպես ասենք... մի խոսքով՝ դա շոկոլադե ձողիկներ են: Այդ ձողիկների փնջի ծայրերը արծաթագոծ են: «Մեծ անտակտութիւն է մեծերի կողմից այդպիսի խաղալիքներ հնարելը»... Անկասկած այսպես եյին մտածում Բեռլինի յերեխաները: Մեր մանուկները միանգամայն համաձայնվեցին նրանց կարծիքին:

Հարուստ ու շքեղ քաղաքի փայլով շլացած, նրա մարդաշատ փողոցների աղմուկից խլացած, մեր ճանապարհորդները հարցրին գերմանացի իրենց ընկերոջը.

— Ինչպես շքեղ են հագնված բոլորը ձեզ մոտ: Ինչպիսի հրաշալի խանութներ: Վորքան խաղալիքներ, շոկոլանդ, նարինջ, Դեհ, ասա մեզ, կան արդյոք ձեզ մոտ աղքատ մարդիկ:

Կարլը ծիծաղեց:

— Կան արդյոք մեզ մոտ աղքատներ... ան դուք, հիմար մանուկներ: Ինչպես հեշտ է ձեզ խաբելը: Սպասեցեք, յես հիմա կպատմեմ, թե կան արդյոք մեզ մոտ խեղճեր:

ԹՇՎԱՌՆԵՐ

— Մի բանվոր զրկվեց տեղից: Մեզ մոտ այժմ, դեռ բազմաթիվ գործազուրկներ կան: Յեւ ահա այդ գործազուրկը չքավորութեան պատճառով ել չեր կարողանում իր բնակարանի վարձը տալ: Նրան դուրս արին այնտեղից: Նա գնաց իրենց գյուղը. բայց վոչ մի տեղ ապաստան չունեց: Նա մտածեց, թե ի՞նչ անի: Նա մեկ մետր բարձրութեան 4 հատ սյուն թաղեց գետնի մեջ, նրանց վրա փռեց տախտակներ, իսկ տախտակների վրա՝ խոտ և ծղնոտ, իսկ բոլորի վրա զրեց մի քանի ծանր քարեր, վոր քամին չտանի ամբողջ կտուրը: Ձեզ մոտ այսպիսի բնակարաններ շինում են Գովկասում և Թուրքմենիստանում, բայց այնտեղ ստացվում են իսկական տներ. նրանց մեջ կարելի չե կանգնել, քայլել, աշխատել, հյուրեր ընդունել: Իսկ մեր հարևան Բաուերը իր տնկած սյուները պատեց տախտակներով և ստացվեց մեկ մետր բարձրութեամբ վորջ: Նրա մեջ կարելի չեր միայն նստել կամ պառկել հատակին. իսկ կանգնել չեր կարելի: Նա ներս ու դուրս եր սողում իր բնակարանից ինչպես կատու: Հատակին փռեց խոտ ու ծղնոտ: Մի անկյունը նրա սեղանատունն էր. այնտեղ նա պահում էր հացը: Ապրուստի փող Բաուերը աշխատում էր նրանով, վոր տանում էր քաղաք ծախելու այգիներից հավաքած ծաղիկներ և այլն: Ինչ, ձեր կարծիքով սա աղքատութուն չե՞:

— Ձեզ կպատմեմ ելի մի դեպք, վորը իմ յեղբայրը տեսել է մեր մեծ և անվանի Քյոլն քաղաքում: Քյոլնը — հին, գեղեցիկ քաղաք է Հոենոս գետի վրա: Մի անգամ բերում են այնտեղ ամբողջ մի վագոն նարինջ, բայց նարինջները ճանապարհին փչանում են: Դուք յերբևե հոտոտե՞լ եք փչացած նարինջներ: Նրանք սիրտ խառնող հոտ են արձակում: Փչացած ապրանքը թափում են ուղղակի շուկայի հրապարակում: Յեւ ահա, յերևակայեցեք, վրա յե հասնում յերեխաների մի ամբողջ խումբ: Որը մռայլ և

ցուրտ է լինում, փչում է խիստ քամի, իսկ յերեխաները՝ վոտարորիկ և պատառոտված հագուստով: Նրանք ագահաները սառչում են այն աստիճան, վոր նրանք այլևս չեն կարողանում մաքրել նարինջը, այլ ուղղակի յեղունգներով ճանկոտոտ են նրա կճեպը: Զարմանքով կարելի չեր տեսնել, թե ինչպես մանուկները կուլ ելին տալիս այդ հոտած ու փտած պտուղները: Մի փոքրիկ մանուկ գտնում է բավական լավ, առողջ մի նարինջ: Նա շատ ուրախանում է իր գյուտով, բայց իսկույն նրա վրա յեն հարձակվում ավելի մեծ տղաներ և խլում նրանից նարինջը: Մինչև ուշ գիշեր քաջքշվում են այստեղ յերեխաները և այնպես են մաքրում այդ աղբանոցը, ինչպես կմաքրեյին մի քանի լավ սրբողներ: Մանուկները չեյին շտապում տուն գնալ, վորովհետև լավ գիտեյին, թե ինչ է սպասում իրենց այնտեղ՝ ցուրտ, լերկ և կեղտոտ սենյակ: Մայրը հայհոյում է, հայրը կովում: Յեւ շուտով կգա վոստիկանութունը և կպահանջի նրանից տուգանք նարինջները գողանալու համար: Յնցոտիներ հագած այս յերեխաների մոտից անցնում են շքեղ հագնված պարոններ և կանայք. նրանք զգվանքով եյին նայում փոքրիկ վայրենիների վրա, վորոնք լափում եյին ինչ վոր հոտած բան: Այո, այս մարդիկ չգիտեն՝ ինչ բան է քաղցը:

— Բայց ի՞նչ գողութուն է դա, հարցրեց կոստյան: Ձե՞ վոր նարինջները թափած եյին և վոչ վոքի չեյին պատկանում:

— Ու, այդ տեսակետից մեզ մոտ շատ խիստ են, — պատասխանեց կարլը: — Ախր վոչ վոք չեր տվել հոտած նարինջները յերեխաներին. նշանակում է, նրանք սեփականացրին ուրիշի բարիքը (լավ բարիք է, խոսք չկա), այսինքն ըստ մեր որենքների գողութուն կատարեցին, վորի համար պետք է պատասխանեն թե մեծերը և թե փոքրերը: Մեր թերթերը գրում են, վոր այդպիսի պատ-

կերներ կարելի չե տեսնել միայն հետու Ձինաստանում կամ
Հնդկաստանում, իսկ բանից դուրս ե գալիս, վոր նույնպիսի
բաներ պատահում են մեծ և կուլտուրական քաղաքում:

Յերբ մեր ճանապարհորդները ավելի շատ մնացին Գեր-
մանիայում, ելի շատ նոր բաներ իմացան գերմանական
գյուղացիների և բանվորների յերեխաների մասին: Կոս-
տյան և Կոլյան անտարբերությամբ եյին անցնում զար-
դարված խանութների մոտից, վորոնց ցուցափեղկերում
ի ցույց եյին դրված ամեն տեսակ հաշիակար իրեր, բայց
Կառլի մեծ քույրը, խարտյաշ Աննան, յերկար եր նայում
գեղեցիկ ոճիքներին, անձեռոցիկներին և այլն: Ինչպես
պատահեց, նա մտավ խանութ և հարցրեց, թե ինչ արժե
փոքրիկ անձեռոցիկը կարմիր հաշիաներից կարած. նրան
պատասխանեցին. — յերեք և կես մարկ: Նա շատ զար-
մացավ և պատմեց Կոլյային և Կոստյային հետևյալ պատ-
մությունը:

Ամառը Աննան գնաց Սաքսոնիա յուր մորաքրոջ մոտ:
Մորաքրոջն ապրում եր Չեխո-Սլովակիայի սահմանի մոտ:
Դա մի շատ գեղեցիկ տեղ ե. կապույտ լեռներ, կտրտված
ժպտուն հովիտներով և արծաթափայլ առլակներով և գե-
տակներով: Սաքսոնիան հայտնի չե իր զարգացած արդյունա-
բերությամբ. մեծ քաղաքներում անտառի պես խիտ կանգ-
նած են ծխացող խողովակները, հովիտներում և լեռնե-
րում գտնվում են հանքեր, յերկաթագործական թղթի և
ստվարաթղթի գործարաններ: Ամբողջ ազգաբնակչությունը
ձգտում ե աշխատանք գտնել այդ գործարաններում: Հողը
այստեղ այնքան ել արգավանդ չե, վոր կարողանա կե-
րակրել յերկրի մեծ ազգաբնակչությունը: Սակայն բան-
վորների ստացածը շատ քիչ ե, և նրանց կանայք ու յե-
րեխաները հարկադրված են նույնպես աշխատել, վորպեսզի
տանելի ապրուստ ստեղծեն: Հին ժամանակներից Սաքսո-
նիայում զարգացել ե տնայնագործության ճյուղերից մեկը՝
հաշիագործությունը:

Յերբ Աննան տեղ հասավ, մորաքրոջը և նրա յերկու
աղջիկներին աշխատելիս գտավ: Նրանք նստած եյին հե-
նարանի առջև, վորի վրա դրված եր մի մեծ կոճ: Կոճին
ամրացրած եր հաշիայի նաշխի կաղապարը ստվարաթղթի
վրա: Թելերը փաթաթած եյին հաստ փայտե ձուլերին:
Նայելով մորաքրոջ և նրա աղջիկներին աշխատանքին, Ան-
նան զարմացավ, տեսնելով թե ինչպիսի արագությամբ
եյին նետում նրանք այդ ձողերը: Թվում եր, թե նրանք
խաղ անելով թխիթիկացնում են ձողիկներով ինչպես խե-
լագարներ: «Թող միայն աղջիկները կանգ առնեն, յես մի
քիչ կծիծաղեմ նրանց վրա, — մտածեց Աննան, — կտես-
նեմ ինչ հանգույցներ են խճճել»: Առանձնապես ծիծաղելի
յեր թվում նրան 12 տարեկան Միննայի աշխատանքը:
Աղջիկը խաղալով շարտում եր զանազան կողմեր 64 ձող:
Ձողիկների փայլը և նրանց անընդհատ չխկչխկոցը նման-
վում եր մանկական ուրախ խաղի: Բայց յերբ Միննան
կանգ առավ, Աննան կռանալով տեսավ նրա կոճի վրա
չափազանց գեղեցիկ հաշիայի մի փոքրիկ կտոր:

— Կեցցես, քույրիկս, — ուրախ բացականչեց Աննան, —
այդ վճռտեղ ես սովորել այդպես լավ հաշիա գործելը: Սա
ուղղակի ֆոկլոս ե:

— Վոչ մի ֆոկլոս, — ծիծաղելով առարկեց Միննան. —
մեր աղջիկները 7 տարեկան հասակից գնում են հաշիայի
դպրոց: Սակայն դու չկարծես, վոր դա իսկական դպրոց ե,
վորտեղ սովորեցնում են հաշիա գործել: Դա ամենեին
դպրոց չե, այլ արհեստանոց: Այնտեղ, իհարկե, սովորե-
ցնում են աղջիկներին հաշիա գործելը, սակայն իսկույն
եթ ստիպում են նրանց աշխատել աղաների համար: Մենք
7 կամ 8 տարեկան հասակից որական շատ ժամեր պետք ե աշ-
խատենք աղայի համար և դրա համար նրանից ստանում ենք
ռոճիկ: Նա մեզ շատ քիչ ե վճարում — մեկ մետր հաշիայի հա-
մար 30 պֆեննիգ (մոտ 14 կոպ.): Այժմ մենք տանն ենք աշ-
խատում մայրիկի հետ: Այստեղի համարյա բոլոր կանայք

և աղջիկները տանը կատարելու աշխատանք են վերցնում աղաներից, թե ինչքան ենք աշխատում դրա վրա, վոչ վոքի չի վերաբերվում: Մենք կարող ենք վաստակել ժամում 4 կոպեկ, իսկ մեծահասակ կանայք 7 կոպեկ: Յեվ այսպես նստում ենք ու աշխատում լուսաբացից մինչև լուսաբաց կռացած, և փչացնում ենք աչքերս:

Միննան ընծայեց Աննային մի հիանալի անձեռոցիկ իր շինածներից, վորի համար նրա աղան կտար 12 կոպեկ: Իսկ Բեռլինում նա ծախում է այդ անձեռոցիկների հատը 1 ռ. 40 կոպ., այսինքն աղջկա աշխատանքից շահում է 1 ռ. 28 կոպեկ:

— Դուք չկարծեք, — ավելացրեց Աննան, — վոր միայն հաշիագործներն են այդպես աշխատում: Ուրիշ տեղերում կանայք տուն են տանում պատրաստելու սպիտակեղեն: Յերեխաները, տղաներ և աղջիկներ, կպցնում են կոճակները, նշանակում կոճակների տեղերը, անց են կացնում յերիզները: Ընդհանրապես մեզ մոտ շատ է տարածված մանկական աշխատանքը: Յերեխաներն ոգնում են մեծերին գյուղական աշխատանքներում և վոչ միայն իրենց ծնողներին: Նրանք շատ անգամ վարձվում են կալվածատերերից և հարուստ գյուղացիներից կարտոֆիլ փորելու, բանջարեղեն հավաքելու, կալսելու և այլ աշխատանքներ կատարելու: Մինչև պատերազմը գյուղատնտեսության մեջ աշխատում էր մոտ մեկ միլիոն յերեխա՝ մինչև 12 տարեկան: Այժմ, հավանորեն, այդ թիվը չի պակասել: Այդ աշխատանքների համար վճարում են նրանց կոպեկներ — 30—60 կոպեկ որական 8 կամ 10 ժամյա աշխատանքի համար:

Մեր գյուղական յերեխաները հորինել են նույնիսկ մի շատ ցավալի յերգ, թե ինչպես աշնանային ցուրտ առավոտներին շատ վաղ զարթեցնում են նրանց, վիւր հանում իրենց ծղնոտե ներքնարկներից, ստիպում են շտապով ձգել վրան վորևէ փալաս, վոտները կոխել փայտե վոտնաման-

ների մեջ և շտապ հասնել կալվածատիրոջ աշխատանքին: Այնտեղ նրանք ամբողջ ուրը կռացած անդադրում պոկոտում են մոլախոտերը կամ հավաքում ճակնդեղը, և այդ բոլորից հետո տրվում է նրանց ինչ վոր գրվելի և ջրալի սուպ:

Քաղաքի յերեխաների աշխատանքն էլ քիչ չէ: Նրանք ամբողջ ուրը հեծանիվներով կրում են հարուստ պարոնների գնած իրերը կամ գրասենյակի տիրոջ հրամանով



Նկ. 9. Բեռլինում դեռահասները բաժանում են կաթը գնորդներին:

ցրում են ծրարներ, ոգնում են ծնողներին արհեստի և առևտրի մեջ: Դպրոցականներից շատերը դասերից հետո տուն վերադառնալով մինչև ուշ գիշեր պետք է հասնեն և թղթից ծաղիկներ շինեն կամ պապիրոս լցնեն ծախելու համար, փոխանակ ընկերների հետ բախում վազվզելու և խաղալու:

Բեռլինում և այլ խոշոր քաղաքներում շատ փոքրահասակներ ժամը 6-ից մինչև 12-ը բեմ են դուրս գալիս թատրոններում և կինեմատոգրաֆներում: Բեռլինի կինոների ծրագրերում բացի պատկերից լինում են նաև վորեն փոքրիկ պլես կամ բալետ և դրանց ե, վոր մասնակցում են յերեխաները, ստանալով իրենց համար ֆլասակար գիշերային այդ աշխատանքի համար չափազանց աննշան վարձատրություն: Վերջապես, քաղաքի յերեխաները ցրում են թերթերը, ինչպես այդ անում են Ֆեվրոպայի և Ամերիկայի մյուս բոլոր յերկրների յերեխաները:

ԲԵՌԼԻՆԻ ՑՈՒՅՑԸ

Արդեն մի շաբաթ ե, ինչ Կոլյան և Կոստյան ապրում եյին Կերմանիայում: Այդ ժամանակամիջոցում նրանք շատ բան լսեցին և շատ բան տեսան: Նրանք տեսան բանվորական մեծ ցույցը, վոր կազմակերպվեց Գերմանական կոմունիստական ուժեղ կուսակցության ձեռքով, վորպես բողոք աշխատավարձի իջեցման և պետական մասնավոր ձեռնարկությունների բանվորների կրճատման դեմ: Գործադրկության և բանվորների ցածր աշխատավարձը մեծ հուզում առաջացրեց գերմանական աշխատավորական մասսայի մեջ, դրա համար ել Բեռլինի Ամառային այգում՝ Լյուստգարտենում, Կոստյայի և Կոլյայի տեսած ցույցը զարմանալի յեր. ցույցին մասնակցում եր մոտ մեկ քաղորդ միլիոն մարդ: «Մեզ համար շատ հետաքրքիր եր գերմանական ցույցը տեսնելը», գրում եյին հետո մանուկները տուն ուղարկած իրենց նամակներում:

Նման դեպքերում հարևան թաղամասերից սկսած մինչև ցույցի վայրը սովորաբար շարված են լինում վոստիկանության շարքերը: «Շուցմանները» (վոստիկաններ) կապույտ մոնդիրներով, հավաքվում են դեպքի վայրը ավտոմոբիլներով, յերկհարկանի հանրահառքերով, հեծանիվներով, մոտոցիկլետներով և ձիերով: Նրանք զինված են

լինում սրերով և հրագեններով և ամեն բանում յենթարկվում են իրենց առաջնորդներին, վորոնք պատրաստ են զինված ուժի դիմելու ամեն մի հեղափոխական շարժում ճնշելու համար: Վոստիկանների շարքերի միջով շարժվում են զինվորական քայլածքով դիսցիպլինայի սովորած գերմանական բանվորները: Յուցարարներն ունենում են իրենց յերաժշտախմբերն ու յերգեցիկ խմբերը, կազմված մեծերից և փոքրերից, վորոնք նվագում և յերգում են աշխատանքի և պալքարի կրակոտ, աշխույժ և վոգեորիչ յերգեր: Մայթերի վրա խռնվում ե անկազմակերպ ամբոխը, վորը հետաքրքրությամբ կամ յերկյուղով նայում ե ցուցարարներին: Պիոներները, ֆրոնտովիկների կամ յերիտասարդական միությունների անդամները այս կամ այն կողմ վագելով բաժանում կամ ծախում են կուսակցական թերթեր, լրագրեր ե պատկերազարդ հրատարակություններ: Յուցարարները կանգ են առնում հրապարակում: Նրանք չեն խռնվում անկարգ կերպով, այլ կազմում են կանոնավոր շրջան, ուղղանկյուն և այլն: Մի քանի ճառախոսներ միասին հրապարակի զանազան անկյուններում խոսում են, կանգնելով արձանների, շատրվանների կամ քարե ցանկապատերի վրա: Ճառախոսի յերկու կողմում լարի պես ձգված կանգնում են վոստիկաններն ու հսկում նրան և ամբոխին: Ծածանվում են դրոշակները, վեր բարձրանում գեղարվեստորեն պատրաստված լոզունգներ և պլակատներ: Արդեն 8 շաբաթ ե իմ հայրը չի աշխատում, և մեզ տաք պալատները — կարդում ենք մի պլակատ, վորի մի կողմում նկարված ե կապույտ բլուզով մի բանվոր, իսկ մյուսում՝ փառահեղ կայսերական պալատ: Պլակատը բռնել ե 12 տարեկան մի տղա՝ պիոներական կարմիր փողկապով: Գերմանական կոմունիստները ուսական բանվորների բարեկամներն են: Գիշերը գաղտնի

կերպով նրանք տպարաններում տպագրում են թերթիկներ, վորոնց մեջ նկարագրում են Կուսակցության խորհրդի Միությունից վերադարձած անդամների տպավորությունները և տարածում են լայն մասսաների մեջ նրանք խՍՀՄ պաշտպանում են նրա թշնամիների ամեն տեսակի հարձակումներից և պահանջում են իրենց կառավարությունից բարեկամական հարաբերություն պահպանել մեր Միության հետ: Նրանց դրոշակը կարմիր է, մուրճ ու մանգաղով: «Այս դրոշակի համար, ասում են նրանք, մենք պետք է կռվենք, մինչև տապալենք կապիտալիստական հանրապետությունը և հաստատենք պրոլետարական դիկտատուրա»: Կուսակցության պաշտոնական թերթը «Ռոտե Գանե» («Կարմիր դրոշ») անունն է կրում. որական հարյուր հազարավոր որինականերով ատրածվում են առյթ թեթ առավոտյան չկարողանաս գնել լրագրական կիոսկում այդ թերթը, կեսորին նա արդեն սպառված է լինում: Բացի նրանից Գերմանիայում կան ելի 25 կոմունիստական թերթեր:

Նամակ գրելով տուն, մանուկները շատ պարտացան, վոր կարողացան հաղորդել իրենց հարազատներին և հարևաններին այդքան հետաքրքիր նորություններ:

— Ի՞նչ ես կարծում, Կոլյա, — ասաց մտախոհ Կոստյան, — մի գեկուցում ել չուղարկենք դպրոց վորեւ բանի մասին: Ի՞նչ կդարմանա Ալեքսանդրա Պավլովնան: Ախր նա չի հավատում, վոր մենք արտասահմանից հետներս կտանենք այնքան պատմություններ և նկարներ:

Յերկար տատանումներից հետո նրանք վճռեցին կազմել և ուղարկել դպրոց մի գեկուցում՝ «գերմանական բանվորների կյանքը»: Ահա այդ գեկուցումը:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Մինչև պատերազմը քաղաքային վորակյալ բանվորների դրությունը վատ չէր: Գերմանիան հարստանում էր,

ձեռնարկատերերը մեծ ոգուտներ եյին ստանում և բանվորներին ել վորոշ բաժին էր հասնում: Գերմանուհի կոմունիստը գրում է. «Վորակյալ բանվորը ստանում էր այնքան, վոր ինքն ու ընտանիքը կարողանում էյին ունենալ բավարար քանակությամբ սննդարար կերակուր՝ միս, յուղ, ձու, կաթ և բակլայի սուրճ:

Անվորակ բանվորներն ապրում էյին ավելի վատ, այնուամենայնիվ կուշտ էյին և հագնված: Վատ վիճակի մեջ էյին գյուղական բատրակներն ու առանձնակյաց կանայք, վորոնք ստանում էյին չնչին աշխատավարձ»: Պատերազմը մեծ փոփոխություններ մտցրեց, քանի վոր ժողովրդական տնտեսությունը քայքայվեց. դրությունը վատացավ, սնունդը անբավարար դարձավ, կարելի չէր ձեռք բերել միայն վատ հաց, վատ բանջարեղեն և շինծու յուղ: Սակայն մարդիկ դեռ ապրում էյին հին պաշարով: Պատերազմից հետո վրա հասած առաջին տարիները բերեցին իրանց հետ վորոշ թեթևություն մի շարք ընտանիքների համար: Կառավարչական և բուրժուական շրջաններին հարկավոր էր շտապ կերպով վերականգնել քայքայված պետական և մասնավոր ձեռնարկությունները, վորի համար պահանջվում էյին բանվորական շատ ձեռքեր: Գործազրկությունն սկսեց սաստիկ նվազել, և քաղաքային պրոլետարները կարող էյին ազատ շունչ քաշել: Սակայն այս թեթևությունը յերկար չշարունակվեց. Գերմանիայի դրամական տնտեսությունը վերին աստիճանի քայքայվեց, և մական տնտեսությունը վերին աստիճանի քայքայվեց, և մարկը (գերմանական դրամական միավոր) ավելի և ավելի մարկը (գերմանական դրամական միավոր) ավելի և ավելի վորցնում էր գինը: Բոլոր առարկաները սաստիկ թանկացան, և 1923 թվականի աշնան սկզբին նույնիսկ ամենավորակյալ բանվորները իրանց աշխատավարձով չէյին կարողանում գնել բավարար չափով սննդամթերքներ իրանց և ընտանիքի համար: Ունեցած միջոցներով նրանք կարող էյին կերակրվել միայն կարտոֆիլով, մի քանի ամենաքածո գին ունեցող բանջարեղեններով և թեփախառն վատ

հացով: «Ուսածի կտորը, լուցկին, թանաքը, տետրակը բան-
վորական ընտանիքում դառնում են թանգարժեք բաներ»,
գրում են ահանատեսները այդ ժամանակի մասին: Բան-
վորների ուժից վեր ի նույնիսկ տրամվայներով գնալը,
և նրանք ստիպված էյին Բեռլինի հսկայական տարածու-
թյուններն անցնել վոտքով: Հարկ յեղով նույնիսկ կրճատել
տրամվայների շարժումը, վորովհետև վագոնները պատվում
էյին դատարկ: Մայրաքաղաքում և մեծ քաղաքներում
բանվորական թաղամասերը լուսավորվում են գազով, կե-
րակուրն ել յեփում են գազով տաքացող պլիտաների վրա:
Չքավոր ազգաբնակչության ուժից վեր դարձավ գազի հա-
մար վճարելը, և նա իրիկունները նստում եր մթության
մեջ, իսկ կերակուրը մի կերպ պատրաստում ածուխով և
տաշեղներով: Անպետքացած հագուստը նորով փոխարինելու
հնարավորություն բոլորովին չկար»:

Կին հեղինակ Լարիսսա Ռեյսները այդ տարիներում
բանվորների կանանց մասին պատմում է հետևյալը:

«Այն կանայք, վորոնք վոչինչ չունեն ուտելու, վո-
րոնք վաղը դուրս կնետվեն իրանց բներից, տոն որերի
նախորդակին հավաքվում են միասին, վորպեսզի փախած
կոմունիստների յերեխաների համար կարեն մի քանի տիկ-
նիկ: Մեկը շինում է տիկնիկների համար տնակ հին արկղ-
ներից, կպցնելով նրանց վրա լրագրեր և վագուց գործա-
ծությունից հանված խաղաթղթերի քրքրված թագավորներ
և աղջիկներ: Սոված հարևանները գալիս են նվերներով,
բերում են ոճառի մի կտոր, տիկնիկ, մի գույգ գուլպա:
Վերջապես, գիշերը Համբուրգից գալիս է բանվորների ջո-
կատը, բերելով իր հետ մի սայլակ ալյուր և մարգարին
(արհեստական յուղ): Ամերիկայի ընկերներն ել ուղարկել
են յուղ և շաքար: Այդ բոլորը բաժանվում է 70 ընտա-
նիքի, վորոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 3—5 մար-
դուց: Ծննդից մի քանի որ առաջ Կովը այնպիսի չափերի
յե հասնում, վոր հոլանդական բանվորներն առաջարկում

են՝ ուղարկեցեք մեզ գերմանական յերեխաներից 50 հոգի,
մեր ընտանիքների մեջ բաժանելու համար:

Գուռը թակում են: Գալիս են բանվորները և վոչ վոքի
չնայելով հարցնում են յեղանակի, առողջության և այլ
դատարկ բաների մասին: Սակայն մայրն ու յերեխաները
գիտեն, թե նրանք ինչու յեն յեկել: Մայրը չոր աչքերով
հարցնում է՝ վորին կվերցնեն — աղային թե աղջկան և
ինչ հասակի: Նրանք պատասխանում են, վոր թե աղային
և թե աղջկան: Պատրաստություններին տրվում է քա-
ռորդ ժամ, իրեր միենույն է չկան: Մի քանի րոպե աղ-
ջիկը հուսակտուր լալիս է, պահելով գլուխը մոր դողդո-
ղացող ծնկների մեջ: Սակայն չուկիկներն արդեն հագցրած
են, կոշիկները խնամքով կոճկված, և մայրը շտապ սան-
րում է աղջկա խճճված մազերը: Այսպիսով ^{1/4} ժամում
յերեխաները պատրաստվում են ճանապարհ ընկնելու:

Այս բոլոր աղետները մեծ շարժում առաջացրին բան-
վորների մեջ: Հեղափոխության ալիքները ուժգին հորձանք
էյին տալիս 1923 թ. և բուրժուազիան յերկյուղ եր կրում,
վոր չի կարողանա ճնշել բանվորական շարժումը: Յեւ
խկապես առանձին շրջաններում — Թյուրինգիայում, Սակ-
սոնիայում — բանվորներն սկսեցին խոշոր ազդեցություն
ունենալ հասարակական և պետական կյանքի վրա: Սակայն
կառավարության և բուրժուական կուսակցություններին
հաջողվեց ժամանակավորապես կասեցնել հեղափոխական
շարժման ծավալումը: Մարկի գինը դադարեց ընկնելուց:
1923 թ. հետո աշխատավարձը միքիչ բարձրացավ: Բայց
բանվոր դասակարգի կյանքի մեջ արմատական փոփոխու-
թյուններ դեպի լավը չեղան: Ամենից առաջ գերմանական
պրոլետարիատը տառապում է անընդհատ աճող գործազր-
կությունից: 1925 թ. վերջին գործազուրկների քանակը
հասնում եր մոտ 700 հազարի, 1926 թ. սկզբին՝ արդեն
կես միլիոնի, 1927 թ. — յերկու միլիոնի, իսկ այժմ 1931 թ.
նա հասնում է 5 միլիոնի:

Այդ սոսկալի և որեցոր աճող գործադրկության զլխա-
վոր ու հիմնական պատճառներն են, մի կողմից, համաշ-
խարհային տնտեսական ճգնաժամը, վոր ծավալվում է բո-
լոր կապիտալիստական պետություններում, իսկ մյուս կող-
մից — այսպես կոչված կապիտալիստական ռացիոնալիզա-
ցիան, վորը տնտեսելով կապիտալիստների ծախսերը իրենց
ձեռնարկումների վրա և ավելացնելով նրանց միլիոնավոր
շահերը, ծանր հարված է հասցնում բանվոր դասակարգին։
Գործադրկության անընդհատ աճման հետ միաժամանակ
որեցոր վատթարանում է աշխատող բանվորների դրու-
թյունը. աշխատավարձը անընդհատ կրճատվում է. կապի-
տալիստները բուրժուական կառավարության ոգնությամբ
և գերմանական սոցիալ-ֆաշիստների (բանվոր դասակարգին
դավաճանած սոցիալ-դեմոկրատների) աջակցությամբ որե-
ցոր ավելի ու ավելի ծավալում են իրենց հարձակումը
բանվոր դասակարգի դեմ։ Աշխատավարձը կրճատվում է,
աշխատանքային օրը յերկարացվում, կյանքը թանգանում է,
տուրքերն ու հարկերը աճում, բնակարանների վարձը բար-
ձրանում է, գործազուրկներին տրվող չնչին նպաստները
կրճատվում են և նույնիսկ բոլորովին վերացվում. կապի-
տալիստական կառավարությունը մի շարք դիկտատորական
որենքների միջոցով և սոցիալ-ֆաշիստների ոգնությամբ
անխնա կեղծքում ու կոլոպտում է բանվորներին ու աշ-
խատավորներին և միլիարդներ է շարտում զրահանավերի
կառուցման և իմպերիալիստական նոր պատերազմի նա-
խապատրաստության համար։

Բանվորների թվի կրճատման և բանվորական որվա յերկարացման հետևանքով առաջացած ուժասպառությունից ձեռնարկներում շատացավ դժբախտ դեպքերի թիվը։ Այսպես որինակ՝ Գրուսիայի լեռնային արդյունաբերություն մեջ 1923 թվականին բանվորների հետ պատահել են դժբախտ դեպքեր 55 հազար, իսկ 1925 թվականին՝ արդեն 113 հազար։

փոխառութիւն, բայց նրա անտեսութեան գլխավոր աղբյուրները պահում են իրանց հսկողութեան տակ: Պարտքերի ֆնացած մասի վճարման համար նշանակում են նոր ժամկետեր:

Դառուսի և ապա նրան հաջորդած Յունդի պլանը (1929 թ.) ամրապնդեց գերմանական բուրժուազիայի դրութիւնը և ոգնեց նրան վերականգնելու քայքայված արդյունաբերութիւնը՝ ստացած վարկերով: Սակայն այդ պլանը ևս անտանելի դարձրեց Գերմանիայի բանվոր դասակարգի դրութիւնը: Պարտքերի վճարման ամբողջ ծանրութիւնն (Գերմանիան պիտի վճարի քսան միլիարդ մոսկով) ընկավ բանվոր դասակարգի վրա: Բացի դրանից բուրժուազիան ձգտում է շահ ստանալ ի հաշիվ բանվոր դասակարգի: Վորպեսզի բանվոր դասակարգը չկարողանա շատ ապրանքներ գործածել, և այդ ապրանքները գնան դրսի շուկաները, բուրժուազիան իջեցրեց աշխատավարձը և թանկացրեց ապրուստի միջոցները, իսկ իր շահը ապահովելու համար յերկարացրեց բանվորական ուրը:

Յեւ անա մենք տեսնում ենք, վոր չնայած գերմանական արդյունաբերութեան դրութեան լավացմանը, բանվորների դրութիւնը շատ ավելի ծանրանում է և նույնիսկ ավելի փաթարանում, համեմատած մինչպատերազմյան դրութեան հետ: Դրա համար զարմանալի չէ, վոր 1927 թվականին Գերմանիայում նորից բարձրանում է գործադուլային շարժման ակիւքը: Միայն հոկտեմբեր ամսին տեղի յե ունենում քաղաքային յերկաթուղիների, փայտամշակման, զարեջրի գործարանների բանվոր-ծառայողների և, վերջապես, 60 հազար հանքագործների գործադուլները, վորոնք պահանջում էին աշխատավարձի բարձրացում: Բանվորները կովում են իրանց իրավունքների համար կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ, վորի ազդեցութիւնն ու հեղինակութիւնը որեցոր աճում են ազգաբնակչութեան աշխատավոր դասակարգերի մեջ:

Վերջին տարիներս բանվորական հեղափոխական շարժումը Գերմանիայում աճում է հսկայական չափերով: Ռուրի հանքափորերի, շինարարների և պրուետուրական ալ շոկատների հսկայական գործադուլները, յերկար շարք հեղափոխական ցույցերն ու յելույթները Գերմանիայի գրեթե բոլոր մասերում, սոցիալ-դեմոկրատական բանվորների մասսայական փախուստը այդ դավաճան կուսակցութեան շարքերից կոմունիստական կուսակցութեան կարմիր դրոշակի տակ, Գերմանիայի կոմկուսի մեծ հաղթանակը 1930 թ. աշնանը — ռայխստագի ընտրութիւնների ժամանակ — այդ բոլորը վկայում է, վոր Գերմանիայի բանվոր դասակարգը հեռու չէ վերջին ու վճռական մարտի դուրս գալուց հանուն Խորհրդային Գերմանիայի:

Զուր չէ, վոր գերմանական բանվորները այնչափ վառ հետաքրքրութիւն են տածում դեպի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնները: Միութիւնը, շարունակ պատգամավորներ են ուղարկում մեզ մոտ ծանոթանալու մեր կյանքին, յուրացնելու մեր փորձը:

Դպրոցում նոր էյին սկսել պարապմունքները, յերբ ստացվեց Կոլյայի և Կոստյայի ընդարձակ նամակը: Նամակում գրված էյին նկարներ գերմանական թերթերից և գեկուցումը, վոր կազմել էյին նրանք գերմանական բանվորների մասին: Յերեխաները զարմացել էյին իրանց դասվորների մասին: Յերեխաները լրջութեան վրա, իսկ ուսուցչուհիներների աշխատանքի լրջութեան Սիման և Ոլյան վորոշեհին հիացած եր: Այդ ժամանակ Սիման և Ոլյան վորոշեհին, վոր իրանք տղաներից պակաս չեն և հայտնեցին, վոր ցանկանում են նույնպես մի գեկուցում գրել, միայն չգիտեն՝ ինչի մասին: Իհարկե, Ալեքսանդրա Պավլովնան ուրախացավ և պատասխանեց.

— Յես ձեզ կկարդամ և կպատմեմ համաշխարհային պատերազմի մասին—1914—1918 թ.թ. և այլն, թե ինչպես տուժեց Գերմանիան այդ մեծ պատերազմից, իսկ դուք հետո կգրեք գեկուցում:

Աղջիկները համաձայնեցին: Այդքանդրա Պավլոֆնան զասերից հետո մի ժամով պահեց նրանց դպրոցում և համառոտ պատմեց համաշխարհային պատերազմի մասին:

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1914 թվականին սկսվեց պատերազմը, վոր վոչ միայն փոխեց Յեվրոպայի քարտեզը, այլև խոշոր նշանակություն ունեցավ ամբողջ աշխարհի համար: Հարկ չկա հարց տալու, թե վոր պետությունն էր պատերազմի հեղինակը:

Բոլոր բուրժուական պետությունները — Անգլիան, Ֆրանսիան, ցարական Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրիան — մտածում էին վաղ թե ուշ պատերազմ սկսել իրանց հարևանների դեմ, վորպեսզի նրանց հաշվին կարողանան ավելի մեծանալ և հզորանալ: Մնում էր միայն ընտրել դրա համար ամենահարմար բուպեն:

Բոլոր պետությունների մեջ կային ուժեղ զինվորական կուսակցություններ, վորոնք իրանց պետություններին և հասարակությանը յեռանդուն կերպով դրդում էին պատերազմ սկսել: հարցը վերաբերում էր վոչ ավել, վոչ պահաս աշխարհի բաժանմանը: Ռուս գեներալներն ու ռուսական բուրժուական յերազում էին խորտակել Տաճկաստանը (Գերմանիայի դաշնակիցներից մեկը), գրավել Պոլիսը և նեղուցները, վորոնք Սև և Եգեյան ծովերից տանում են Միջերկրական ծովը, և ամբողջ Բալկանյան թերակղզին յենթարկել իրենց ազդեցությունը: Անգլիան և Ֆրանսիան ձգտում էին խլել Գերմանիայից նրա գաղութները Աֆրիկայում և Ասիայում և թուլացնել նրա արդյունաբերությունն ու նավատորմը, վորպեսզի միանգամ ընդմիջտ ազատվեն վտանգավոր հակառակորդից: Գերմանիան, դաշնակցելով Ավստրիայի և Տաճկաստանի հետ, յերազում էր ավելացնել իր գաղութները և ընդլայնել իր համաշխարհային ազդեցությունը: 1914 թ. ամառը «բարը զլորվեց», ինչպես արտահայտվել է գերմանական միլիտորը, և ամ-

բողջ աշխարհը բռնկվեց պատերազմական հրդեհի բոցերով: Գերմանիայի կողմն էին չորս պետությունները, իսկ նրա դեմ էին 27: Բոլոր յերկրների կառավարությունները խոստանում էին իրանց ժողովրդին արագ և վճռական հաղթություն և անհամար ոգուաներ՝ քիչ գոհերով: Բոլոր յերկրների սոցիալ-դեմոկրատները դավաճանեցին բանվոր դասակարգին և, բուրժուազիայի հետ համաձայնած, տարվեցին պատերազմական խանդով ու խելացնոր վոգևորություն: Վոչ վոք ուշադրություն չդարձրեց այն ժամանակ դեռ փոքրաթիվ կոմունիստների նախազգուշացումներին, վորոնք նախագուշակում էին, վոր յեղբայրասպան պատերազմը կբերի մեծագույն արհավիրքներ և թշվառություններ: Ժողովրդական մասսաները իրանց առաջնորդների խոստումներից շլացած և նրանց ռազմատենչ պրոպագանդայից խելքները կորցրած հրճվում էին պատերազմի անունը լսելիս: Այսպես սկսվեց աշխարհիս ամենամեծ վողբերգությունը:

Չորս տարի և յերեք ամիս ծանր և դաժան պատերազմը ցամաքի, ծովի վրա և ողում, Յեվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում: Համաձայն վերջին հաշիվների, պատերազմական գործողությունների ժամանակ կորցրել են.

Յերկրներ	Սպանված և անհետ կորած	Ծանր խեղանդամված
Գերմանիա	2.000.000	1.537.000
Ռուսաստան	1.700.000	755.000
Ավստրո-Վենգրիա	1.542.000	հայտնի չէ
Ֆրանսիա	1.400.000	1.500.000
Իտալիա	750.000	800.000
Անգլիա	744.000	900.000
Միացյալ Նահանգներ	68.000	157.000

Այս աղյուսակի մեջ չեն մտնում բոլոր պատերազմող յերկրներում սովից, հիվանդություններից և քաղաքացիական կոիվներում կորածները: Իսկ այսպիսի մահացու-

Թյունների թիվը չափազանց մեծ է: Միայն Գերմանիա-
յում սովից մեռածների թիվը հաշվում են 763 հազար, իսկ
այդ սովը առաջացավ Գերմանիայի ավերը Անգլիայի կող-
մից նավապաշարման յենթարկվելու հետևանքով: Անգլիան
բոլոր ծովերում լողացող հզոր նավատորմի տեր լինելով,
թույլ չեր տալիս սննդամթերքներ մուծել այն յերկրները,



Նկ. 10. Գերմանական զինվորական գերեզմանոցներից մեկը, վորը խաչերի
մի անտառ է:

Վորոնք կռվում էյին իր դեմ, անցած թշնամու կողմը:
Այդ սարսափելի տարիներում յեղած մարդկային կորուստ-
ների ընդհանուր գումարները դուրս բերելը դեռ մինչև
հիմա յել դժվար է: Ինչ վերաբերում է պատերազմի հե-
տևանքով բոլոր յերկրներին հասած վնասներին, նրանք
նույնպես չափազանց մեծ են. հնարավորութուն չկա հաշ-
վելու, թե զանազան ժողովուրդներ վորքան պաշարներ և
հարստություններ են կորցրել, կարելի յե միայն մոտա-
վորապես հաշվել, թե վորքան են ծախսել զանազան կա-
ռավարություններ պատերազմական կարիքների համար:
Պատերազմող բոլոր պետությունները պատերազմը առաջ
տանելու համար դրամ էյին վերցնում կամ Հյուս. Ամե-
րիկայի Միացյալ Նահանգներից, կամ Անգլիայից, կամ իրանց
քաղաքացիներից: Յեթե համեմատելու լինենք արտաքին
(ուրիշ պետությունների) և ներքին (իրանց քաղաքացի-
ների) պարտքերի քանակը 1914 և 1919 թվականներին,
այսինքն պատերազմից առաջ և հետո, ապա կպարզվի,
վոր բոլոր պատերազմող պետությունները մեծացրել են
իրանց պարտքերը վորը յերեք, վորը հինգ, վորը տասն
անգամ: Նույնիսկ ուրիշներին պարտք տվող Անգլիան ավե-

լացրեց իր պարտքերը տասն անգամ: Հետևաբար, կարելի
յե ասել, վոր պատերազմը բոլոր յեվրոպական, թե
հաղթող և թե հաղթված, պետությունների համար մի սոս-
կալի դժբախտություն էր: Առանձնապես հաղթվածների
համար աննկարագրելի յե այդ դժբախտությունը, ինչպես
կտեսենք Գերմանիայի որինակից (տես աղյուսակը):

Կովող պետությունների պարտքեր միլիոն դոլարներով

Յերկրներ	1914 թ.	1919 թ.
Անգլիա	3.458	36.457
Ֆրանսիա	6.598	30.494
Իտալիա	2.632	12.177
Ռուսաստան	5.092	67.362
Միացյալ Նահանգներ	1.208	23.266
Գերմանիա	1.165	38.521
Ավստրիա	2.277	17.072
Վենգրիա	1.989	8.707
Տաճկաստան	666	1.823

Գերմանիայի կորուստները նամախարհային պատերազմից հետո
Քաղաքական

Միլիարդ տոննա	% Գերմանիայի մինչև պատերազմը ունեցած պաշարի նկատմամբ
Անցավ Լեհաստանին	146,0 35,6
Սաարի շրջան	16,5 4,0
Ուրիշ խված շրջաններ	17,5 2,6
Ռուրի շրջան	213,6 52,1
Մնաց Գերմանիային	23,4 5,7

Նախապետարգմ.

Գերմանիայում
ընդամենը կար 410,0

100,0

Գյուղատնտեսություն

	Միջինը 1910— 14 թ.	Միջինը 1920— 22 թ.	Կրճատում %-ով	
			Ընդա- մենը	Այդ թվում հողամասեր կորցնելուց
Ցանքերի մակարդակը միլ. հեկտար.				
Ցորեն	2,0	1,4	30	14
Հաճար	6,3	4,2	33	19
Գարի	1,6	1,1	31	20
Վարսակ	4,4	3,2	27	13
Կարտոֆիլ	3,5	2,6	26	20
Բերքը միլիոն տոննաներով				
Ցորեն	4,2	2,4	44	14
Հաճար	11,1	5,7	49	19
Գարի	3,3	1,8	46	20
Վարսակ	8,6	4,7	46	13
Կարտոֆիլ	45,5	31,1	52	20

Այսպիսով գերմանական ժողովրդական տնտեսության գլխավոր կորուստները կարելի չէ ներկայացնել հետևյալ աղյուսակով:


Գերմանիայի քարտեզն ել փոխվեց: Մինչև պատե-
րազմը Գերմանիան համարվում էր առաջնակարգ ար-
դյունաբերական յերկրներից մեկը վոչ միայն Յեվրո-
պայում, այլ և ամբողջ աշխարհում: Պատերազմից հետո
ամբողջ յերկիրը ծանր կորուստներ կրեց, վորոնք չեյին
կարող չանդրադառնալ արդյունաբերության զանազան ճյու-
ղերի վրա: Յերկաթահանքերով հարուստ Ելզաս-Լոտարին-
գիայի կորուստը, Սաարի ածխային շրջանի, իսկ հետո նաև
Ռուրի ժամանակավոր գրավումը, զաղութների բաժա-

նումը ամբողջ ժողովրդական տնտեսության լուրջ ցնցում-
ներ առաջացրին:

Փոխանակ ինքը քարածուխ և մետաղներ արտահանե-
լու, Գերմանիան ստիպված էր ներմուծել այդ հանքերը
արտասահմանից, բայց քանի վոր նրա դրամական միջոց-
ները զգալի չափով պակասել էյին, արդյունաբեր-
ության համար հարկավոր քանակությամբ հանքեր գնելը
նույնպես անհնար դարձավ: Մի շարք Փաբրիկներ և գոր-
ծարաններ ստիպված էյին դադարեցնել կամ կրճատել
աշխատանքը: Առևտուրը մեռավ. գերմանական ապրանք-
ներ գնող գաղութները բաժանվեցին մյուս պետություն-
ների միջև, վորոնք այդ որվանից իրանց ապրանքներն էյին
ծախում նրանց: Առևտրական նավատորմը, վորը բեռների
մեծ քանակություն էր տանում ուրիշ յերկրներ, համարյա
չեղածի հավասարվեց, վորովհետև հաղթողները պահանջե-
ցին իրանց հանձնել բոլոր նավերի ⁹/₁₀ մասը, թողնելով
գերմանացիներին միայն փոքր և ամենավատ նավեր:
Մինչև պատերազմը իր նավատորմով յերկրորդ տեղը գրա-
վող յերկիրը հանկարծ մնաց շատ չնչին քանակությամբ
շոգենավերով, վորոնք աչքի էյին ընկնում իրանց հնացած
տեխնիկայով:

Սակայն կենսունակ և աշխատասեր ժողովուրդը տեն-
դային թափով և մեծ յեռանդով կպավ գործի, վերականգ-
նելու իր քայքայված բարորությունը, և շատ կարճ ժա-
մանակամիջոցում հասավ չտեսնված հաջողությունների:
Չնայած բոլոր կորուստներին, հաղթող յերկրների ոգտին
կատարվող հսկայական վճարումներին, չնայած նոր շրջան-
կատարվող հսկայական վճարումներին, չնայած նոր շրջան-
ների՝ Սաարի և Ռուրի ժամանակավոր գրավումին, Գերմա-
նիան նորից վերասարքավորեց իր ձեռնարկությունները
արդյունաբերության զանազան ճյուղերում, այսինքն դրեց
արդյունաբերության վեկի կատարելագործված մե-
ավելի ուժեղ շարժիչներ, ավելի կատարելագործված մե-
քենաներ և գործիքներ: Նա ուղղմական գործարանները
վերածեց գյուղատնտեսական մեքենաներ պատրաստող

գործարանների, աննախընթաց չափով զարգացրեց ելեկտրոտեխնիկական և քիմիական արտադրությունը: Մի խոսքով, յերկիրը զգալի չափով կազդուրվեց իր ստացած սարսափելի վերքերից: Բայց իհարկե, գերմանական արդյունաբերությունն ու ժողովրդական տնտեսությունը դեռ նախապատերազմյան մակարդակին չեն հասել (մոտակա տարիներում այդ անհնար է՝ կրած ծանր կորուստների պատճառով), և ներկայումս համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով Գերմանիայում ևս աշխատավոր




Նկ. 11. Գերմանական էլեկտրոմեխանիկական գործարան: Արտաքին տեսքը՝

մասսաները մեծ զրկանքներ են կրում. արդյունաբերությունը հեղհեղեղ է ընկնում և, բանկերը սնանկանում են, խոշոր գործարաններն ու ֆաբրիկաները փակվում են ու բանվորները դուրս շարտվում...

— Ալեքսանդրա Պավլովնա — ասաց Ուլյան լացակուժած (ճիշտն ասած, Ուլյան յերբեմն սիրում էր մի քամքմել), այդ բոլորը, ինչ վոր հիմա դուք մեզ պատմեցիք, շատ դժվար է. չե՞ք տա, արդյոք, մեզ կարդալու ավելի հետաքրքիր մի բան համաշխարհային պատերազմի մասին:

Ալեքսանդրա Պավլովնան հետևյալ անգամ բերեց յերեխաների համար հետաքրքիր պատմվածքներ:



Նկ. 12. Աշխատանքը էլեկտրոմեխանիկական գործարանների սրահներին մեկուսի:

Համաշխարհային պատերազմին գերմանական բանակները ջարդվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Իտա-

լիայի և ուրիշ շատ պետությունների միացյալ ուժերով: Ծանր զրկանքներից և պատերազմից ուժասպառ յեղած յերկրում բորբոքվեց հեղափոխությունը՝ կոմունիստների (նախկին «Սպարտակ» կուսակցության) ղեկավարությամբ: Այդ հեղափոխությունը ղեկավարում էին Կարլ Լիբքնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը: Կայսրը զահրնկեց արվեց, զինվորներն ու բանվորները կռվում էին հանրապետության համար: Գերմանական հեղափոխությունը տեղի ունեցավ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունից մի տարի հետո — 1918 թվականի նոյեմբերի 6-ին, սակայն յերկար չտևեց. իշխանությունը կայսրից անցավ սոցիալ-ֆաշիստների ձեռքը. դրանք իրենց զիրքերը ամրացնելու համար, սպանեցին Կարլ Լիբքնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին և ապա հաստատեցին յերկրում բուրժուական հանրապետություն:

Գերմանական այդ առաջին հեղափոխությունից հետո, շարունակեց Ալեքսանդրա Պավլովնան, բանվորական հեղափոխական շարժումներին յեռանդուն մասնակցություն և ոժանդակություն է ցույց տալիս «Կարմիր Ֆրոնտովիկների Միությունը», վորը համակրող է կոմունիստական կուսակցության: Հիմնվելով 1924 թվականին, նա, վորպես հեղափոխական պրոլետարիատի պաշտպանության կազմակերպություն, իրեն նպատակ է դրել բանվորական մասսաների դասակարգային ինքնագիտակցությունը ուժեղացնել և վառ պահել նրանց մտքում պատերազմի հիշատակը, հակազդելու իմպերիալիստական նոր պատերազմների ոգտին մղվող նացիոնալիստական պրոպագանդային: «Կարմիր Ֆրոնտովիկների Միությունը» նույնպես չի ընդունում ամեն տեսակի անլեգալ (անորինական) զինում և նրանից հետո, յերբ վոստիկանությունն արգելեց նրան մահակներ անգամ ունենալ, չունի փաստորեն վոչ մի ուրիշ զենք, բացի «Կարմիր Ֆրոնտի» լոգոնգներից և իր 150 — 180 հազար անդամների բռունցքներից: Նրա անդամների կեսն է միայն կոմունիստ, իսկ մյուս կեսը անկուսակցականներ են: «Կար-

միր Ֆրոնտովիկների Միությունը» կոմունիստներին համակրողներին ընդգրկելու համար առայժմ գլխավոր կազմակերպությունն է հանդիսանում:

Գերմանիայի ժամանակակից բանվորական շարժման կազմակերպությունների և միությունների մեջ, վորոնք շատ են տուժել պատերազմից, մտնում է գերմանական քսան միլիոնանոց պրոլետարիատի 50—60%-ը: Ուղիղ ղեկավարության և հմուտ ոգտագործման ղեպքում ինչպիսի հսկայական ուժ դասակարգային պայքարի նպատակների իրագործման համար:

Գերմանական բուրժուազիան կազմակերպել է հինգ մեծ և մեկ փոքր քաղաքական կուսակցություն: Այդ կազմակերպությունների ոգնությունը նա աշխատում է իր ձեռքում պահել միջին և բանվորական խավերի ընտրող մասսաների ղեկավարությունն ու պարլամենտը (ռայխստագ): Իսկ բանվոր դասակարգը փաստորեն ունի միայն մեկ կուսակցություն — կոմունիստական կուսակցությունը:

Թեև կա նաև սոցիալ-դեմոկրատական կուսակցություն (մենշևիկները), վորը վորպես թե բանվորների շահերն է պաշտպանում, բայց իրականում նա բանվոր դասակարգի շահերը վաճառում է բուրժուազիային և վերջինիս կամակատարն է. այդ կառավարությունը բուրժուազիայի հրամանով նախապատրաստում էր պայմաններ, վորպեսզի կապիտալիստական պետությունների զինվորական ուժի ոգնությունը ներս խուժեն մեր յերկիրը և հին կարգերը վերականգնեն: Գերմ. սոցիալ դեմոկրատիայի ագենտները մեզ մոտ բռնվեցին, բացվեց նրանց վնասարարությունը, ամբողջ աշխարհի առաջ մեր դատարանը ցույց տվեց դրանց իսկական պատկերը:

Կոմունիստական կուսակցությունը Գերմանիայում ներկայումս ունի 170 հազար անդամ և $3\frac{1}{2}$ միլիոնից ավելի համակրողներ:

ՄԵՐ ԾԱՆՈԹՆԵՐԸ ՃԱՄԲՈՐԴՈՒՄ ԵՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ի վաճառքի է հայտնեց տղաներին, վոր նա գնում է կիլ և Համբուրգ և նրանց ել տանում է իր հետ: Յերեխաներն, իհարկե, մեծ ուրախությամբ ընդունեցին այդ լուրը:

Յերբ նրանք շոգենավով անցնում էին Կիլի ջրանցքով, հիացած էին արևից փայլող տախտակամածի մաքրությամբ, սքանչացած՝ իրանց նավասենյակով, վորը ներկված էր սպիտակ գույնով: Գնում էին նրանք Յ-րդ կարգով: Նրանց հետ ճանապարհորդում են պիոներ Կարլի հայրը՝ ընկեր Կրաֆտը, վորը լավ տիրապետում էր ռուսերենին: Նա սիրով զրույց էր անում փոքրերի հետ:

— Գերմանացիք կարգ ու կանոն շատ են սիրում, վորով և աչքի յեն ընկնում: Այդ կարելի չէ տեսնել ամեն բանում. քաղաքների փողոցները մաքուր լվացած են, այո, այո, թող զարմանալի չթվա: Ամեն առավոտ նրանց լվանում են: Ուստի և դուք մեզանում չեք տեսնի փոշու այն ամպերը, պատառուված թղթերի այն բլուրները, կեղևը, գլանակների փնջորդները, վորոնք այնպիսի առատությամբ թափված են ֆրանսիական, իտալական և, ավանդ, ձեր ռուսական քաղաքների փողոցներում: Գերմանիայով անցած սովետական մի գրող այսպես է նկարագրում Կիլի ջրանցքից ստացած իր ապավորությունները, այն ջրանցքից, վորը ձեզ հետ հենց նոր անցանք:

«Կիլի ջրանցքը, ծովագնացության այս միջանցքը, վորի յերկարությունն է 93 կիլոմետր, իսկ լայնությունը համարյա 2 անգամ նեղ է մեր Նեվա գետից, վերաշինված և ավարտված է շատ մոտ անցյալում, 1914 թվականին, պատերազմից առաջ: Անցել է 12 տարի, և այստեղ-այնտեղ քարերը մոզայիկի պես պոկվում և գլորվում են ջուրը: Սակայն գերմանացիք ճշտապահ են ու բարեխիղճ. նրանցից ամեն մեկը քաղաքացու պարտականություն է համարում պահպանել ընդհանուրը: Ասենք վոմն Հանս յուր բավականության համար վելոսիպեդով յեկել է կարթերով

ձուկ բռնելու, այնուամենայնիվ, միաժամանակ ձգելով 10—11 կարթ և խնդրելով հարևան ձկնորսին հետևել նրանց, ինքը թամբում է պողպատե ձին (այսինքն հեծանիվը) և հասնում մոտակա հսկիչին: Նա անհրաժեշտ է համարում ասել նրան.

— Պարոն հսկիչ, այստեղից յերեք կիլոմետր այն կողմ ջնկել են ջրանցքի յեզրային քարերից յերկուսը:

— Շնորհակալ եմ ձեզնից, յերիտասարդ, պատասխանում է նրան հսկիչը. ինձ հենց հիմա, ձեր գալուց մի քիչ առաջ հաղորդեցին այդ մասին: Յես արդեն շաղախել եմ ցեմենտը, հավաքել գործիքները, պահեստի քարեր ել տեղում կան, և յեթե իմ ներկայությունը անհաճո չի լինի ձեզ համար, յես պատրաստ եմ հետևելու ձեզ:

Յերկուսն ել՝ ձկնորսն ու հսկիչը, նստում են հեծանիվները և արագությամբ սլանում են Կիլի ջրանցքի յերկարությունը հարթ շավղով: Շարժումը հեծանիվներով ամենատարածվածն է այստեղ, և չկա մի ընտանիք, վորը չունենա մեկ կամ յերկու հեծանիվ: Ահա յերեք գեղջկուհի տարրիմակ հնաձև գլխարկներով յերկրագործական դամբյուղները թևերին հեծանիվներով գնում են աշխատելու իրանց դաշտերում: Նրանցից յերկուսն արդեն հասան, դրեցին հեծանիվները թփերի մեջ և իրանց գամբյուղներով դիմեցին դեպի չորանալու համար խոտը շուռ տվող կանանց խումբը:

Կիլի ջրանցքում շոգենավերն այնքան շատ են, վորքան կառավարները մեր մեծ քաղաքների փողոցներում, այնպես վոր նրանց վրա շատ քչերն են ուշադրություն դարձնում. միայն խորհրդային նավերն են, վոր մի քանի տարի յե ինչ գեղջկուհիների դեմքին բարեխիղճ և քաղցր ժպիտ էր խաղացնում. նրանց ձեռքերը ակամա բարձրացնում են վեր թաշկինակները, իսկ գեղջուկները լայն թափահարում են իրանց գլխարկները: Առաջին անգամ այս կողմերն ընկած խորհրդային ճանապարհորդին ամեն ինչ

նոր և չտեսնված ե պատկերանում: Նայած տարվա յեղանակին նրա աչքերի առաջից հերթով կանցնեն գերմանական յերկրագործական կյանքի զանազանակերպ պատկերներ: Ուրախ և ճարպիկ տրակտորը քրքրում ե հին խոտով ծածկված գորշ կարմրավուն խամ հողը: Մյուս դաշտում քառակուսի տարորինակ մեքենան ցանում ե չիլիական սելիտրայի փոշին (բորակը), պարարտացնելով հողը և տառնապատկելով հացի ապագա հունձը, իսկ ավելի հեռութեթե շոգեքարշի յետևից ատամնավոր անիվների վրա գնում ե շարքացանը և մեխանիկական ցաքանը: Շնորհիվ լայն մեքենայացման, աշխատանքը դաշտերում մի քանի օրվա ընթացքում ավարտվում ե, բոլոր մնացածը թողնվում ե ժամանակին, արևին և անձրևին: Սակայն գերմանացին խելացի յե, նա շատ չի հավատում արևին և անձրևին: Նույն տրակտորի ոգնությամբ, սակայն մի քիչ փոխված, նա սկսում ե ակոսներ փորել, վոր յերաշտի ժամանակ վողոգե, իսկ խիստ անձրևային յեղանակին չորացնե դաշտը:

Ամառը մարգագետիններում արածում են հողլանդական ցիդի կովերի պարարտ նախիրներ, վորոնց հովիվները փաստորեն շներն են: Մի քանի նախիրն տրվում ե մի անասնաբուժ, վորը հեծանիվով որական մի քանի անգամ մոտենում ե իրեն հանձնված յուրաքանչյուր նախրի և շատ լավ գիտե, թե վորքան, ինչպիսի կեր և յերբ պետք ե ստանան անասունները, վորպեսզի մեծանա կաթի վորակն ու քանակը, գիտե, թե ցեղային անասունների ամենալավ տեսակներ ստանալու համար ինչ պետք ե անել: Կերի արհեստական փոփոխման միջոցով կաթին տրվում ե վորոշ բուժիչ հատկություն:

Իսկ աշնանը մենք կարող ենք տեսնել բերքահավաքի չտեսնված արագությունը, շնորհիվ դարձյալ նույն մեքենայացման, յերբ հունձի խուրձեր կապելու և նրանցից դեզեր շինելու ամբողջ պրոցեսը կատարվում ե բացառապես մեխանիկական ճանապարհով:

Սորհրդային ճանապարհորդը տարվա բոլոր յեղանակներին կտեսնի Կիլի ջրանցի վրա ձգված գարմանալի և անսովոր բարձրության կամուրջներ. կտեսնի և կգարմանա: Այդ կամուրջներով մեծ զորդոցով անցնում են արագընթաց եկսպրեսներ (գնացքներ), իսկ նրանց տակից աղատ անցուղարձ են անում մեծ նավեր, աշխարհում ամենաբարձր կայմերով: Նրան կգարմացնեն ելեկտրական լատանավերը, ջրանցքի ափերին գտնվող հսկա խրաղացները և այնպիսի պայծառ լուսավորություն, վորի նմանը նա յերբեք չի տեսել իր հայրենիքում:

— Հայրիկ, ասաց Կոստյան, իսկապես վոր գերմանական գյուղերը շատ մաքուր և հարուստ տեսք ունեն, իսկ դաշտերը ծածկված են առատ բերքով: Հիշում ես, մեր Յակովը պատմում եր, վոր շատ բան ե սովորել գերմանացիներից, յերբ վորպես բատրակ աշխատել ե այստեղի գյուղացիների մոտ:

— Իսկ քո հորյեղբայրը ի՞նչպես ե դարձել գերմանացի գյուղացու բանվոր, գարմացավ Կոյլան:

— Նա յեղել ե պատերազմական գերի և վեց տարի անց ե կացրել Գերմանիայում. նա նույնիսկ բավական լավ խոսում ե գերմաներեն: Այժմ նա իրանց գյուղում առաջավոր գյուղացիներից մեկն ե համարվում:

— Այդ ճիշտ ե, Կոստյա, ասաց Իվան Նիկիտիչը: Մինչև պատերազմը գյուղատնտեսությունը Գերմանիայում գարգացման շատ բարձր աստիճանի վրա յեր գտնվում. մտցրած եր դաշտավիթության սիստեմ. հանգստի թողնվում եր վարելահողի միայն 5%ը: Հողի մշակության համար գործադրվող մեքենաների թիվը ավելացել եր, հողը առատությամբ պարարտացվում եր և տնտեսության բերքատվությունը բարձրանում: Պատերազմը, ինչպես գիտեք, ծանր հարվածներ հասցրեց գյուղատնտեսությանը, սակայն գերմանացիք իրանց համառ աշխատանքով անում են այն ամենը, ինչ կախված ե իրանցից, վոր վոչ միայն կանգնեցնեն

արտադրութեան հետագա անկումը, այլև դնեն նրան բարձր աստիճանի վրա: Վերջին տարիներում ազգաբնակչութեան անդուլ աշխատանքը սկսեց տալ իր պտուղները. տնտեսութեան և արդյունաբերութեան բոլոր ճյուղերում նկատվում է բեկումն դեպի լավը: Հատիկներն ու կարտոֆիլը Գերմանիայում վերամշակում են և տալիս սպիրտ, գինիներ, ռսլա, շաքար: Անասնապահությունը մինչե պատերազմը ուժեղ չափով զարգանում էր, ըստ վորում աճում էր վոչ միայն անասունների քանակը, այլև լավանում նրա տեսակները: Պատերազմը այստեղ ևս սոսկալի վնաս հասցրեց պետութեանը: Սովի տարիներում անասունների մի մասը մորթվեց, մի մասը վոչնչացավ կերի բացակայութեանից, մի մասն էլ պետք է հանձնվեր Ֆրանսիային և Բելգիային վորպես փոխատուցում պատերազմական գործողութեանների ժամանակ նրանց կրած վնասների: 1919 թվականի սկզբին անասունների թիվը Գերմանիայում խիստ կրճատվեց, սակայն վերջին տարիներս գերմանական անասնապահութեանը սկսում է կազդուրվել կրած ցընցումներից:

Ուշադրութեան արժանի հանգամանք է նաև այն, վոր Գերմանիայում համարյա չեն մնացել անտառներ իրանց բնական ձևով, ինչպիսիք մենք սովոր ենք տեսնելու մեր Միութեան մեջ: Գերմանական անտառները ներկայացնում են ինանցից լավ մաքրված, խնամքով պահված պարտեզներ, վորոնց խնամում են հմուտ և փորձված անտառապահներ: Անտառանյութերը մշակվում են գործարաններում:

Գերմանիայում բոլոր գյուղական ճանապարհների յերկարութեամբ տնկված են պտղատու ծառեր, և վոչ մի գյուղացի մանուկ չի սլոկի թեկուզ մի խնձոր և չի կոտրի վոչ մի ճյուղ: Վոք վոք չի տրորում ծաղկանոցները, վոչ վոք չի թալանում բանջարանոցները:

Ճանապարհին կոլյան և կոստյան տեսան բազմաթիվ ամարանոցային գեղեցիկ տնակներ, վորոնց մոտ մեծերը

պարապում եյին ֆիզկուլտուրայով, իսկ յերեխաների խմբակները խաղում եյին: Ընկեր Կրաֆտը բացատրեց մանուկներին, վոր Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում ազգաբնակչութեան բոլոր խավերը բռնված են մի ձգտումով՝ շաքարովա վերջին (շաքար յերեկոյան և կիրակի որը) դուրս պրծնել խեղդուկ քաղաքներից. — գրասենյակներից, գործարաններից և արհեստանոցներից, վոր պեսզի կարողանան ժամանակ անցկացնել բաց ոդում, բնութեան ծոցում: Գերմանիայում ել, ինչպես և մի շարք



Նկ. 13. Ամառային տնակներում, վոր շինել են իրանց համար բանվորները:

այլ յերկրներում — Ֆրանսիայում, Լեհաստանում, Ավստրիայում, Չեխո-Սլովակիայում և այլն — կան «բնութեան բարեկամների» խմբակներ: Այդ ընկերութեան անդամները, վոր պատկանում են բանվոր դասակարգին, իրանց սեփական աշխատանքով շինել են մի շարք հանգստյան տներ լեռնային գեղեցիկ վայրերում, ուր գնում են իրանց ընտանիքներով տարվա բոլոր յեղանակներին սպորտի և զբոսանքի:

Սպորտով խիստ տարված են Հին և Նոր աշխարհները: Բուրժուազիան և բանվորները, քաղաքն ու գյուղը հետա-

քրքրությամբ կարդում են սպորտային հաշվետվությունները և մասնակցում են, յեթե միայն այդ հնարավոր է, սպորտային խմբակներին: Կառավարությունը յուր կողմից սպորտի մեջ տեսնում է միջոց, վորով կարելի յե վոչ միայն բարձրացնել ազգաբնակչության առողջութունը, այլև առնան ռազմական թեքում, ուստի և միջոցներ չի խնայում «ֆիզկուլտի պալատներին» համար: շինում է և լավ կահավորում ընդարձակ շենքերը մարմնամարզական վարժությունների, լողի, վազքի և բազմապիսի սպորտային խաղերի համար: Այդ հաստատություններին կից լինում են




Նկ. 14. Ամառային զառութ ընկնող մանուկների համար, Միջոցներ տալիս են բանվորական միությունները:

լճեր, հրապարակներ, փոքրիկ մարզագետիկներ, սահաբաններ և այլն:

Մեր տղաների համար ժամերն անցնում էյին աննկատելի, և անհրաժեշտ արդեն մոտենում էյին Համբուրգին: Այս հսկայական ծովափնյա քաղաքը, վոր Յեվրոպայի լավագույն նավահանգիստներից մեկն է, նրանց վրա անջնջելի տպավորություն թողեց: Այդ քաղաքի մասին պատմենք հայտնի հեղինակ՝ Լ. Ռեյսների խոսքերով:

Շնավահանգստի վրա բարձրանում են ամենամեծ բարձրացնող լծակներն աշխարհում: Նրանց ստորոտում,

ինչպես խաղալիքներ, ընկած են անդրադարձնող նավերը բոլորովին պատրաստ, ապակե կլոր պատուհանների լուսավորված շարքերով (իլյումինատորներով): Ջրային գծից ներքև նրանք այլանդակ են ջրից հանված կարապետների պես, վորոնք նույնպես ունեն ստորջրյա այդպիսի տգեղ մաս: Այստեղ աշխատում են անխիղճ լավածությամբ, յերեք հերթի: Այստեղ գերմանական բուրժուազիան բանվորներին չարաչար շահագործելով իր ոգտի համար, ստեղծում է նոր արժեքներ, բնակեցնում է ովկիանոսը յուր




Նկ. 15. Կառուցվող ովկիանոսային նավ:

ապիտակ նավերով, վորոնց ծխնելույզները սև գույնով են ներկվում և վորոնց յետևի կողմում ծածանվում է գերմանական հին դրոշակը:

Այստեղ Համբուրգում չես տեսնի յերկինքը. նրա տեղ կանգնած է գործարանների ծխնելույզներից բարձրացող ծուխը, կախված են վեր հանող լծակների կնճիթները, վորոնց ոգնությամբ յերկաթե մամոնաները դատարկում են նավերը և լցնում քարյա պահեստները, ձգվում են թեթև կամուրջները: Լսվում են շշակների վռոնացը, ով-

կիանոսի մակընթացութիւնն ու տեղափոխութիւնը, վոր ծիւանքով խաղ եւ անում ջուրը թափված անպետք իրերի հետ։ Բանվորական բանակներ գիշեր ցերեկ աշխատում են այստեղ, նրանք զբաղված են նավաշինարաններում, բարձում և դատարկում են նավեր, աշխատում են մետաղագործական, նավթամշակման և քիմիական անհամար գործարաններում, մի քանի խոշոր մանուֆակտուրաներում (արդյունաբերական ձեռնարկութիւն) և ընդարձակ կառուցումների վրա, վորոնք անընդհատ ծածկում են Համ-



Նկ. 16. Նավաշինարան։

բուրգի ավազոտ և ճահճոտ շրջակայքը բեռոնե և պողպատե կեղևով։

— Հիշում եք, յերեխաներ, ասաց Իվան Նիկիտիչը. Զոն Կարլովիչը Մոսկվայում ձեզ պատմում եր* անգլիական նավաշինարանների մասին, Լիվերպուլի մասին։

— Այո, սակայն այժմ միայն, յերբ մենք մեր սեփական աչքերով ենք տեսնում այդ ամենը, հասկանում ենք, թե այն ժամանակ ինչ եր ասում նա։

* Տես այս հրատարակութան մեջ — «Անգլիա»։

— Շուտով մենք կմեկնենք Գերմանիայից և վատ չեր լինի, յեթե մենք հիշեցինք, թե ինչ լավ և ինչ վատ բան այստեղ տեսանք։ Մենք տեսանք և լսեցինք աշխատավորների թշվառութեան մասին և վերջնականապես համոզվեցինք, վոր այդ թշվառութիւնը անքակտելի կապերով կապված ե կապիտալիստական կարգերի հետ և բղխում ե նրանից։ Մենք տեսանք տեխնիկայի բարձր զարգացում, մաքրասիրութիւն, կարգապահութիւն, և մենք պիտի այդ ուղղութեամբ շատ բան սովորենք գերմանացիներից։ Դուք ինչպե՞ս եք կարծում, յերեխաներ։

— Այո, հայրիկ, ասաց Կոստյան։ Գերմանացիք կարողանում են պահպանել իրանց և հասարակական գույքը։ Ինչպիսի խնամքով և բարեխղճութեամբ ե պահպանվում կիլի ջրանցքը։ Ինչպե՞ս մաքուր են տրամվայները, գնացքները, կայարանները և զբոսավայրերը։ Յես համաձայն եմ այն ուռւ ճանապարհորդի հետ, վորն ասել ե, թե այստեղ չկա վոչինչ պատառոտած, ջարդոտած և թքոտած։ Ամեն ինչ մաքուր ե, կարգին, նոր և անվնաս։

— Այդ ճիշտ ե, սակայն դա չնչին բան ե համեմատած այն հսկայական աշխատանքի հետ, վոր կատարում ե պարտված և պատերազմից քայքայված Գերմանիան յուր ավերված տնտեսութիւնը վերականգնելու համար։ Դուք այժմ տեսաք Համբուրգում հսկայական նավաշինարաններ։ Դուք գիտեք արդե՞ն, վոր մինչև պատերազմը գերմանական առևտրական նավատորմը անգլիականից հետո բռնում եր յերկրորդ տեղը ամբողջ աշխարհում։ Պատերազմից հետո այդ նավատորմը համարյա վոչնչացվեց և բռնեց տասներեքերորդ տեղը։ Բայց հիմա գերմանական առևտրական նավատորմի ուժը աճում ե առասպելական արագութեամբ։ Նավաշինութեամբ այժմ Գերմանիան նորից արդեն գրավում ե յերկրորդ տեղն աշխարհում։ Յես ե մնում նա միայն Անգլիայից և յետ ե թողնում իրանից մյուս բոլոր յերկրները։ Նավերի քանակով Գերմանիան

արդեն հասնում ե Թրանսիային և Յապոնիային, այս յերկու-
ուժեղ պետութիւններին: Յեւ ինչ վոր արված ե նա-
վերի վերաբերյալ, նույնը արված ե նաև շոգեկառքերի
նկատմամբ:

Հաղթող յերկրները խլեցին գերմանացիներից համարյա
բոլոր շոգեմեքենաները: Սակայն յերեք և կես տարում
Գերմանիան վոչ միայն ծածկեց այդ բոլոր վնասները,
այլև անցավ նախապատերազմյան իր մակարդակից: Այդ
ամենը տեսնելով, նրա թշնամիները այժմ նորեն տնտե-
սական հարձակում են գործում Գերմանիայի վրա, հրա-
ժարվում են նրան փոխառութիւններ տալ, պայման դնե-
լով՝ «Թշնամացիք Խորհրդային Միութեան հետ, նրա հետ
առևտուր մի արա», և կամ՝ «փոխիք ջո վերաբերմունքը
դեպի Լեհաստանը», վորը Խորհրդային Միութեան կատարի
թշնամիներից մեկն ե: Յեւ ընդհանուր տնտեսական
խիստ ճգնաժամի հետևանքով, Գերմանիայում ևս սնան-
կանում են բանկերը, փակվում գործարաններն ու ֆաբրիկ-
ները, բանվորները դուրս շարտվում:

Գերմանիան կանգնած ե նոր, պրոլետարական հեղա-
փոխութեան շեմքին. դա միայն կփրկի նրան կապիտա-
լիզմի ճանկերից:

ՖՐԱՆՍԻԱ

Իվան Նիկիտիչը վերջացրեց իր գործերը Գերմանիայում
և պետք ե գնար Թրանսիա: Կոստյան և Կոլյան պետք ե
հրաժեշտ տային իրանց գերմանացի ընկերներին: Նրանց
ամենասիրելի բարեկամը՝ Կարլ Քոխը, ի պատիվ հեռացող
ռուս ճանապարհորդների իր պիտներական կուլեկտիվի
հանդիսավոր նիստ հրավիրեց, վորին մասնակցում եյին
նաև կոմունիստական մանկական կազմակերպութեան մեջ
դեռ չմտած «համակրող» յերեխաներ: Վորպեսզի վրա
չհասնեն ուսուցիչներն ու վոստիկանութիւնը, նրանք
զաղտնի* հավաքվեցին՝ Բեռլինի ծայրամասում գտնված
փոքրիկ և եժան ճաշարաններից մեկի յետևի մասում:
Յերկու պիտներ պահակ կանգնեցին լրագրավաճառի մեծ
կիսակի մոտ, շինված փողոցի անկյունում: Պահակներն այն-
պես եյին ցույց տալիս, թե հետաքրքրութեամբ դիտում
են նկարագարված թերթերի շապիկները, բայց փաստորեն
հետևում եյին այն ամենքին, վորոնք դիմում եյին դեպի
ճաշարանը, վորտեղ զումարված եր ժողովը: Նրանց վար-
տիքների գրպաններում պահված եյին հատուկ սուլիչներ,
զեղեցիկ ցելլուլոյդե թռչնակներ վառ գույնի փետուրնե-

* Կոմունիստական մանկական խմբակները թեև արգելված
չեն Գերմանիայում, այնուամենայնիվ նրանց անդամների հետ
պատահում են զանազան անախորժութիւններ:

րով, գերմանական մանուկների սիրած խաղալիքը: Փչիբ ալդախի սուլիչը և կլսես ներդաշնակ մի ճովողուն: Այդ ճովողունը պետք է նախազգուշացներ ճաշարանում հավաքված յերեխաներին վերահաս վտանգի մասին, վորպիսին հանդիսանում էին շուքմանը կամ դպրոցի ավագ վերակացուն: Բակում, ժողովի սրահի մուտքի առջև յերկու մանուկ յեռանդով շինում էին թղթե ֆուռան: Սակայն այդ ևս լուկ մի պատրվակ էր: Այս յերկու յերեխաների իսկական նպատակն էր ժողովի յեկող յերեխաներից հարցնել պայմանական խոսքը (պարոլ): Այսոր պայմանական խոսք հանդիսանում էին հետևյալ բառերը. «Հաջողությունը թող ուղեկցե մեր ուռա հյուրերին»:

Կոստյան և Կոլյան չափազանց հուզված էին այս խորհրդավոր շրջապատից և իրենց համար կազմակերպված այս անկեղծ ուղեկցումից: Գերմանացի կարմիր ու առողջ աղջիկները բողբոջ գործված բաճկոններով և տղաները նավաստու զգեստով նստած էին կարգով յերկար սեղանի շուրջը, վոր ծածկված էր պտուղներով, թխվածքով և կակաոյի գավաթներով: Նրանք դիմավորեցին մեր յերեխաներին գերմանական պիտներական քայլերգով, ապա լարված տրամադրությունն անցավ և բոլորը ազատ սկսեցին զրույց անել ուռա հյուրերի հետ:

— Դուք այժմ գնում եք Ֆրանսիա, — ասաց Երիխը, բարձրահասակ, 14 տարեկան մի տղա. — այնտեղ աշխատեցեք լինել ֆրանսիական պիտներների մոտ, մենք ձեզ կտանք մի նամակ մեր յերեք ընկերների հասցեյով, վորոնց հետ մեր կազմակերպությունը կապ է պահում: Մոտ ժամանակներս այդ տղաները մեզ այցելեցին, մեզ նվեր բերին իրանց թերթն ու իրանց ասեղնագործած դրոշակը: Չորս տարի սրանից առաջ, յերբ մենք այստեղ սովի էինք մատնված, նրանց կազմակերպությունն ուղարկում էր մեզ սննդամթերքներ՝ բաժանելու ամենաչքավոր յերեխաներին:

Կոստյան, մի փոքր վախվախելով և խճճվելով գերմաներենի մեջ, շնորհակալություն հայտնեց Երիխին, վերցրեց նամակն ու ֆրանսիական պիտներների հասցեները: Սրահում ներկա յեղող յերեխաներից ամենամեծերը պատմեցին մեր յերեխաներին, վոր մանկական կոմունիստական խմբերը Ֆրանսիայում կազմվել են 1921 թվականին և յերկու տարուց հետո նրանց թիվը հասել է մոտ 3000-ի: Պիտներական կազմակերպությունները ընդգրկեցին միայն քաղաքի մանուկներին: Կիրակի և հինգշաբթի պարապմունքից ազատ որերին, հավաքվում էին մանկական խմբակները, խաղում էին, յերգում, նկարում և կարդում: Կիրակի որերը կազմակերպվում էին եքսկուրսիաներ՝ դեպի անտառ և դաշտ, ըստ վորում փոքրիկ եքսկուրսանտներին կազմակերպությունը տալիս էր ձրի նախաճաշ: Սկզբում պիտներական խմբակների պարապմունքները քիչ բովանդակալից էին և կտրված էին կուսակցության և պատանեկան խմբակների խնդիրներից: Սակայն սկզբնական այդ շրջանում ևս ֆրանսիական պիտներները կատարեցին կարևոր և ոգտակար գործ. նրանք յեռանդուն ոգնություն էին ցույց տալիս փոքրիկ գերմանացիներին այն ամիսներում, յերբ Գերմանիան տնտեսական խոշոր կրիզիսի մեջ էր և նրա ազգաբնակչությունը սովի յեր մատնված, 1924 թվականից սկսած ֆրանսիական պիտներների դեկավարությունը իր վրա յե վերցնում կոմսոմոլը:

Այդ ժամանակից մանկական կոմունիստական խմբակները Ֆրանսիայում սկսում են ոգնել իրանց յերկրի կուսակցականներին և կոմյերիտականներին աշխատանքին: Պիտներներն ունեն իրենց պատկերազարդ հանդեսը՝ «Պատանի ընկեր», վոր տպվում է 6000 որինակ: Այդ հանդեսն այնքան հետաքրքիր է յերեխաների համար, վոր սկսեցին հրատարակել ավելի հաճախ՝ վոչ թե ամիսը, այլ յերկու շաբաթը մեկ անգամ: Փոքրիկ կոմունիստներն ունեն իրանց առանձին մանկական տունը 500 հոգու հա-

մար, վորտեղ դաստիարակվում են ֆրանսիական բանվոր-
ների ազատութեան համար մղված կռիւց տուժածների
տղաներն ու աղջիկները: Մանկական կոմունիստական
խմբակները կապ են պահում գերմանական և ռուսական
պիոներների հետ: Նրանց նշանադրեստն է կարմիր գլխարկը
մուրճով ու մանգաղով (խորհրդային գինանշան): Նրանք
մեծարում են Լենինին և ռուսական հեղափոխականներին և
աշխատում են նրանց նմանվել:

Պիոներները տանում են իրանց հեղափոխական աշխա-
տանքը դպրոցներում, յեթե սովորում են, և արտադրու-
թյան մեջ, յեթե աշխատում են գործարաններում: Նրանք
բացատրում են իրանց դասընկերներին, վոր ճիշտ չե այն
բոլորը, ինչ գրած է նրանց դասագրքում: Ֆրանսիական
դպրոցների համար դասագրքեր կադմում են բուրժուական
մանկավարժները, վորոնք բանվորների և կապիտալիստ-
ների միջև խաղաղություն են քարոզում, չքավորներին
և հարստահարվածներին սովորեցնում են հնազանդություն,
ձգտում են դասակարգային կռիւլ փոխել աղգայնական
ատելութեան: «Պետք է սիրել իր տերերին՝ գործարա-
նատերերին, խանութպաններին, իսկ գերմանացիներին,
ռուս բոյլշիկներին և աֆրիկական վայրենի նեգրերին
ատել», — ասում են նրանք: Դասակարգային ինքնագիտակ-
ցութեան այսպիսի այլանդակման դեմ դուրս են գալիս
ֆրանսիական մանկական կոմունիստական խմբակները,
բացատրելով իրանց ընկերներին, վոր լավ ապագա պետք
սպասել վոչ թե այլ ազգութեանների դեմ տարած հաղ-
թութեաններից, այլ ամբողջ աշխարհի աշխատավորների
յեղբայրացումից: Պիոներները կոմունիստական կուսակ-
ցութեան հետ կազմակերպում են յոյցեր Մարոկկոյում՝
մղվող պատերազմի դեմ, մանկական մասսաների մեջ
ազիտացիա են յոյցում գաղութների ազատագրման ոգոյին:
Նրանք ոգնում են նույնպես հրատարակելու այնպիսի փաս-
տաթղթեր, վորոնց մեջ նկարագրվում է ուղղիչ տներում

բանտարկված անչափահասների սոսկալի դրությունը, վո-
րոնք չնչին հանցանքի համար (գողություն մի կտոր հացի
համար) շատ անգամ յենթարկվում են վրդովեցուցիչ և
դաժան վերաբերմունքի: Այդպիսի փաստաթղթերի հրա-
տարակությունը ֆրանսիական հասարակութեան ավելի
առաջավոր շրջանների ուղադրությունը հրավիրում է փոք-
րիկ բանտարկյալների կյանքի պայմանների վրա և ստեղ-
ծում նպաստավոր հասարակական կարծիք:

Կոլյան և Կոստյան համակրանքի բուռն զգացումով
լցվեցին դեպի պատանի գերմանացիները, վորոնք կարո-
ղացան այդքան շատ բան պատմել նրանց ֆրանսիական
պիոներների մասին: «Իսկ վորտեղից գիտեն նրանք այս բո-
լորը», մտածում եր Կոստյան: Նա չգիտեր, վոր Նրիխն ու
Նրա ընկերները մի որ առաջ իմացել են յոյ կոմյերիտական
Կուրտից բոլորը, ինչ նա լսել եր ֆրանսիական պիոներ-
ների աշխատանքի մասին. բացի դրանից նրանք մոտ ան-
ցյալում ընդունել են յոյ ֆրանսիական յերեխաների պատ-
գամավորությունը և լավ հիշում են յոյ իրանց խոսակցու-
թյունը նրանց հետ: «Մեզ ել հարկավոր կլինի վագոնում
մի բան կարդալ ֆրանսիական յերեխաների կյանքի մասին,
մտածեց Կոստյան, թող ֆրանսիացիք տեսնեն, թե յես ու
Կոլյան ինչպիսի զարգացած մարդիկ ենք»: Հրաժեշտի
յերեկոն վերջացավ խաղերով, յերգեցողութեամբ և «Ան-
րոպլան»-ի ինսցենիրովկայով: Պիոներների յերաժշտախմբի
նվագած ուրախ քայլերգի հնչյունների տակ յերեխաները
չափով շարժվում են յոյ սրահում, կազմելով աերոպլանի
ձև, Նրա թևերն սկզբում ծալված են յին, հետո նրանք
բացվեցին և նրանց վրա կարելի յեր կարդալ հետեյալ
բառերը. «Կեցցե խորհուրդների յերկիրը»:

Հետեյալ որը յերեկոյան ժամը 6-ին Բեռլինի կայա-
րաններից մեկից դանդաղ դուրս յեկավ Պարիզ մեկնող
գնացքը, տանելով իր հետ մեր յերեխաներին:

— Իվան Նիկիտիչ, — ասաց Կոլյան, — յերբ գալիս ենինք
Բեռլին, հիշում եք, դուք մեզ գնացքում կարդացիք

Փրանցի պատմութիւնը: Լավ կլինէր, յեթե այժմ նույնպէս կարգայի՞ք մի վորսե պատմվածք ֆրանսիական դարձրոցականների մասին:

— Այդպիսի պատմվածք այժմ իմ ձեռքում չկա, այլ կա ուրս գրող Վերա Ինքերի «Ամերիկան Պարիզում» գիրքը: Այս գրքում հեղինակը այսպէս ե պատմում իր այցելութեան մասին, վոր արել ե ֆրանսիական դպրոցին (ուսուոր ծնողների աղջիկների համար): «Աղջիկները շատ են վախենում վատ թվանշանից: Ամենավատ թվանշանը «դերոն» ե: Լինում են դեպքեր, յերբ բարկացած ուսուցիչները գերո յեն դնում ամբողջ դասարանին միանգամից. դա կոչվում ե ընդհանուր գերո — «գերո ժեներալ»:

— Մեզ տանը սովորելու համար տալիս են մի յերես անգլերեն, — պատմում ե Փրանսիայի աշակերտուհին: — Մենք սովորում ենք, իսկ հետո դասարանում գրում ենք անգիր: Այստեղ արդեն ընդունված ե միայն յերկու թվանշան. կամ տասը (ամենից բարձր) կամ գերո: Միջինը չկա: Պետք ե սովորել այնպէս, վոր մի հատ սխալ ել չլինի: Իսկ յեթե թեկուզ մի սխալ անես, թեկուզ մի վորսե չնչին բան, ասենք մի տան կամ նույնիսկ մի ստորակետ, այն ժամանակ իսկույն ե յեթ — գերո:

— Իսկ ինչո՞ւ «ժեներալ»: Բոլորին ինչո՞ւ համար:

— Դա նրա համար ե, վոր յեթե, որինակ, դասարանի կեսը լավ գրե, իսկ մյուս կեսը վատ, մեկը մյուսին ամաչացնե:

— Ե-հ, ի՞նչպէս, ամաչացնում եք:

— Իհարկե, ամաչացնում ենք: Բայց շատ դժվար ե, գիտե՞ք, սովորել այնպէս, վոր ստորակետի սխալ անգամ չլինի: Իսկ դուք միթե այդպէս չեյիք սովորում, յերբ փոքր եյիք:

— Պատահում եր, բայց վոչ հաճախ: Իսկ հիմա մեր դպրոցներում այդպիսի բան յերբեք չի պատահում: Չե՞ վոր դուք թուրքակի պէս անգիր եք անում: Դա միտք չունի:

— Վոչ, մի ասեք: «Տասը» միշտ ել միտք ունի: Յեթե դուք շատ «տաս» եր եք ստանում, ապա շաբաթվա վերջը արդեն ստանում եք «պատվավոր տեղ» առաջին նստարանի վրա: Իսկ յեթե մի շաբաթ ես, ստանում եք «պատվավոր թերթիկ»: Այսպէս շարունակելով մինչև տարվա վերջը կարելի յե նույնիսկ պարգևի արժանանալ:

— Իսկ դուք, որինակ, հույս ունե՞ք ստանալու:

Աղջիկը նկատելի չափով գունատվեց:

— Վոչ, այնքան ել հույս չունեմ: Յես անհաջողութեան հանդիպեցի, յես գերո ստացա:

— Ի՞նչպիսի, «ժեներալ»:

— Վոչ, առանձին: Մենակ յես: Սա կոչվում ե անհատական:

— Իսկ ի՞նչ պատճառով ստացաք գերո:

— Պրեզիդենտների: Յես նրանց բոլորին խառնեցի:

— Իսկ շատ խիստ են պրեզիդենտների համար:

— Սարաաիելի խիստ: Վայ նրան, ով թեկուզ մեկին մոռանա: Լյուդովիկներին* հիշելն ել դժվար ե, սակայն նրանք գոնե համարակալված են: Իսկ պրեզիդենտները...

Յես խղճացի այդ աղջկան:

Կոստյան ե Կոլյան ծիծաղեցին:

— Այ, ճիշտ վոր սա ծիծաղելի յե, յերեխաներ, ասաց իվան Նիկիտիչը: Յես շատ ուրախ եմ, վոր ձեզ վերցրի ինձ հետ. դուք ինքներդ հիմա կարող եք տեսնել, թե ի՞նչպէս են ապրում ե սովորում արեւմտյան ժողովուրդների յերեխաները:

— Այ, կվերադառնանք տուն ե կպատմենք, վոր գերմանական ե ֆրանսիական դպրոցները մերի հետ համեմատած վոչինչ չարժեն, — հպարտութեամբ հայտնեց Կոստյան:

— Դա շատ վատ կլինէր, յեթե դուք վերադառնայիք տուն փոքրիկ պարծենկոտներ դարձած, — ժպտալով նկատեց

* Լյուդովիկները — Փրանսիայի թագավորներն են, թագավորական իշխանութեան շրջանում:

տեց նրան հայրը: — Խորհրդային Միության քաղաքացի-
ներն, իհարկե, պետք է հասկանան այն տարբերությունը,
վոր կա բանվորական յերկրի և կապիտալիստական պե-
տությունների միջև, պետք է յեռանդով ոգնեն բոլոր ժո-
ղովուրդների աշխատավորներին իրանց համար լավապագա
նվաճելու, սակայն նրանք պետք է տեսնեն նաև այն
լավը, վոր կա ոտար յերկրներում, վորպեսզի փոխադրեն
իրանց յերկիրը բոլոր պետականը և ոգտակարը:

— Իսկ ի՞նչն է լավ գերմանական և ֆրանսիական
գալրոցներում, — համառությամբ հարցրեց Կոստյան:

— Ամենից առաջ լավ է այն, վոր յեվրոպական կուլ-
տուրական պետություններում — Անգլիայում, Ֆրանսիա-
յում, Գերմանիայում, Դանիայում, Բելգիայում և այլն —
համարյա արդեն չկան անգրագետներ, իսկ յեթե պատա-
հում ել են, շատ քիչ՝ — 200 կամ նույնիսկ 400 մարդուց
մեկը: Սովորաբար դրանք լեռնային անտառապատ բարձ-
րունքների և այլ ամայի շրջանների բնակիչներ են: Սա-
կայն, միայն գալրոցներով չի կարելի դատել ֆրանսիական
կրթության գրություն մասին: Գիտական ընկերություն-
ները, վորոնք գլխավորապես կենտրոնացած են Պարիզում,
նշանակություն ունեն վոչ միայն իրանց յերկրի, այլև
ամբողջ Յեվրոպայի համար: Յերկրի գլխավոր գիտական
հիմնարկ համարվում է Ֆրանսիական Ինստիտուտը, վոր-
տեղ աշխատում են գիտությունների և արվեստի գանա-
զան ճյուղերի գիտնականներն ու գեղարվեստագետները:
Նրանք «անմահների» անուն են ստանում, յերբ դառնում
են ֆրանսիական Ակադեմիայի անդամ, վորը նրանց հա-
մար բարձր պատիվ և պարծանք է հանդիսանում: Ակա-
դեմիայի անդամները մեծ մասամբ հասակավոր մարդիկ
են, կողմնակից հին հաստատված հայացքների և տհաճու-
թյամբ են ընդունում իրանց մեջ նոր գաղափարներ քա-
ղոդող յերիտասարդներին: Ֆրանսիան տվել է շատ հռչա-
կավոր գրողներ — Վիկտոր Հյուգո, Բայլլակ, Զոլյա, Ֆլո-
բեր, Ռոմեն Ռոլլան, Պյեռ Ամպ, Հանրի Բարբյուս:

Ֆրանսիական գիտությունը իր բոլոր բնագավառներում
խոշոր հաջողությունների հասավ: Աստղաբաշխության մեջ
հռչակվեց Ֆլամմարիոնը, վորը կարողանում էր հեշտ և հաս-
կանալի կերպով տալ իր հսկայական գիտելիքները: Նրա
աշխատությունները թարգմանված են ուսուսերեն և հետա-
քըքրությամբ կարդացվում են թե մեծերի և թե դեռահաս-
ների կողմից: Բադիյը (ճառագայթավորում) գտել են
ֆրանսիացի գիտնական Կյուրի ամուսինները, և այդ
գյուտը հսկայական հետևանքներ ունեցավ ամբողջ մարդ-
կության համար: Ֆրանսիական բժիշկներն ոգտակար գյու-
կության համար: Ֆրանսիական բժիշկներն ոգտակար գյու-
տեր են արել բժշկության բնագավառում: Պարիզում է
գտնվում հռչակավոր Պաստերի ինստիտուտը, վորտեղ
ուսումնասիրում են բակտերիաների հատկությունները:
Այստեղ աշխատում էյին նաև շատ հայտնի ուսու գիտնա-
կաններ՝ Մեյհիկով, Բեզրոդկո, Մարդկանց և կենդանի-
ների ջահելացման փորձերն ել կատարվում էյին այստեղ
բժիշկ Վորոնովի ձեռքով:

Ֆրանսիական պատմաբանները տվել են մի շարք նշա-
նավոր աշխատություններ հին Յեգիպտոսի պատմության
և նախնական կուլտուրայի վերաբերյալ: Խոշոր գիտնա-
կաններ իրենց կյանքը նվիրել են Փրանսիական Մեծ հե-
ղափոխության ուսումնասիրության համար: Ուրբի և Ժո-
ղափոխության ուսումնասիրության համար: Երեսի աշխատու-
թյունները թարգմանված են ուսուսերեն և
ըեսի աշխատությունները թարգմանված են ուսուսերեն և
ուսումնասիրվում են մեր ուսանողների կողմից: Ֆրանսիա-
կան գիտնականներն ու ճանապարհորդները շատ բան են
արել յերկրագնդի դեռևս անհայտ մնացած յերկրների հե-
տազոտման համար: Ֆրանսիական ինժեներներ Բլեիլոն և
Ֆարմանը հնարել են իրանց անունները կրող ողային նա-
վերի տեսակները:

Պարիզում կան մի քանի հիանալի թանգարաններ՝ բնա-
կան պատմության, բուսաբանական, կենդանաբանական,
ֆրանսիական պատմության, Պարիզ քաղաքի պատմության
թանգարան, վորտեղ հավաքված են մեծ հեղափոխության

վերաբերյալ շատ նյութեր և այլն: Կա հիանալի կահավոր-
ված որսերվատորիա: Ազգային ամենահարուստ գրադա-
րան, վորտեղ հավաքված է $3\frac{1}{2}$ միլիոն գիրք, մի քանի տաս-
նյակ հազար ձեռագրեր և փաստաթղթեր: Պատկերներն
ու քանդակագործությունը կենտրոնացված են բոլոր յեվրո-
պական գեղարվեստագետներին ծանոթ Լուվրի թանգա-
րանում:

Գրադարաններ, թանգարաններ և այլ գիտական հաս-
տատություններ կան վոչ միայն Պարիզում, այլ և գավա-
ռական խոշոր քաղաքներում:

Պ Ա Ր Ի Զ

Բեռլինից մինչև Պարիզ մեկ որվա ճանապարհ էլ չկա:
Մեր տղաները ուրբաթ յերեկոյան դուրս գալով Բեռլինից,
շաբաթ առավոտյան մոտենում էյին համալսարնային Պա-
րիզ քաղաքին, վորը գովաբանել են շատ ճանապարհորդ-
ներ և հեղինակներ: Իր մեծությամբ Ֆրանսիայի մայրա-
քաղաքը աշխարհում 3-րդ տեղն է գրավում (առաջին
տեղը պատկանում է Լոնդոնին, յերկրորդը՝ Նյու-Յորքին):
Քաղաքը գոյություն ունի 2000 տարուց ի վեր: Նա տե-
սել է հին հռոմայեցիների տիրապետությունը և ֆրանսիա-
կան պետության ծագումը: Դարերը իրենցից հետո հիշա-
տակներ են թողել Պարիզի փողոցներում և հրապարակ-
ներում: Այժմ հիշատակները հին կառուցվածքների և հին
շենքերի ավերակներ են: Սակայն ուսս յերեխաները Պա-
րիզ ժամանելու որը չնկատեցին անցյալի այդ ստվերները.
նրանք ամբողջապես տարված էյին ադմկահույզ և պայ-
ծառ ներկայով:

Զնայած վոր Կոստյան և Կոլյան մի քանի շաբաթ ապ-
րել էյին Բեռլինում, — Պարիզը նրանց հիացրեց: Բեռլինը
սրա հետ համեմատած խաղաղ ու հանգիստ մի քաղաք
յերևաց: Յեվ հասկանալի չե, թե ինչու:

Քաղաքի կենտրոնական մասը փայլում է իր շենքերի
շքեղությամբ, պալատները, բանկերը, բիրժան և պետա-
կան հիմնարկները գտնվում են այստեղ: Այստեղ են նաև
հարուստ, լուսառատ խանութներ, վորոնց մեջ հավաք-
ված են շատ թանկարժեք ապրանքներ՝ մորթիներ,
բրիլլանտներ, մետաքս և հարավային ծաղիկներ, ամեն
տեսակ մեքենաներ, գործիքներ, պատկերներ: այս բոլորը
փայլում են ցուցադրվելով: Փողոցները դղրդում են
ավտոների անվերջ աղմուկից, վորոնց անծայր շարանները
ժապավենի նման պատում են Պարիզը: Սենա գետը ամեն
րոպե կտրատվում է մանր և խոշոր շոգենավերով, նա-
վակներով և բեռնակիր նավերով: Մայթերը, ծառուղիները,
զբոսավայրերն ու հրապարակները լիքն են պարիզյան
ուրախ և աղմկոտ ամբոխով: Յերեկոյան հսկայական քա-
ղաքը կորչում է կրակների ծովի մեջ: Բաղմահարկ տների
կտուրների վրա վառվում են լուսավորված ռեկլամները,
վառվում են գազային մեծ լապտերներ, ելեկտրական լույս
են սփռում խանութների լուսամուտները: Փողոցներում
կառքերի և անցորդների անվերջ հոսանք է շարժվում:
պարապ հարուստներ և ամբողջ որը աշխատած ու հոգնած
ծառայողներ շտապում են սրճարան, թատրոն և կինո:
Ծաղիկ վաճառող կանայք և աղջիկները ամբողջ տարի ծա-
ղիկների գեղեցիկ փուռներ են առաջարկում անցորդներին,
լրագրավաճառ մանուկները — բոլորին ծանոթ պարիզյան
«գավրոշները» — խլացուցիչ կերպով կանչում են վերջին
նորությունները: Այսպես է ֆրանսիական մայրաքաղաքի
արտաքինը:

Սակայն փորձենք մտնել ծայրամասերը, այցելինք
բանվորական թաղամասերի տները: Այնտեղ կեղտոտ բակեր
ունեցող, տխուր, զորանոցանման շենքերի զգվելի սենյակ-
ներում և բնակարաններում պատսպարված են տասնյակ
հազարավոր բանվորական ընտանիքներ, ուսանողներ, և
մանր ծառայողներ: Այստեղ նեղ է և խեղդուկ, ծխոտ է և

ցուրտ, մութն եւ և զարշահոտ: Այստեղ մարդիկ ընկճված են և հիվանդ, հաճախ հարբած և շատ քչերն են բավական իրանց վիճակից: Նրանք զվարթանում են այն ժամանակ, յերբ հոգնեցուցիչ ու ծանր ուրից հետո կարողանում են գործարանային շենքերից, գրասենյակներից, արհեստանոցներից, իրանց անհամբուլ բնակարաններից դուրս գալ պայծառ լուսավորված կենտրոնական փողոցները:

Տեսնենք, թե ինչպիսի պայմաններում են ապրում թեկուզ լվացարարուհիները Պարիզում:

ՊԱՐԻԶԻ ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻՆԵՐԸ

(Ըստ Վ. Ինքերի)

Քաղաքի կենտրոնում Սենան գեղեցիկ եւ Նրան շրջապատում են զարդարված շենքերը, հազարավոր լապտերներ արտացոլում են նրա ջրերում, անհամար կամուրջներ ապարանջանի պես գրկում են նրան: Բայց վորջան հեռու կենտրոնական փողոցներից, այնքան անզարդ եւ դառնում գետը: Նա հանում եւ վրայից բոլոր զարդարանքները և մնում եւ սովորական, գորշ, բանվորական հագուստով, վորը թաթախված եւ մրի ու նավթի մեջ: Կենտրոնից բոլորովին հեռու գետից բաժանվում են ջրանցքներ:

Ահա մեկն այդ ջրանցքներից կամ, ինչպես այստեղ նրանց անվանում են, ջրամբարներից: Ջրամբարն իջնում եւ սանդխճաձև: Ջուրը նրանում համարյա թե կանգնած եւ: Նա անշարժ եւ, կանաչ գույն ունի: Նրանից տարածվում եւ տարրինակ անդուրեկան հոտ:

Ահա և լվացարարուհիները: Փայտե ծածկույթի տակ ջրի մեջ կանգնած են բաց տակառներ: Ջուրը հասնում եւ նրանց յեզերքներին, բայց չի թափվում ներս: Նրանք իրար հետ միացված են տախտակամածով: Իսկ տակառներում լվացարարուհիներն են: Յեթե թուղթիկ կերպով նայես, կթվա, թե նրանք նստած են ծալապատիկ, բայց իրոք նրանց իրանի կեսը ծածկված եւ տակառներով: Տախտակամածի վրա թափ-

ված են սպիտակեղենի կույտեր, վորոնք ունեն շարավի գույն: Յեվ զարշահոտ, ճարպոտ ջրի մեջ անընդհատ իջնում են ձեռքեր: Աղքատությունն այստեղ սարսափելի կերպարանք եւ ստանում: Ինչպիսի առողջություն պետք եւ ունենալ, վորպեսզի ամբողջ ուրը կարելի լինի կանգնել սառն չրում, վորը մարմնից բաժանվում եւ միայն կիսով չափ փթած փայտե պատով: Ինչպիսի քաջություն պետք եւ ունենալ այդ ջրերում լվացած սպիտակեղենը հագնելու համար:

Առաջին տակառում գտնվածը հաստ ու ուռած մի կին եւ, վոր փաթաթված եւ պատառոտված բրդե աղլուխի մեջ: Կարմիր ձեռքերը լցված են չուգունի նման սև, յերակային արյունով: Ներքեի շրթունքը կծած եւ ուժերի արտա-կարգ լարումից: Նրա հարևանը ներկայացնում եւ առաջինի հակապատկերը. Նա բարակ եւ, փոքրիկ, յերեսի գույնը նուրբ կանաչագույն: Նա վորորում եւ յերկար, դեղին սա-վանը: Նրա կողքին, թաց սպիտակեղենի կույտի վրա նստած եւ ըստոմ մի աչքանի կատուն և նայում եւ ջրին: Այդ մի հատիկ աչքի հայացքից այնպես անտանելի յե դառ-նում, վոր այն կողմ նայել չի կարելի:

Անձրեք թափվում եւ ամբողջ ուրը:

Պարիզը անցյալ դարերում իր ունեցած հեղափոխական կռիվներով հայտնի քաղաք եւ: Փրանսիական Մեծ հեղափո-խության կարևոր դեպքերը — բանտ-ամրոց Բաստիլայի առումը ժողովրդի ձեռքով 1789 թ. հուլիսի 14-ին, Լյու-դովիկ XVI թագավորի գլխատումը, պարիզյան աղումը-ների աշխուժ գործնեյությունը և ժողովրդական գորեղ հավաքութենքը — կատարվեցին այստեղ: XIX դարն եւ վկա յեր մի քանի հեղափոխությունների, քաղաքացիական կռիվների, Պարիզի կոմունայի և աղմկահույզ ցույցերի: Յեվրոպայի բոլոր հեղափոխականները, աղատության գործի մարտիկները շտապում եյին այստեղ ապաստամբության որերին պարիզեցիներին ոգնելու կամ ապաստարան վրնա-րելու իրանց հայրենի յերկրները կառավարությունների

հետապնդումներից ազատվելու համար։ Այժմ, XX դարում, Պարիզը, ինչպես և ամբողջ Ֆրանսիան, գտնվում է հակահեղափոխական կուսակցությունների ձեռքում, վորոնք պաշտպանում են բուրժուական կարգերը։ Սակայն ֆրանսիական բանվորները սկսում են ավելի և ավելի մոտենալ և լսել կոմունիստներին, վորոնք կապիտալիստական կարգերի տապալման կոչն են անում։ Ֆրանսիական պարլամենտի վերջին ընտրությունների ժամանակ կոմունիստներն ստացան անհամեմատ ավելի շատ ձայն, քան նախկին ընտրությունների ժամանակ։

Իվան Նիկիտինը յերեխաներին տարավ ժակ կուսյուրյեյի մոտ, վորը մի դեռահաս պատանի յեր և վորին ուղղել էին իրանց նամակը գերմանացի պիոներները։ Ժակն ընդունեց ուս յերեխաներին շատ ուրախ և սիրալիր։

— Ա, փոքրիկ բոյլեիկներ, — ծիծաղելով բացականչեց նա, կարդալով կոստյայի տված նամակը։ — Լավ է, վոր յեկաք մեզ մոտ. ձեզ հետ միասին մի լավ կդրոսները։

— Ինչպես, դու խոսում ես ուսերեմ, — զարմացած բացականչեց կոլյան։

— Այո, իմ մայրս ուս է։ Նա իր ծնողների հետ փախել է ուս ցարական իշխանության հետապնդումից և այստեղ ամուսնացել իմ հոր հետ, վոր գծագրության ուսուցիչ է, — պատասխանեց ժակը։


— Ախ, այս ինչ լավ է. ուրեմն դու մեզ ցույց կտաս քաղաքը։

— Ի հարկե, մեծ ուրախությամբ։ Հենց այսօր գնանք նայելու ամենանշանավոր տեղերը։

Կոստյան և կոլյան մտածում էին. զարմանալի յե, թե ինչպես գերմանական և ֆրանսիական մանուկները կարողանում են լինել քաղաքավարի և սիրալիր։ Ձեզ հետ խոսում են նրանք վորպես մեծեր։

Մի քանի օր յերեք մանուկները չափիփում էին Պարիզը։ Այդ ժամանակամիջոցում տեսան նրանք և Ոպերայի հիանալի փողոցը, և բիրժան, վորտեղ առնում և ծախում են թանգարժեք թղթեր, հսկայական շուկան, վորտեղ ապակե մի սլավիլին ամբողջապես լցված էր ձկների բուր տեսակներով, մի ուրիշը — կանաչեղենով, յերրորդը՝ ծաղիկներով և այլն։

Ուս մանուկները շատ զարմացան, տեսնելով կենտրոնական մեծ փողոցի անկյուններից մեկում լավ հագնված ինչ վոր սղամարդու, վորի գլխին ամրացված էր ինչ



Նկ. 17. Ոպերայի փողոցը, Պարիզի ամենակենդանի տեղերից մեկը։

վոր հովհարի պես բան նրա ազգանունով և հասցեյով, իսկ վոր ծըքին մեծ կարտոնե սլավատ. «Յուրաքանչյուր մարկը ձեռքերը աշխատանք են փնտրում»։ Նրա կողքին կանգնած էր ջահել, դուրեկան դեմքով մի կին՝ փոքրիկ յերեխան գրկած։

— Սա ինչ է, հարցրեց կոլյան. միթե սրանք աղքատներ են։

— Վոչ, սրանք աղքատներ չեն, — բացատրեց նրանց ժակը. — սրանք գործազուրկներ են. սրանք վորորմություն չեն խնդրում, այլ խնդրում են աշխատանք։ Մեզ մոտ

Ֆրանսիայում գործադուրկները դեռ այնքան շատ չեն։
Դուք լսած կլինեք, իհարկե, վոր մեր յերկրի բնակիչների
թիվը չի ավելանում. մեզ մոտ ամեն տարի մեռնում են
համարյա այնքան մարդիկ, վորքան և ծնվում են։ Կառա-
վարությանը հարկավոր են զինվորներ՝ պետությունը և
նրա կալվածները Աֆրիկայում, Ասիայում պաշտպանելու
համար, արդյունաբերողներին հարկավոր են բանվորներ,
վոր կարողանան շատացնել իրանց գործարանները։ Իրանց
մարդկանց թիվը դրա համար չի բավականացնում։ Ուստի



Նկ. 18. Պարիզի բիրժան։

և զինվոր են վերցնում մեր գաղութային հպատակ-
ներին՝ արաքներին, բեդուիններին, նեգրերին և բերում
են նրանց նույնիսկ այստեղ, Յեվրոպա։ Իսկ բանվորներ
մինչև վերջին ժամանակներս բերել եյին տալիս Լեհաս-
տանից, Իսպանիայից, Իտալիայից։ Առանձնապես շատ
բանվոր ձեռքեր հարկավոր եյին համաշխարհային պատե-
րագմից հետո առաջին տարիներում։ Այն ժամանակ հյու-
սիսային Ֆրանսիայում դաշտերն ու քաղաքները այնպես
սաստիկ ավերված եյին կատաղի կռիվներից, վոր ծաղկած
յերկիրը կարճեա անապատ եր դարձել ամբողջապես և

ակոսված եր ծակծկված ուռմբերով։ Ֆրանսիացիք ստիպված
եյին մեծ ճիգ ու ջանք թափել ավերված գյուղերն ու
քաղաքները վերականգնելու, դաշտերը փշալարերից, խրա-
մասներից և ուռմբների կտորտանքից ազատելու համար։

Սակայն վերջին ժամանակներս ֆրանսիական բանվոր-
ներն ել զգացին գործադուրկության համը։ Պատերազմից
քանդված վայրերի վերականգման աշխատանքները հա-
մարյա ավարտված են, իսկ մի քանի գործարաններ այն-
պես ընդարձակեցին իրանց արտադրությունը, վոր նրանց
համար ապրանքները սաղացնելու տեղ չմնաց։ Դրա հե-



Նկ. 19. «Պարիզի վորովայնը» — կենսամթերքների կենտրոնական շուկան։

տեանքով արդյունաբերական ձեռնարկների տերերից շա-
տերը ստիպված են մասնակի կերպով կամ բոլորովին դա-
դարեցնել աշխատանքները ձեռնարկներում. այսպիսի
դեպքերում նախ և առաջ հեռացնում են ամենից անհա-
զանդ բանվորներին։

Համաշխարհային պատերազմի ժամանակ տարած հաղ-
թության և Գերմանիայից կողոպտած միլիարդներ շնոր-
հիվ Ֆրանսիան համեմատաբար բարեկեցիկ վիճակի մեջ եր
պատերազմից հետո՝ առաջին տարիները։ Սակայն կապի-

տալիստական աշխարհը համակած տնտեսական ճգնաժամը նրան ևս հասավ և աստիճանաբար ծավալվում է, ծայր տալով գործազրկությանը և բանվորական հեղափոխական յեղևթններին: Գործազուրկների թիվը Ֆրանսիայում հասնում է արդեն միլիոնների:

ՊԱՐԻԶԻ ԱՆՑՅԱԼԻՑ

Խոսելով, մանուկները մոտեցան լայն ու բանուկ փողոցի:

— Այստեղ, ասաց ժակը, յերբեմն տեղի յեն ունեցել կատաղի կռիվներ Պարիզի ազգաբնակչության և Լյուդովիկ-Ֆիլիպայ թագավորի զորքերի միջև:

Այս թագավորը իշխում էր Ֆրանսիայում XIX դարի 30-ական և 40-ական թվականներին: Նա շրջապատված էր բանկիրներով, վաշխառուներով, խոշոր ձեռնարկատերերով: Նրա ժամանակ հենց այս մարդիկ շատ լավ էլին ապրում, իսկ գյուղացիները, բանվորները և նույնիսկ միջակ ու մանր բուրժուազիան տառապում էին ուժից վեր հարկերից և ամեն տեսակի զրկանքներից: Վերջապես 1848 թ. փետրվարին բռնկվեց հեղափոխությունը. վորը այդպես էլ անվանվում է՝ «Փետրվարյան հեղափոխություն»: Յերկու անբերրի տարիներից հետո ապրելը չափազանց դժվարացավ. գործազրկությունը, քաղցը առաջացրին ընդհանուր անբավականություն: Կոստյան հիշեց, վոր կարդացել է մեծ յեղբոր հասարակագիտության դասագրքի մեջ Փետրվարյան հեղափոխության մասին: Թեև բնակչության բոլոր խավերն էլ անբավական էին բորսային առևտրականների և բանկիրների տիրապետությունից, կառավարության գեմ դուրս յեկան համարյա բացառապես բանվորները: Ամբողջ Պարիզում մի գիշերվա ընթացքում կանգնեցրին 1050 բարիկադ: Դրա համար կտրեցին հազարավոր ծառեր և կրեցին շատ քարեր: Գիշերը սկսվեց կռիվը ապստամբների և կառավարության զորքերի միջև, վոր

շարունակվեց փետրվարի 24-ի ամբողջ ուրը: Առանձնապես համառ և տաք կռիվ էր մղվում փողբիկ ամրոցի շուրջը, վորը պաշտպանում էր պալատի մուտքը: Վերջի վերջո նա առնվեց: Թագավորը փախավ, և հայտարարվեց հանրապետություն:

— Յեթե դուք կարողանաք ձեռք բերել մեր հեղինակ երկման-Շատրիանի «Պրոլետարի հիշողություններ» պատմվածքը, կարդացեք այն, — ասաց ժակը: — Այդ պատմվածքում մի յերիտասարդ բանվոր, վոր յեկել էր Պարիզ մի գավառական փողբիկ քաղաքից, շատ հետաքրքիր նկարագրում է իր ապրումները 1848 թվականի փետրվարյան որերում:

«Դուք հիմա կտեսնեք, — գրում է նա, — թե ինչպես էլին վարվում այն ժամանակ մարդկանց հետ, վորոնք համամիտ չեյին պարոն Գիլոյի* կարծիքին, ինչպես էլին հարգվում ժողովրդի իրավունքները: Յես կպատմեմ ձեզ ամենագարշելի ստորություն մասին, վոր ինձ վիճակվեց տեսնել աշխարհում:

Բոլորովին չկասկածելով՝ գնացի դեպի ՈւՇանժ կամուրջը և հանկարծ տեսա, վոր աջ կողմից ճանապարհը փակող յերկու կիրասիրները (հեծյալ զինվոր) հեռացան իրանց տեղից. զորքերն ևս հեռու կանգնեցին, քաղաքի խորհրդարանի ուղղությամբ (աատուշա):

Ամեն վոք բնականաբար կմտածեի. «Այս արվում է ձերբակալված անձանց համար ճանապարհ բանալու, դրանց տանում էլին Սեն-Դենի փողոցը»: Սակայն հենց նույն րոպեյին ձախ կողմից գետափնյա փողոցով գալիս էր ինչ վոր գեսերալ, շրջապատված իր ամբողջ շտաբով: Նա գալիս էր Տյուրիլիի պալատից: Կամուրջի մայթերի վրա հեծյալ զինվորների փոխարեն տեղ տեղ կանգնեցրած էլին հետևակ զինվորներ: Բոլորը լարեցին իրանց ուշադրությունը: Գեսերալը կանգնեց մեր դեմ և մի քանի րոպե նայում էր բոլոր ուղղություններով:

* Կառավարության ազդեցիկ անդամը:

Յես այս պատմում եմ մանրամասնությամբ, վորպեսզի ամենքը կարողանան զնահատել պարոն Գիզոյի արդարադատությունը։ Այդ գեներալին բավական եր միայն նշան տալ պահանջներին, վորպեսզի նրանք մաքրեյին կամուրջը, և վոչ վոքի կողմից զիմադրություն չեր լինի, վորովհետև բոլորն ել անգեն եյին։ Բայց գեներալը այդ չարավ։

Նա նայում եր չորս կողմը շատ հանգիստ։

Ինձ թվում ե, վոր յես մինչև հիմա նրան տեսնում եմ իմ առջև։ Նրա գլխին կար զինվորական կեպի, բոլորված լայն կլապիտոնով, ուսերին ուսադիրներ։ Նա թխադեմ, վոսկրոտ մի տղամարդ եր, ուղիղ քթով, կլոր կզակով, սև և խորամանկ աչքերով։ Նա ինչ վոր բան եր ասում, բայց մենք վոչինչ չկարողացանք իմանալ, վորովհետև նրա շուրջը աղմկով այս ու այն կողմ եյին արշավում նրա շտաբի սպաները։ Վերջապես նա յերկու թե յերեք անգամ բարձրացրեց ձեռքը և սրարշավ հեռացավ դեպի խորհրդարան։

Մենք նայում եյինք նրա և սպաների վրա վոչինչ չկասկածելով։ յես նույնիսկ կամենում եյի ոգտվել ազատ անցքով և ուղևորվել Սեն-Դենիի փողոցը, բայց հանկարծ լսվեց մի սարսափելի սիրտ կտրատող աղմուկ...

Յետ եմ դառնում — և ինչ եմ տեսնում։ Գետափնյա փողոցի յերկարությամբ սլանում ե ամբողջ թափով քաղաքային հեծյալների մի զորամաս, վորը վոտնատակ ե տալիս և տրորում ճանապարհին հանդիպած բոլոր մարդկանց։

Ճշմարիտն ասած՝ չգիտեմ, այդ պարոններն ինչ հասկացողություն են կազմել հեղափոխական ժողովրդի մասին։ Մենք տրորում ենք ֆրանսիացիներին, մարդկանց, վորոնք անվանում են մեզ իրենց պաշտպաններ և մտերիմ բարեկամներ, և բռնադատում ենք այնպիսի մարդկանց, վորոնք վոչ մի բան չեն սպառնում և ձեռքերին ունեն միայն ձեռնափայտեր՝ ամեն տեսակ զենքի փոխարեն...

Ինչպիսի անուն տալ այսպիսի վարմունքին։ Միթե սա ստորություն չե։ Այս հարցերին թող պատասխանեն ամբողջ աշխարհի ազնիվ մարդիկ։

Գեներալը հրամայեց վոչնչացնել մեզ, իսկ նրա զորքին այս բանը չափազանց հաճելի յեր։ Յեվ անա փախան կանայք, յերեխաներ, բարձրացնելով սոսկալի վայնասուն, վոր կարելի յեր լսել բուսաբանական այգու մոտ։ Դժբախտ կանայք վաղքի ժամանակ խճճվում եյին իրանց յերկար հագուստների մեջ։ յերկու պառավ ոգնություն եյին կանչում, բայց այս բոլորը շարունակվեց միայն մեկ րոպե, վորովհետև հարձակվող զորամասը սլանում եր քամու արագությամբ։ Յերկիրը տնջում եր։

Յես չեյի ցանկանում ազատվել. այդպիսի բնավորություն յես չունեմ, և միայն մեկ միտք, վոր ինձ համար ամեն ինչ վերջացած ե, դբադեցրել եր իմ ուղեղը։ Յես մենակ կանգնած եյի կամուրջի մայթի վրա։ Ինձնից տասնևհինգ քայլ հեռու մի պառավ հենվել եր ճաղերին, փոքրիկ մի մանուկ ինն կամ տաս տարեկան խայթվածի նման աջ ու ձախ եր վազում, չիմանալով վորտեղ պահվել։ մի այլ կաղ պառավ վոչ մի կերպ չեր կարողանում բարձրանալ մայթի աստիճանները։

Հենց այդ ժամանակ զրոհը մոտենում եր։ Յերկար շարքով սլանում եյին քաղաքային (մունիցիպալ) հեծյալները, փայլեցնելով իրանց սաղավարթները. առջևից ցցված եյին թրերի ծայրերը, յետևից փողփողում եյին սաղավարթների փետրազարդերը։ Իմ ականջները ծակեց մի սուր ձիչ։ Թշվառ կաղ պառավը խուրձի նման գլորվեց ձիերի սմբակների տակ, և թրերի փայլը կայծակին եր տալիս իմ աչքերի առջև։ Այդ որերը իրենց սուր ծայրով խրվեցին իմ հիշողության մեջ։ Յուրաքանչյուր հարվածի ժամանակ ինձ թվում եր, թե վորևե մեկի գլուխը բաժանվում ե մարմնից։ Ահա բոլորը, ինչ կարող եմ յես պատմել այդ զրոհի մասին, վորի մասին այն ժամանակ խոսում եր ամբողջ քաղաքը։

Իմ կողքին կանգնած մանուկը ստացավ թրի հարված ծոծրակին։ Նրան վիրավորող զինվորը պետք ե վոր շատ

առաջ մեկնած լինելը ձեռքը, վորովհետև բավական հեռու
յեր գտնվում իր գոհից: Մարտափի մատնված՝ յես առաջ
գնացի դանդաղ քայլերով: Կամուրջի ծայրին մի դալկահար
զինվոր սվինի սուր ծայրը դեմ անելով ինձ ձայնեց.

— Անձնատուր յեղիր:

Միայն այն ժամանակ վախճելու միտքը ծագեց իմ
գլխում: Յես սկսեցի վազել աստիճաններով: Ամեն բոլոր
յես սպասում էյի, վոր գնդակը ուր վոր ե կծակե իմ
թիկունքը: Անմեղ մարդկանց արյունը նորից տեսնելու
յերկյուղը թույլ չեք տալիս ինձ նույնիսկ շունչ քաշելու
համար մի փոքր կանգ առնել:

Այսպես յես անցա Շատլե հրապարակը և նեղ նրբանց-
քով անփնտս հասա առաջին բարիկադին, վոր գտնվում էր
գետափնյա փողոցի դեմ: Բարիկադը շինված էր յեռան-
կյունածե, և մարդիկ, վորոնք պաշտպանում էյին նրան,
ձայն էյին տալիս ինձ.

— Շնուտ, շնուտ:

Նրանք տեսնում էյին, թե ինչպես հետևականների մի
զորամաս արդեն ծովում էր Շատլե հրապարակի ան-
կյունից:

Հասկանալի յե, վոր յես վազում էյի բոլոր ուժով: Յերբ
յես անցա քարերից շինված պատնեշը, իմ ընկերներն
սկսեցին պատասխանել կողքի փողոցից լսվող կրակոցներին:

Իմ առաջին գործն յեղավ նայել բարիկադի յետևը.
ինչպես մեծ յեղավ իմ զարմանքը, յերբ յես տեսա մեզ-
նից յերկու հարյուր քայլ հեռու զորքեր, վորոնք կանգ-
նած էյին կանոնավոր շարքերով և պատրաստ հարձակվե-
լու... Այդ զորատյունի առջև կանգնած էյին սապյորները
յերկար փուշոտ գլխարկներով, վորոնք իջեցրած էյին մինչև
ունքերը, զոսկատեղից մինչև ծնկներն իջնող կաշվե զոգ-
նոցներով, զինված՝ հրացաններով և կացիններով:

Խոստովանում եմ, այս բանն ինձ շատ զարմացրեց, և
յես չզիտեմ, ինչ չեյի տա այդ ժամանակ մի հրացան

ունենալու համար: Վոչ պակաս պիտի զարմանայի յես,
նայելով իմ ընկերներին: Այդպիսի տղաների յես յերբեք
չեյի հանդիպել: Մոտ տասնևհինգ հոգի էյին նրանք. ամե-
նից ավելի իմ ուշադրությունը գրավեց բոլորովին սպիտա-
կած մի ծերունի բաց կրծքով, արծվաքիթ և սեղմած շրթ-
թունքներով: Մյուսներն էլ ամբակազմ մարդիկ էյին:
Նրանց հետ խառնվել էյին 10—12 տարեկան յերկու
յերեխաներ: Ամբողջ այս խումբը ցեխոտ էր, մինչև վոս-
կորների ծուծը անձրևից թրջված, ծակծկված և կոխկրտված
կոշիկներով: Վոմանք բլուզ էյին հագել, մյուսները կուրտ-
կաներ, իսկ յերկու կամ յերեք հոգի շապիկ էլ չունեյին:

Մեր բարիկադը յերկու կամ յերեք վոտնաչափից
բարձր չեք. նրա յերկու կողմում անձրևը, վոր չեք դա-
դարում տեղալուց, գոյացրել էր մեծ լճակներ, վորոնց մեջ
մարդիկ թաղվում էյին մինչև ծնկները: Բարիկադի պաշտ-
պանները ժամանակ առ ժամանակ գնում էյին ձախ կողմը
գտնված նրբափողոցը, այնտեղ լցնում էյին 5—6 անպետք,
կայծաքարի հրացաններ, յերկու մեծ, ժանգոտած փշտոփներ
և ապա խելագարի պես քրքշալով կրակում էյին զատ-զատ
սապյորների վրա, վորպեսզի կրակողին ժամանակ տան վա-
ռոդ լցնել փողի մեջ, շինել խից իր սեփական բլուզի
քուռչերից և գնել գնդակը: Յուրաքանչյուր կրակոց տա-
րածվում էր վորպես վորոտ հարևան նեղ ու ծուռ փո-
ղոցներում:

Ժամանակ առ ժամանակ մյուս բարիկադների յետե-
վից նույնպես լսվում էյին կրակոցներ, վորոնց պատաս-
խանում էյին զորքերի միահամուռ համազարկերը:

Հին տներից հոսում էյին ցած թրջված կրի առվակ-
ներ. փեղքերը վերևից պոկված, տարուբերվում էյին իրանց
յերկաթե ձողիկների վրա. ցուցանակները ծակծկված էյին
գնդակներով: Ահեղ և սարսափելի յեր նայել յեռանկյու-
նածե թմբերին, վորոնք նայում էյին, վորպես մահվան
բերաններ:

Ժան-Պիերը (այսպես էյին կոչում ջահել բանվորին) միացավ բարրիկադի այդ պաշտպաններին և սկսեց կատաղի կերպով պաշտպանվել կառավարական զորքերից։ Մի թոնի ժամ տևող կռվից հետո հարկ յեղավ մաքրել բարիկադը և ազատվել մյուս փողոցը փախչելով։ Բոլոր այն տեղերում, վորտեղ փողոցները կարում էյին միմյանց, կանգնեցրած էյին բարիկադներ։ Քաղաքի ամբողջ բնակչությունը վտաքի յեր յելած։ Փողոցներով տանում էյին վիրավորներ նասիլկաների վրա պառկեցրած և կրում էյին սպանվածներ սայլակներով։

«Իսկ յես, հոգնածությունից հաղիվ վտաքի վրա մնալով, ներս ընկա մեր կաբուլոն (փոքրիկ պանդոկ), վորտեղ սկսեցի ուտել մենակ, տեղ բռնելով սեղանի ծայրին։

Պանդոկի տիրուհին՝ տիկին Գրենդորֆը, հուսահատ վիճակում եր գտնվում։ Նա ինձ հաղորդեց, վոր մեր ընկերներից վոչ մեկը ամբողջ որվա ընթացքում չեր մտել պանդոկ և վոր պարոն Արմանը (նրա ամուսինը) գնացել եր ամենից վերջը, ասելով, թե չի ուզում ստոր մարդ լինել»։

Այդ պատմության ժամանակ յես դողում էյի ցրտից։ Ինձ վրա ամեն ինչ թաց եր — շորերս, շապիկս և կոշիկներս։ Միայն այժմ յես հասկացա, վոր հարկավոր ե շտապ փոխել շորերս. ատամներս դողիցս իրար էյին զարնվում։

Դուրսը շատ մութն եր, յերբ յես դուրս յեկա պանդոկից և վազեցի տուն։ Դռնապանը, տեսնելով ինձ սանդուխների վրա, բացականչեց.

— Իսկ դուք կտրիճ մարդ եք, պարոն Ժան-Պիեր։ Ամենուրեք միայն ձեր մասին են խոսում. նույնիսկ գալիս են ձեզ մոտ ձեր առողջության մասին իմանալու։

Իր սենյակը գնալիս նա նկատեց իմ հրացանը ու նորից սկսեց աղաղակել.

— Այո, ձեզ հետ հանաք անել չի կարելի... Ինչպիսիք քաջություն... Միայն լավ չի լինի, յեթե ձեզ բռնեն։

— Ով առաջինը կմոտենա ինձ տանելու, ասացի յես նրան, բարձրացնելով հրացանի շնիկը, — Թող ինձ չմեղադրի... Հանգիստ յեղիր, հրացանը առանց քնդակի չե։

Նա վոչինչ չպատասխանեց, իսկ յես խաբսավելով սկսեցի բարձրանալ. Հանվելով նստեցի մահճակալի վրա, յերբ հանկարծ լսվեց դանդաղ զանգահարություն (նաբատ) Աստվածածնի վանքից։ Ապստամբներն էյին, վոր ժողովրդին փողոց էյին կանչում։ Իմ լուսամուտների փոքրիկ ապակիները դողացին, իսկ այդ յերկար գիշերային զանգահարությունից իմ մազերը ցից կանգնեցին գլխիս վրա։

Ծեր Պերրինյոնի գիրքը* բացվեց իմ աչքերի առաջ։ Յես սկսեցի հիշել մեր նախնիքների մեծ գործերը և կշռադատում էյի, թե մենք ինքներս ինչ բանի կարող ենք պետք գալ։

Շուտով մյուս բոլոր յեկեղեցիները պատասխանեցին Աստվածածնի վանքին, յերկինքը լցվեց հանդիսավոր և միևնույն ժամանակ սարսափելի հիմնով։

Տասնևյոթ տարի առաջ եր այս, սակայն ով ապրում եր այն ժամանակ և ուներ մարդկային սիրտ, նա յերբեք չի մոռանա այն գիշերային զանգահարությունը, վոր սկսվեց փետրվարի 23 — 24-ի գիշերը։ Այդ զանգահարությունը պատմում եր մարդկանց՝ արդարագատություն և ազատության մասին։

Այնքան ել վաղ չեր, յերբ յես զարթնեցի. դրսում մոռայլ և խոնավ յեղանակ եր։ Իսկ այնտեղ, ներքեը և փողոցում արդեն աղմուկ եր բարձրացել, արտասանվում էյին սալաանկապ ճառեր և հրացանի կոթերը աղմկում էյին սալահատակների վրա։ Տանը տիրում եր խոր լուռություն, կարհատակների վրա։ Տանը տիրում եր խոր լուռություն, կարծես բոլորը մեռել էյին. չեր լսվում վոչ կոշկակարի թխկոցը, վոչ խառատի դազգյահի վշշոցը, վոչ ել կազմաբարի խուլ զարկերը։ Յես վեր թռա անկողնից և շտապ հագնվեցի։ Դուրս գալով սանդուխքի վրա, յես մտահոգված

* Գիրք Ֆրանսիական հեղափոխության մասին։

եյի նոր հանելուկներով. բոլորը հեռացել էին տնից, դռները կրնկի վրա բաց, աստիճաններն ամեն տեղ թաց ու սահուն էին. բակի վրա բացվող պատուհանները դիպչում էին պատերին, և չկար մի մարդ, վոր կարողանար բացատրել ինձ, թե ինչ եր նշանակում այս բոլորը: Հրացանն ուսիս յես ցած իջա իմ հինգհարկանի վորջից:

Սակայն ինչպես նկարագրել մոտակա փողոցներում տեղի ունեցածը. այն բարիկադները, կանգնեցրած վորպես ամուր դիրքեր (մի կողմից ուղիղ, մյուս կողմից թեք), տների մոտ նեղ անցքեր ունեցող, բլուզ հագած այս պահակներին, վորոնք հրացաններով շրջում էին վերևում, այն բոլոր մարդկանց, վորոնք խրամների յետևում գրոսնում, վիճում, ծիծաղում էին, այն պառավներին և յերեխաներին, վորոնք հետաքրքրվում էին ամեն բանով և ամեն տեղ մտնում, այն տղամարդկանց, վորոնք պահապան էին կանգնած թրերով, հրացաններով և նիզակներով: Վհչ, այս բոլորը չես նկարագրի խոսքերով: Պարիզի բոլոր փողոցները, նրբափողոցները, հրապարակները, փողոցների հատման կետերը, անթիվ անցքերն ու ծուռումուռ նրբափողոցները այդ մոմենտին մեր վորևե խեղճ գյուղի տեսքն ունեյին, վորտեղ աղբը, ցեխը, ծղնուի դեպքերը, փոսերը և սարայները նույնպես կարող են բարրիկադ անվանվել:

Դա արդեն Պարիզը չեր, այլ յեղբայրական համայնք, կազմված նրա ամբողջ բնակչությունից: Սակայն յերբեմն նրանց բոլորի համար անհրաժեշտ եր կրկնել. — «Գործը դեռ չի ավարտված. նա նոր ե սկսվում»: Առանց այս խրատի նրանք կկարծեյին, վոր մենք արդեն վճռական հաղթություն տարանք:

Անցյալ գիշեր կանգնեցրել էին հազար հինգ հարյուր բարիկադ, բայց վորպեսզի այսպիսի բաների կարելի լինի հավատալ, անհրաժեշտ ե սեփական աչքերով տեսնել: Մենք զենքի պակասություն ել չունեյինք, բոլոր զենքերը

փորված և հանված էին այն տեղերից, վորտեղ նրանք թաղված էին Մեծ հեղափոխության օրերից: (XVIII դարի հեղափոխություն):

Իր բնից դուրս յեկած մկան պես, վորը հետաքրքրությամբ ցցում ե ականջները, դուրս յեկա յես մեր տան մուկ ու նեղ միջանցքից և այդ բաբելոնյան խառնակության մեջ տարակուսանքով նայում էյի ողում ցցված պահակներին, այն բազմությանը, վորը տների բոլոր հարկերի լուսամուտներից կախված նայում եր փողոցներին զարմացած ու հիացած: Յես գնում էյի առաջ և զարմանում:

«Կարող ե պատահել, մտածում էյի յես — միթե ահա այս շինելով և պայուսակով զինվորը՝ հասարակ բանվոր ե: Միթե այս քաղաքը Պարիզն ե»:

Այնուհետև մտքերս խառնվեցին և միայն մի քանի րոպե հետո յես կարողացա մտածել կապակցված: Յես նայեցի Կլյունիյ հյուրանոցի կողմը և տեսա յերկու բարիկադ, վորոնք իրար հետ միացած էին այնպես, վոր հարկավոր եր անցնել քարերի վրայով, վորովհետև այստեղ չեր թողած միջանկյալ անցք: Բարձրանալով շրջապարսպի վրա յես տեսա յերրորդ բարիկադն ևս Լա-Գարդ փողոցի մուտքի մոտ. այդ բարիկադը դարձրած եր դեպի սուրբ Միքայելի հրապարակը: Բայց ամենից շատ ինձ ուրախացրեց այն, վոր առևտրականները չեյին փակել իրանց խանութները, վոր հաճախորդները մտնում և դուրս յանում էին գալիս, ուտում էին և խմում, ինչպես սովորական ժամանակ: Այս քարակույտերի մեջ կյանքն ընթանում եր իր կարգով, կարծես թե փողոցային կռիվը անվերջ պետք ե շարունակվեր:

Յես նայեցի մեր փողոցին: Հետո սկսեցի անցնել մեկ բարիկադից մյուսը մինչև Թղթի փողոցը, ամենուրեք լսելով, վոր Վենսենից սպասում են Մոնպանսեյին... վոր Բյուլժոնն ուղում եր բոլորին միանդամից կուլ տալ:

Բոլորը գանգատվում էին փամփուշտների պակասութ-
յունից. յես ինքս միայն մի անգամ կրակելու պաշար
ունեյի: Լա-Գարպ փողոցում յես հարցրի ազգային գվար-
դիային պատկանող մի զորականի, թե վորտեղ կարելի յե
վառող գտնել. նա պատասխանեց.

— Շտապեցեք Սենայի զորանոցը:

Այս գվարդիականը առաջնորդում եր մի դյուժին քա-
ջերի և ըստ յերևույթին հիացած եր, վոր տանում ե նրանց
այնպիսի տեղ, վորտեղ ամեն ինչ կարելի յեր ճարել
ուղածիդ չափ:

Զորանոցը գտնվում եր մի քիչ հեռու, Սենայի նըր-
բանցքում, բաղնիքների յետևը: Այս նեղ ու մութ անցքում
մենք քայլեցինք արագ և շարժով, հրացաններն ու նիզակ-
ներն ուսերիս դրած և արդեն լսում էինք, թե ինչպես
մյուս ծայրում քարերը դիպչում էին մեծ դարպասին, և
լսվում էին աղաղակներ.

— Բացեք...

Ներսում փակվել էին կեսվաշտ հրացանակիրներ մեկ
ուսայի հրամանատարությամբ: Բազմությունը ներս խուժեց
բակը. զինվորները զինաթափ արվեցին մեկ ակնթարթում:
Մերոնցից մեկը վերցնում եր հրացանը, մյուսները՝ պայու-
սակները փամփուշտներով: Դժբախտ հրացանակիրները
վոչինչ չէին ասում, և ի՞նչ եր մնացել նրանց անելու:

Յես ել անմասն չմնացի այդ ավարից, վերցնելով տասնե-
հինգ կամ քսան փամփուշտ թշվառ զինվորներից մեկի
պայուսակից, աղաղակելով.

— Կեցցեն առաջնահերթ զնդերը:

— Կտուժեմ յես ձեր պատճառով... պատասխանեց
զինվորը:

Կասկածից դուրս եր, վոր դա ևս ինձ նման ռամիկ դասա-
կարգից եր, նոր կոչված զինվորական ծառայության:

Ամբողջ զորանոցը զբաղեցինք մենք: Մերոնք անցան
աջ կողմը, բարձրացան լայն ու ազատ սանդուխդի վրա,
շարունակ կրկնելով.

— Զենք, զենք:

Բոլորս կարծում էինք, վոր Սենայի զորանոցում ռազ-
մանյութերի և զենքի անազին պաշար կա հավաքված:
Շատերը բարձրացնում էին հատակի տախտակները, հույս
ունենալով զենք գտնել այնտեղ: Սակայն դեռ մի քանի
որ առաջ բոլորը այստեղից դուրս եր տարված:

Ժամը 11-ին մոտ, հինգ կամ վեց ուսանողներ հասան
մեզ: Զեռքերում նրանք բռնած ունեյին տպագրած հայ-
տարարություններ և գոռում էին.

— Մինիստրության փոփոխություն:

Մեր ուսանողները միացան նրանց, բայց մենք այդ
քանի վրա ուշադրություն չդարձրինք, վորովհետև այդ զի-
ջումը մեզ շատ չնչին բան թվաց: Մի ժամ հետո յերևաց
ազգային գվարդիան աղաղակելով.

— Թագավորը հրաժարվեց գահից:

Նրանք բերկրանքի մեջ էին:

— Շատ լավ, ասաց մեր բարիկադի հրամանատարը:—
Թագավորը թող գնա, իսկ մենք ամուր կմնանք մեր տեղում:
Միայն հարկավոր չե շտապել. ավելի լավ ե նախորոք վո-
րոշենք մեր անելիքները:

Ցերեկվա ժամը 1-ին 7-րդ առաջնահերթ գունդը դույզ-
գույզ անցավ մեր մոտից, պարպելով հրացանները ողի մեջ:
Իսկ սպաները մեկ-մեկ մոտեցան մեզ ինչպես խաղաղ քա-
ղաքացիներ: Այժմ մենք հասկացանք, վոր ժողովուրդը տա-
րել ե հաղթությունը և վոր այլևս վախենալու կարիք չկա:

Սակայն ժողովուրդը չոգտվեց իր հաջողության պտուղ-
ներից: Բուրժուազիան հեղաշրջման բոլոր ոգուտները իր
համար ոգտագործեց և հուլիսյան որերին աշխատանքի և
հացի պահանջով փողոց դուրս յեկած բանվորներին նա
անողորմ կերպով զնդակահարում եր հազարներով այդ
սարսափելի որերում:

Անցավ 23 տարի, և նորից գետի նման հոսեց Պարիզի
բանվորների արյունը, վորոնք 1871 թվականին ապստամ-

բուժյունն բարձրացրին գինավորականների և բուրժուազի-
այի դեմ: Յերկու ամսից մի քիչ ավելի դիմացավ բան-
վորական առաջին կառավարութունը: Այդ ժամանակաշը-
ջանում «Պարիզի Կոմունան» կարողացավ զրավել ամ-
բողջ աշխարհի բանվորության սիրտը, և նրա հիշատակը
կենդանի յե մինչև այսօր: Խորհրդային Միությունը ամեն
տարի տոնում է մարտի 18-ը — Պարիզի Կոմունայի հաջ-
տարարման մեծ ուրբ:

— Իսկ հիմա Պաքիզում ապստամբութիւններ չե՞ն լինում, — հարցրեց մի անգամ Կոլյան ժակին:

Նրանք այդ ժամանակ գտնվում էին Պեր-Լաշեզ ան-
վանված քաղաքային մեծ գերեզմանոցում՝ «Կոմուներների
պատի» մոտ: Դա մի բարձր ու գորշ պատ է, վորի մոտ
1871 թվականի մայիսին գնդակահարվեցին բազմաթիվ
բանվորներ, յեւր Ֆրանսիական մայրաքաղաքը գրավեցին
կառավարական զորքերը:

— Այնպիսի մեծ հեղափոխություն, ինչպիսին 1871 թվականին էր, վաղուց չի յեղել, սակայն ժողովրդական հուզումներ հաճախ են տեղի ունենում: Մեր փողոցները 1927 թվին տեսնում եյին բարկաճայթ մեծ դեմոնստրացիաներ, յերբ հայտնի յեղավ, վոր ամերիկական կապիտալիստները ուզում են մահապատժի յենթարկել յերկու հեղափոխական բանվորներին՝ Սակկոյին և Վանցետիին, վորոնք անիրավացի կերպով մեղադրվում եյին մի սպանության մեջ, վորպիսին նրանք չեյին կատարել: Այն ժամանակ Ֆրանսիայի պրոլետարիատը ամբողջ աշխարհի աշխատավորության հետ պահանջում էր ազատել անմեղ դատապարտվածներին, իսկ յերբ այդ յերկու խալացին ամբողջ աշխարհի բանվորության ջգրու աշխուժանային սպանվեցին բուրժուազիայի ձեռքով, պարբեցիները ջարդեցին ամերիկական լրագրերի կիսակները, ցանկանում եյին ջարդել նաև ամերիկական ներկայացուցչության լուսամուտները, բայց նրանց խանգարեց վոստիկանությունը: Վոստիկան-

ները ցրում ելին ցուցարարներին, և գործն այն տեղն հասավ
վոր մեր քաղաքի փողոցներում բարիկադներ շինվեցին:

Գիշ չե նաև այն հուզումների թիվը, վորոնք տեղի եյին ունենում կառավարության կարգադրությամբ Մարոկկո գործերը ուղարկելու առթիվ:

— Իսկ ինչո՞ւ այնտեղ գործեր ելին ուղարկում: Մի՞թե ձեզնում պատերազմը չի վերջացել:

— Վնչ, տեսնում եք, այս խնդրում հարկավոր է ձեզ շատ բան բացատրել: Բուրժուական պետությունը, վոր ձգտում է իշխել ուրիշ ավելի թույլ ժողովուրդների վրա, անհրաժեշտ է վոր ունենա ուժեղ զորք և նավատորմ: Ֆրանսիան ցանկանում է լինել ամենահզոր, ուրիշներին իր կամքը թելադրող պետություն: Նա ներկայումս Յեվրոպայում ունի ամենամեծ բանակը, մինչդեռ մինչև պատերազմը զինվորների թվով գրավում էր 3-րդ տեղը: Ֆրանսիական պետությունը 660 հազար հոգուց բաղկացած բանակ ունի, կազմված ինչպես բնիկ ֆրանսիացիներից, նույնպես և գյուղացիների բնակիչներից՝ նեգրերից սերիա-ցիներից, արաբներից, աննամիտներից (հնդկաչիներից) և այլն: Բացի դրանից յերկրի ներսում անկարգություններն ու հեղափոխական շարժումները ճնշելու համար կան նաև կան ծովային ռազմական նավատորմը շատ ավելի թույլ է, քան ցամաքային բանակը. նա չի կարող մրցել անգլիա-կան՝ թվով և վորակով մեծ նավերից կազմված և զորեղ նավատորմի հետ: Սակայն փոքր ականակիրները, սուզա-նավերը և առանձնապես ողային նավերը բազմաթիվ են և հիանալի կառուցված, Ֆրանսիայի ողային նավատորմը այժմ առաջինն է աշխարհում:

Կարդացե՛ք Թեկուզ ձեր հեղինակներից Վերա Իսերի
հեկարագրած ողագնացության ցուցահանդեսը:

• — Շատ լավ, այդ մենք կկարդանք, բայց դու մեզ վոչինչ չես պատմել ֆրանսիական գյուղի մասին, ասացին Կոլյան և Կոստյան։

— Ճիշտ է ձեր նկատողությունը, պատասխանեց ժակը. յես կողողեմ իմ սխալը և կպատմեմ ձեզ գյուղի մասին:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՅՈՒՂԸ

Ֆրանսիայում գյուղերը բավականին մեծ են, նեղ ու ծուռ փողոցներով: Տները շինված են ավազաքարից և ծածկված են կղմինարով կամ թիթեղով: Տները շինվում են այնպես, վոր նրանց դռներն ու լուսամուտները նայում են դեպի բակը, իսկ փողոցի կողմի պատը խուլ է, առանց դռների և լուսամուտների: Այս յերևույթի պատճառն այն է, վոր Ֆրանսիայում փողոցի վրա բացված դռների և լուսամուտների համար գանձվում է հատուկ տուրք: Բակում, տան դիմաց գտնվում են գոմեր և սարայ, նույնպես ավազաքարից շինված: Տան յետևը գտնվում է բանջարանոցը և պարտեզը պտղատու ծառերով, վորոնք բաժանվում են բակից փայտե ձողերով: Բակերի մեջտեղում փորվում է ջրհոր յերկաթե անիվով, վորի ոգնությամբ իջեցնում և բարձրացնում են յերկար թփից կախված դուլը: Գոմերի առջև կտեսնենք տավարի աղբի կույտեր, վոր այգու և բանջարանոցի համար ծառայում են վորպես պարարտանյութ:

Գուլակների տներն ավելի լավ են, բանջարանոցներն ու պարտեզներն ընդարձակ: Բացի սրանից նրանք ունեն խաղողի այգիներ, մեծ հողամասեր, շատ տավար և փոք: Գյուղացիները ղրանց սարդ են անվանում, և շատ իրավացի յեն: Մեկին պարտք տալիս կուլակները խճճում են նրան իրանց նուրբ վոստայնի մեջ և վերցնում դժոխային տոկոսներ և, վոր գլխավորն է, զրավ են վերցնում տներ, հողեր, խաղողի այգիներ և այլն: Յեվ վայ այն գյուղացուն, վորը մեծ կարիքների հետևանքով ժամանակին չի կարողանում տոկոսները տալ կամ պարտքը վերադարձնել: Այսպիսի դեպքերում կուլակը խղճալ չգիտե.

նա խլում է խեղճի վերջին ձին, կովը, տան կարասիները, ծախում է այդ բոլորը և դուրս վռնդում տնից քայքայված գյուղացուն իր ընտանիքի հետ միասին: Յերբ կուլակը իր ընտանիքի ուժերով չի կարողանում վարել տնտեսությունը, վարձում է մշակներ (բատրակ), վորոնց աշխատեցնում է առավոտից մինչև յերեկո, պահում է կիսաքաղց վիճակում, իսկ առանց այն ել չնչին աշխատավարձը տալու ժամանակ անամոթորեն խաբում է նրանց վարձը տալու ժամանակ անամոթորեն խաբում է նրանց հաշվի մեջ, կտրելով աշխատավարձից թեկուզ կոպեկներ: Գյուղի չքավոր տարրը ասում է կուլակներին, բայց և վախենում է նրանցից, վորովհետև Ֆրանսիայում, ինչպես և բոլոր բուրժուական յերկրներում, որենքը հարուստների և ուժեղների կողմն է:

Յերկրագործությունը Ֆրանսիայի տնտեսության գլխավոր մասն է կազմում: Ազգաբնակչության համարյա կեսը ապրում է գյուղերում և ավաններում: Վերջին տվյալներով գյուղատնտեսությամբ պարապում է յերկրի ազգաբնակչության մոտ 41 տոկոսը (չհաշված գաղութների բնակիչները):

Իր արտադրանքի արժեքով յերկրագործությունը զգալի չափով գերազանցում է արդյունաբերությանը: 1921 թվականին Ֆրանսիայի 60 միլիարդ ֆրանկ յեկամուտից 42 միլիարդը տվել է գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսության ամենակարևոր ճյուղերն են անասնապահությունը, գինեգործությունը և կաթնատնտեսությունը: Այնուամենայնիվ ֆրանսիական գյուղացու ապրուստը շատ ծանր է: Գյուղացիների մեծամասնությունը ունի շատ փոքր հողամասեր: Հինգ միլիոնից ավելի հողամասերից չորս և կես միլիոնը 10 հեկտարից չեն անցնում: Այս փոքրիկ հողամասերը մեծ դժվարությամբ են կերակրում իրանց տերերին և նրանց ընտանիքները: Չնայած ծանր աշխատանքին, վորով գյուղացին մաշում է թե իրեն և թե իր ընտանիքի անդամներին, վորպեսզի ձեռքից չհանի հողամասը, նա

միշտ ել չբավորության շեմքին ե գտնվում: Ճիշտ ե, ինչպես ամեն տեղ, այնպես ել Ֆրանսիայում յերկրագործական միջերջների գինը զգալի չափով բարձրացավ համեմատած նախապատերազմյանի հետ, սակայն ավելի շատ թանկացան գյուղացու թե անձնական սպառման և թե տնտեսության անհրաժեշտ արդյունաբերական ապրանքները. յեթե հացը թանկացավ 3 անգամ, ապա հաղուստը, կոշիկները, յերկրագործական գործիքները, քիմիական պարարտանյութերը թանկացան հինգ, վեց անգամ և ավելի: Փոքրիկ խանգարում տնտեսության մեջ, ընտանիքի աշխատունակ անդամի յերկարատե հիվանդությունը կամ մահը, տավարի կոտորումը և այլ փորձանքներ ստիպում են գյուղացուն դիմել փոխառության և դարձնում են նրան ճորտ կուլակին կամ բանկին: Նրանք գյուղացուն դրամական նպաստ տալով, դարձնում են նրան իրանց մշակը, վորը կաշվից դուրս ե գալիս, վորպեսզի մի քիչ փող հավաքի միայն տոկոսները տալու. միայն անունով ե նա տեր մնում հողամասին, իսկ մոծոմն ուշացնելու դեպքում նրան անհապաղ վճարում են տնից, ամբողջապես գրավելով նրա գույքը: Այն ժամանակ գյուղացին դառնում ե ի հարկե բատրակ, վորն աշխատում ե ուրիշի հողի վրա տիրոջ ոգտին: Յրվածությունն ու քաղաքական ցածր գիտակցությունը հնարավորությունն չեն տալիս բատրակներին իրանց դրությունը լավացնելու: Մինչև հիմա վատ կազմակերպված ֆրանսիական բատրակները մնում են իրանց զիջատիչ աղաների ճիրաններում: Ստանալով չնչին վարձ կատարած ծանր և մաշող աշխատանքի համար, նրանց մեծամասնությունը դեռ յերագում են փող հավաքել, գնել հողամաս և դառնալ սեփականատեր: Այդ նպատակով նրանք հաճախ պարտքի տակ են ընկնում և նորից խճճվում նույն կուլակ-աղաների ցանցի մեջ:

Անասնապահությունը Ֆրանսիայում գյուղական տրտեսության յեկամտաբեր ճյուղերից մեկն ե. Գյուղացի-

ները պահում են ձիեր, կովեր, յեղներ, նրանք շատ խնամքոտ վերաբերմունք ունեն դեպի տավարը, համարելով այն իրանց բարեկցության հիմք: Պերշերոնյան ձիերը բացի իրանց չափից աչքի յեն ընկած անսովոր ուժով և դիմացկունությամբ. նրանով հուշակված ե Ֆրանսիան: Բեռներ տեղափոխելու համար նրանք անփոխարինելի յեն: Նորմանդական կովը ցածրահասակ ե, սակայն շատ կաթ ե տալիս և ամենալավ վորակի: Կաթնատնտեսությունը Ֆրանսիայում խոշոր նշանակություն ունի: Կաթից պատրաստում են յուղ (ամենաբարձր տեսակը նորմանդական յուղն ե) և վողջ աշխարհում հայտնի ֆրանսիական պանիրները. թե մեկը և թե մյուսը մեծ քանակությամբ ուղարկվում են արտասահման:

Վարտոֆիլը նույնպես Ֆրանսիայի տնտեսության մեջ ունի խոշոր նշանակություն: Տարեկան ստացվում ե մոտ 105 միլիոն կվինտալ (1 կվինտալը = 100 կիլոգրամի = 6 փթի) կարտոֆիլ:

Գինին Ֆրանսիայում շատ ե ժան ե և լավ վորակի: Գինեգործությամբ Ֆրանսիան բռնում ե առաջին տեղն աշխարհում: Գինու եժան տեսակները գործ են ածվում յերկրի ներսում, իսկ թանկ տեսակները (բուրգունդական, բորդոյի, շամպայնի) ուղարկվում են արտասահման:

ՈՂԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԴԵՍԸ ՊՍՐԻՋՈՒՄ

Փարիզում յեղել ե ողագնացության 10-րդ ցուցահանդեսը: Ցուցահանդեսի շենքը այնքան մեծ ե, վոր ամենավիթխարի մեքենաները յերևում են այնտեղ այնպես, ինչպես ճանճերը սեղանի վրա... Թեև շենքի մեջ ողը անշարժ ե, սակայն թվում ե, թե քամի յե փչում. այնքան շատ են թևերը շուրջդ: Կենտրոնում կանգնած ե «Ուենո» մեքենան: Նրա կես մասից հանված են կեղևն ու բոլոր ծածկոցները և յերևում ե նրա հսկայական ամբողջ կմախքը, վորը նման ե ինչ վոր սարսափելի հրեշի: Նա այնքան

մեծ է, վոր սովորական մեծության «Ֆարմանը» կարող է թագնվել նրա թևի տակ, ինչպես ձագը թագնվում է թըխսի թևի տակ: «Ռենո» մեքենան ունի սանդուխդ: Յերկար հերթ բռնելով և բարձրանալով մինչև յեզրը, կարելի չէ տեսնել ներսը: Այստեղ 15 ճանապարհորդական տեղ կա: Մեքենան վոչ այնքան շոյալությունն ու շքեղությունն ի նկատի ունի, վորքան անհրաժեշտությունը: Բազկաթոռները թավշապատ չեն, այլ փայտե, թեթև կերպով ներկված կարմիր ներկով: Ողաչույի տեղում կա մի կապոց պարան հատակի վրա և փոքր խարխախ, ճիշտ այնպես, ինչպես շոգենավի վրա: Կողքին փակցրած է կարճ բացատրություն. «Այս խարխախը հնարավորություն է տալիս ինքնաթիռը պահել ջրի վրա»:

Ահա «Կատապուլտի» ոգանավը: Նա կարող է վեր բարձրանալ ցանկացած տեղից, ամեն մի նավից, համարյա ամեն տանիքից: Նրան հարկավոր չէ մեծ տարածություն վազըը արագացնելու համար: Նրան դնում են կարճ ռելսերի վրա. նա վազելով նրանց վրայով մեկից ողն է բարձրանում:

Յուցահանդեսը մեծ է, ինչպես անտառ: Նրա բազմազանությունը զարմանալի չէ: Այստեղ են մռայլ, անաչք, թռչող զրահակիրները, վորոնց թնդանոթների փողերը նայում են զրահի տակից. փոքրիկ ականակիրները, նեղ, վայելչակազմ, սլկուն, ծածկված ալյումինե թեփով, բարձրացրած իրանց սուր դնչերը: Այերուպլաններ զբոսանքի համար փափուկ թախտերով, գլխարկների համար պատրաստված ցանցով և գավաթով, վորի մեջ բացված կարմրին է տալիս վարդը: Վորսորդական ինքնաթիռները գորշ դեղնավուն են, լայնակուրծք և դիմացկուն, ինչպես քերծենները: Սանիտարական մեքենաների մեջ շտապ ոգնության կառքերի նման մեկեն յետ է բացվում ամբողջ պատը դեղատնով: Այստեղ կան ողանավեր, վորոնք հարմարեցրած են առանձնապես ռումբեր թափելու համար:

Սակայն այս ռումբերը բերում են վոչ թե մահ, այլ կյանք, վորովհետև լցված են կենսամթերքներով: Այս ռումբերը հավանորեն պատրաստվում են եքսպեդիցիաներին զրթ-բախտ պատահարների ժամանակ ողնելու կամ պաշարման հետևանքով քաղաքներում առաջացած սովի դեմ կըռվելու համար: Յեթե հանենք նրանց մետաղե ծածկույթը, յերևան կզան ռանդայի տաշեղի նման վոլորած ծրարներ, վորոնց մեջ կան թեյ, սուրճ, հաց և չկոտրվող տափակ շշերով գինի: Այստեղ կան նաև բեռնակիրներ՝ ծանրոցներ փոխադրելու համար, կան տանկեր ամպերի խառնվածքի և դեղերի դեմ կռվելու համար: Պարաշյուտաները նույնպես վոչնչով յետ չեն մնում: Նրանք պարզ կերպով ցույց են տալիս, թե ինչպես հարմարորեն և հնազանդությամբ բացատրվում են, թե ինչպես հաճելի և լավ է ճանապարհորդի համար նրանց ոթոցներում որորվելը: Այստեղ է վերջապես, արերոստատը, այդ ողային դիտողը:

Աերոստատի մեջ կանգնած է մանեկներ լրիվ պատրաստությամբ: Նրա գլխին կա սաղավարթ, կրծքին՝ հեռադիտակ, հագնված է նա ջրասույգի նման: Յեվ գիտակ մարդիկ զինվորական վարչական հիմնարկներից հաստատում են նրա հագուստի՝ ջրի համար անթափանցելի կտորի լանա կարող է դիմանալ մառախուղի մեջ: Ողային նավանա տորմը, ողային հաղորդակցությունները, ողային պաշտպատությունը — այս բոլորը հզորության նոր աղբյուր է, նոր պաշտպանություն:

— Այդ մեքենաների մեջ կա մեկը, վոր պսակված է փառքով: Նրանով ողաչուն հասել է միանգամայն ֆանտաստիկ բարձրության, հավասար 41 եյֆելյան* աշտատակի, զրված մեկը մյուսի վրա: Իսկ ցուցահանդեսում դա ներկայացված է այսպես — 41 աշտարակ, յուրաքանչյուրը մատիտի մեծությամբ: Նրանք զրված են մեկը մյուսի

* Ամենաբարձր աշտարակը աշխարհում:

վրա և վերջանում են բարձր ոգում: Իսկ ստորոտում հողն այնպես է, ինչպես նա տեսնվում է 41-րդ աշտարակի բարձրությունից. ծառերի կանաչ կոծիծներ և գետի ապակե ժապավենը: Մարդկությունը ընտելացել է ողազնացության: Լեռնային, ծովային, հյուսիսային և հարավային կուրորտները առաջարկում են հիվանդներին իրանց ողային գնացքները: Առաջարկությունը մեկը մյուսից գայթակղեցուցիչ է: Մեկ ողային ընկերություն խոստանում է ձեզ ձրի թռիչք Թունիս, նախաճաշով, և ճաշով, յեթե դուք գտնեք նրա համար 5 հոգի, վորոնք ցանկանում են թռչել վճարով:

Թևերից մեկի հովանու տակ, պատվավոր տեղում, սակայն մի քիչ մեկուսի, վոր շատ աչքի չընկնի, դրված է սեղան, վորտեղ ընդունում են անդամավճարներ և վորտեղ «Ջարդված թևերի ընկերության» անդամ են գրվում: Սակայն այս ել այնքան սարսափելի չէ. վորտեղ թռչում են, այնտեղ ել թևեր են ջարդում: Բայց ովքեր են սեղանի մոտ նստած այն յերկուսը: Նրանք անդամագրում և գրուցում են հասարակության հետ... Նրանք համեստ, բայց լավ են հագնված: Սակայն մեկը չունի վոչ ականջներ, վոչ քիթ, իսկ մյուսի ամբողջ յերեսը ծածկված է կրակի այրվածքների սպիներով, նման աներևույթ ճիրաններից մնացած հետքերի... Քիթ տեղ յերևում է փոքրիկ կարմիր անցք, մի այրված պինչ և ուրիշ վոչինչ: Ականջների տեղ — նույնպես յերկու անցքեր: Աչքերը ծածկված են սև ապակիներով, մազերի տեղ՝ պարիկ (կեղծ մազեր), վորը կանոնավոր կերպով հասնում է ունքերին: Յերեսին կաշվի տեղ յերևում է կարմիր թեփ: Այդ մարդը խոսում է քաղաքավարի, սակայն ձայնը հնչում է կարծես բարձի տակից: Մյուս մարդը պարանոց չունի. գլուխը ուղղակի հանգչում է ուսերի վրա: Բացի դրանից նրա մեկ ձեռքն ու մեկ վոտքը չկա... Այս յերկու մարդը առաջարկում են ցանկացողներին գրվել «Ջարդված թևերի ընկերության»

անդամ: Ցանկացողները գրվում են: Սակայն նրանք հուզմունքից անսովոր կերպով ժպտում են և նրանց մատները քսակից փող հանելիս թեթև կերպով դողում են:

Անքիթ և անականջ մարդիկ նախկին ողաչուններն են: Նրանք յերկուսն ել տուժել են ողանավի խորտակումից. ողանավի անկման ժամանակ առաջացել է հրդեհ: Նրանք այրվել են կիսով չափ, նրանք կենդանի յեն միայն կիսով չափ:

— Միթե սա վայրագություն չի, անհամարձակ ասում եմ յես բացիկներ ծախող ուրիորդին, միթե սա սարսափելի չե՝ ստիպել նրանց ներկա լինել այստեղ, իմ կարծիքով, սա անգթություն է:

Աղջիկը շեշտակի նայում է թախծալի գորշ աչքերով. նա ինքը հիվանդոտ և նիհար է:

— Վե՛հ, պատասխանում է նա, այնուամենայնիվ դա լավ է, վոր նրանք այստեղ են: Հակառակ դեպքում չե՞ վոր մարդիկ կարող եյին բոլորովին մոռանալ այն մասին, թե վորքան յերկուդալի յե ողի մեջ թռչելը:

Ցուցահանդեսից դուրս գալով մտածում ես այն մասին, թե ինչպես դժվար է մարդկության ճանապարհը դեպի հաղթություններ: Յե՛վ 41 եյֆելյան աշտարակի բարձրությունը ել ավելի զարհուրելի յե դառնում անաչք մարդուն հիշելիս:

Այնուհետև չափահաս ֆրանսիացիները բացատրեցին մեր մանուկներին, վոր ֆրանսիայում ողանավերի մեծ մասը ծառայում է ռազմական նպատակներին: Իսկ ողային և ծովային նավատորմի կառուցումը, մեծ սպառազինումները հսկայական ծախսեր են նստում յերկրի վրա:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՐՏՔԵՐԸ

Ավտոմոբիլների շարանները փողոցներում, հազարավոր գործարանների ծխացող ծխնելույզները, շախտանների յեռուն աշխատանքը, բազմապիսի ապրանքներով լեցուն և

պայծառ լուսով լուսավորված խանութները, ամեն կողմ
սլացող գնացքներն ու շոգենավերը, վորոնք կրում են
մեքենաներ, ամեն տեսակ գործվածքներ, ձկների պահա-
ծոններ, գինիներ և մրգեղեն, — այս բոլորը կարող են շատ
հարուստ յերկրի տպավորությունն ստեղծել: Բայց յեթե
մենք նայենք թե ինչ է կատարվում պետական գանձա-
րանում, կտեսնենք, վոր Ֆրանսիան ունի շատ պարտքեր
ինչպես սեփական քաղաքացիներին (ներքին փոխառու-
թյուններ), այնպես էլ ոտարյերկրացիներին (արտաքին
փոխառություններ): Պատերազմական ծախսերը ծածկելու
և քայքայված արդյունաբերությունը վերականգնելու հա-
մար ֆրանսիական կառավարությունը պարտք է վերցրել
45 միլիարդ վոսկի ֆրանկ պետութայն ներսում և 40 մի-
լիարդ արտասահմանում, գլխավորապես Անգլիայից և
Ամերիկայից:

Սա շատ ծանր դրություն է ստեղծել: Հարկավոր է
լինում ֆրանսիական քաղաքացիներին վրա դնել նոր ու
ծանր հարկեր, վորպեսզի փոխառությունների տոկոսները
վճարելու համար փող ստացվի: Բոլոր դժվարություններից
դուրս գալու համար, կառավարությունը ձգտում է յերկար
ժամանակով և ձեռնտու պայմաններով նոր ու մեծ փո-
խառություն կնքել Ամերիկայում: Ֆրանսիական բուրժու-
ազիան ներկայումս մեծ խնամք է տանում ամերիկացի-
ներին, հրավիրում է իր մոտ ամերիկական ֆաշիստներին,
այսպես կոչված «ամերիկական լեգեոնը», կազմակերպում
է նրա համար հանդիսավոր ընդունելություններ և այլն: Բայց
ֆրանսիական բանվորները թշնամաբար են հանդիպում
ամերիկական աջ կուսակցությունների ներկայացուցիչնե-
րին, վորոնք սպանեցին հեղափոխական բանվորներ՝ Սակ-
կոյին և Վանցետտին: Այդ պատճառով ֆաշիստական լեգի-
ոնը հանդեսների հետ միասին տեսել են նաև ահեղ ցույցեր:

— Հիշում ես, Ժակ, դու ուզում եիր մեզ պատմել,
թե ինչո՞ւ ձեզ մոտ Մարտիկո գործ ուղարկելու համար

առաջ եյին գալիս հուզումներ — հիշեցրեց մի անգամ Կոս-
տյան ընկերոջը:


— Այո, Իսկ դուք գիտե՞ք ինչպիսի պետական կառուց-
վածք է մեր յերկրում:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՆ

Որենսդրական իշխանությունը պատկանում է ժողո-
վրդական ներկայացուցիչների յերկու պալատներին՝ պատ-
գամավորների պալատին և սենատին: Առաջին պալատի
համար պատգամավորներ ընտրելու իրավունք ունեն ֆրան-
սիական բոլոր քաղաքացիները, վորոնց տարիքը 21-ից ցածր
չէ և ապրել են տվյալ վայրում կես տարուց վոչ պակաս:
Ընտրական իրավունքից զրկված են բոլոր կանայք, վո-
րովհետև ֆրանսիական ուրենքները կնոջ իրավահավասա-
րություն չեն ճանաչում, զինվորները, նավաստիները և
սեզոնային բանվորները, վորոնք փոխվում են մի տեղից
մյուս տեղ, քարտաշները, ատաղձագործները, ներկարար-
ները, հնձողները և այլն: Այս բանը ձեռնտու չէ ձախ
կուսակցություններին, վորովհետև գործի շարքերը կան-
չված յերիտասարդությունը, բանվորների վերը հիշված
կարգերը և շատ կանայք հեղափոխական տրամադրություն
ունեն: 1926 և 27 թվականներին ցամաքային և ծովային
զինվորների մեջ ծագած հուզումները կարող են ծառայել
վորպես պերճախոս ապացույց այն բանի, վոր զինվորա-
կան յերիտասարդությունը համակրում է ձախ կուսակ-
ցություններին: Ռուրում և Տուլոնում, Մարոկկոյում և
մասսայական ցույցեր ֆրանսիական կառավարության
պատերազմական միտումների դեմ, դեպի գերմանական
շրջաններն ու ապստամբված գաղութները գործեր ուղար-
կելու դեմ:

Հուզումներին մասնակցողներին ձերբակալում են, փա-
կում զինվորական մռայլ բանտերում: Բայց դժգոհությունն

ու հուզումները զորքերի մեջ շարունակվում են: 1927 թվականին թվով 800 պահեստի զինվորներ հրաժարվեցին գնալ իսկական զինվորական ծառայության, և կանոնա-վոր զորքերը չցանկացան զենք բարձրացնել նրանց վրա:



Նկ. 20. Ֆրանսիական ուղիմանավ:

Հենց Պարիզի տակ և Վերսալում տեղի յեն ունենում պահեստի զինվորների նոր բռնկումներ, վորոնք պահանջում են իրանց համար կյանքի ավելի տանելի պայման-

ներ, լավ սնունդ և մաքուր շապիկներ: Զինվորական հրա-մանատարությունը զիջումներ արավ:

Այս բոլոր անցքերը ապացուցում են, վոր ֆրանսիա-կան զորքերը բուրժուական կառավարության համար չեն կարող հուսալի հենարան համարվել:

Կանայք համակրում են ձախ կուսակցություններին յերկու պատճառով. նախ՝ ֆրանսիայում վերջին տարիները ամենաանհրաժեշտ մթերքների գները անընդհատ բարձրա-նում եյին: «Այդ թշվառությունը ավելի յե զգում վոչ միայն կին-բանվորուհին, այլև ազգաբնակչության կարի-քավոր խավերի ամեն մի տնտեսուհի կինը, — գրում ե ֆրանսիան լավ ուսումնասիրած մի մարդ: — Այսպիսի ժա-մանակաշրջանում խոհանոցը հեղափոխականացնող դեր ե խաղում՝ ստիպելով ամենապահանջողական կանանց անգամ զբաղվել քաղաքական հարցերով»: Յերկրորդ՝ ավելի շատ են զրգում մայրերին, կանանց և քույրերին պատերազմի պատրաստությունները և արշավանքներն Աֆրիկա՝ նոր գաղութային շրջաններ գրավելու կամ հները պահելու համար: Նոր պատերազմ չի ուզում կանանց ճնշող մեծա-մասնությունը, ինչ ել վոր գոռան հայրենասեր գեներալները, գործարանատերերը և կալվածատերերը, ինչ ել վոր գրեն կապիտալիստների միջոցներով հրատարակվող թերթերը: Ընտրողների վրա ազդում են բուրժուական կառավարու-թյանը հարկավոր ուղղությամբ կաշառված թերթերը, ու-ժեղ կուսակցությունների նախընտրական աղմկոտ ագի-տացիան, լայն, հազվագյուտ դեպքում կատարվող խոս-տումները, ճոճոս ճառերը, պայծառ, կոչ անող պլակատ-ները: Հեղափոխական խավերին հնարավորություն չեն տա-լիս անարգել կերպով ընտրողներ հավաքել. հեղափոխական բանվորների դեմ դատական գործ են սկսում, մեղադրելով նրանց խռովարարության կամ հայրենիքի դավաճանու-թյան մեջ, և նրանց նկատմամբ գործադրելով ձերբակալու-թյան մեջ, և նրանց նկատմամբ գործադրելով ձերբակալու-թյուն, բանտարկություն, աքսոր: Այդ պատճառով հեղա-

Ֆրանսիան տիրապետում է Աֆրիկայում համարյա 11 միլիոն կիլոմետր հող, Ասիայում և Ամերիկայում ևս համարյա մեկ միլիոն կիլոմետր տարածություն: Այդ գաղութներում ապրում են մոտ 58 միլիոն մարդ: Հետևապես Ֆրանսիական կալվածները այլ աշխարհամասերում 20 անգամ ավելի յեն մետրոպոլիայից (բուն յերկրից) իրանց տարածությամբ: Գաղութներում ֆրանսիացիների թիվը շատ չնչին է, ամբողջ ազգաբնակչության 2%-ից վոչ ավելի. մնացածները բնիկներն են: Այս առթիվ գերմանացիք սրամիտ նկատողություն ունեն. «Ֆրանսիան գաղութներ ունի, գաղթականներ չունի, Գերմանիան գաղթականներ ունի, գաղութներ չունի, միայն Անգլիան ունի՝ գաղութներ և գաղթականներ»: Ֆրանսիան ճանաչողներից մեկը գրում է: «Ֆրանսիական գաղութների ամենակարևոր մասը Հյուսիսային կամ փոքր Աֆրիկան է, վորը ներկայացնում է կարծես մի կղզի, յերեք կողմից շրջապատված ծովով (Ատլանտյան ովկիանոս, Միջերկրական ծով), իսկ չորրորդ կողմից՝ Սահարա անապատով: Իր կլիմայով, բուսականությամբ Փոքր Աֆրիկան կազմում է Հարավային Յեվրոպայի շարունակությունը և հատկապես պիտանի յե գաղթականներ բնակեցնելու համար: Այստեղ են գտնվում յերկու մեծ գաղութներ՝ Ալժիր և Թունիս, և մոտ անցյալում ձեռք բերված Մարոկկոն: Ալժիրում ապրում են կաբիլներ և արաբներ, Թունիսում՝ նույն ժողովուրդները և բերբերները: Այս շրջանի պտղաբեր հողերը գտնվում են ծովափերին. իսկ նրանց հարավային մասերը գտնվում են: Բոլոր լավ հողերը վերցրել են յեվրոպացիանապատ են: Բոլոր լավ հողերը վերցրել են յեվրոպացիները, բնիկներին թողնելով աննշան հողամասեր: Տեղացիները իրանց գյուղական տնտեսությունը վարում են դեռնին ձևերով և ստանում են իրանց դաշտերից բոլորովին հին ձևերով և ստանում են իրանց դաշտերից բոլորովին աննշան բերք: Կաբիլ գյուղացիները ապրում են չափազանց աղքատ և վատ: Ալժիրի բնիկները մեծ ատելությամբ

և վրեժով են լցված դեպի ֆրանսիացիները, վորոնք խլել են նրանցից լավագույն հողերը: Յերկրագնդի յերեսին յեղած շատ հարստահարվածների նման նրանք ևս հավատ ունեն դեպի կոմունիզմը: Կոմունիստական կուսակցուցությունն այստեղ մեծ համակրանք և վստահություն է վայելում ազգաբնակչության կողմից, բայց դեռ փոխարեն



Նկ. 22. Ֆրանսիական կոմունիստ Դորիո, վոր ժողովրդականություն է վայելում Ֆրանսիայի գաղութային ժողովուրդների մեջ:

հալածվում է ֆրանսիական կառավարության կողմից, վորը վախենում է այս կուսակցությունից: Արաբների մեջ կան շատ հարուստ հողատերեր, վորոնք ունեն մի քանի հազար հեկտար տարածությամբ կալվածներ: Այս հողատերերը իհարկե իշխանության դեմ չեն բողոքում: Մետրոպոլիտան Ալժիրից և Թունիսից ստանում է խոշոր բարիքներ. նա տանում է այստեղից՝ գարի, ցորեն, գինի, ծխախոտ, մրգեր, մետաքս, պարարտանյութեր, յերկաթ: Բացի դրանից Ֆրանսիան ստանում է մեծ

գումարներ վաճառքի համար իր այստեղ բերած ապրանքներից՝ շաքարից, նավթից և զանազան գործվածքներից:

Ներկայումս ֆրանսիական կառավարությունը մտածում է Սահարայի և Ալժիրի վրայով յերկաթուղի անցկացնել, վորպեսզի հնարավորություն ունենա գաղութային գործերը Աֆրիկայի կենտրոնից Ֆրանսիա տանել: Ամենախեղճ գաղափարներից պատկանող շատ ալժիրցիներ թողնում են իրանց հայրենիքն ու տեղափոխվում են Ֆրանսիա, վորտեղ առայժմ դեռ կարողանում են իրանց համար աշխատանք գտնել:

Մի քիչ այլ վիճակում է Աֆրիկայի հյուսիսում գտնվող յերրորդ ֆրանսիական գաղութը՝ Մարոկկոն: Այս պետությունը XX դարի սկզբներին դեռ անկախ էր: Հետո

առանց նվաճումների, Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքված հասարակ պայմանագրով ճանաչվեց, վոր Ֆրանսիան ինչ վոր առանձին իրավունքներ ունի նրա վրա: Յեվ տեղի ունեցավ կենդանի մարմնի բաժանում. յերկրի կեսը հասավ Իսպանիային, մյուս ավելի մեծ մասը առանց կովի դրվեց Ֆրանսիայի «հովանավորության տակ»: Մարոկկոյի սուլթանը ստիպված յեղավ համաձայնվել. նրա ուժերից վեր եր կովել յեվրոպական հողը պետությունների դեմ: Անգլիան, Իսպանիան և Ֆրանսիան պայմանավորվեցին, թե ինչպես բաժանեն ուրիշի պետությունը, բայց Իտալիան և



Նկ. 23. Քաղաքի Ալժիրում:

Գերմանիան այդ բաժանումից շատ անբավական մնացին. նրանք ցանկանում էին իրանք տիրանալ Մարոկկոյին:

Մինչդեռ յեվրոպացիք վիճում էին և կովում անարդար բաժանման համար, Մարոկկոյի լեռնաբնակ ցեղերը՝ ռիֆիները ապստամբություն բարձրացրին նրանց դեմ, վորը տևեց 14 տարի: Ռիֆիները չէին կամենում կորցնել իրանց ազատությունը: Ֆրանսիացիք և Իսպանացիք դաժան կերպով էին ճնշում այդ բնական և արդարացի ձգտումը: Անկախ և ազատ ժողովրդին տված սարսափելի պատիժները կազմում են Ֆրանսիայի պատմության ամենամոռյալ էջերից մեկը, վորը իրան կուլտուրական և առաջավոր պետություն է համարում:

Ազգային և հեղափոխական շարժումը չի հանգչում, այլ
 ժամանակ առ ժամանակ բողոսվառվում եւ շատ պայծառ
 նաև Թրանսխայի այլ գաղութներում՝ Սիրիայում և մանա-
 վանդ Հնդկաչինում, ուր վերջերս ծագած ապստամբու-
 թյունը Թրանսխան ընկճեց ամենահատաղի խստությամբ։
 Հարստահարված ժողովուրդները Թրանսխայի անհաշտ թըշ-
 նամիներն են հանդիսանում։ Այս յերկրի բուրժուական
 կառավարությանը մեծ վտանգ եւ սպառնում վոչ միայն
 Թրանսխական բանվոր դասակարգի ինքնագլխակցության
 բարձրացման, այլ և իրանց ուժերը հավաքող գաղութային
 հպատակները կողմից։

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՅԵՐԿՈՒ ԿՈՂՄՈՒՄ

Յերբ միսը վերջացրեց, սրբեց նա դանակը, ծնկներին թափ
տվեց հացի փրշանճներն ու լամպը առջևը բռնած հեռացավ
բնակարանի խորքը, իր յետևից ծածկելով դուռը:

Մարդու շրթունքները շարժվեցին:

Նա հոգնած գլուխը կախեց: Բայց իսկույն վճռական կերպով նորից վեր նետվեց: Վեր կացավ և, մոտենալով լուսամուտին, դեմքը կպցրեց ապակույն ու սկսեց նայել: Սենյակը առաջվա պես մուխն էր: Նույնիսկ հատակի շողն ել այժմ չքացել էր: Ինչպես յերևում է, հարևան սենյակում հանգցրին լամպը կամ ամուր ծածկեցին դուռը: Մարդը գոտուց դուրս քաշեց յերկար և բզի պես բարակ դանակը, կոխեց լուսամուտի շրջանակի ստորին ծայրի տակ և կոթը անդմեց: Շրջանակը բարակ ճեղքվեց: Անծանոթը ցնցվեց և չորս կողմը նայեց: Հետո նորից սեղմեց դանակի կոթը, լուսամուտի փեղկերը անաղմուկ բացվեցին: Նա մեկ վոտքը ներս գցեց և, նստելով լուսամուտի գոգում, գլուխն առաջ թեքած սկսեց լսել և նայել: Սենյակի մե-

ռելաթիւն լռութիւնն ու մութը հանգստացրին նրան: Նա մյուս վոտքն ել ներս տարավ և կանգնեց հատակին: Կամացուկ քայլեց առաջ և... պայծառ լուսից աչքերը կկոցեց: Հարեան սենյակի լայն բացված դռներում կանգնած եր մարդը: Ձախ ձեռքում գլխից վերև նա բռնել եր լամպը, իսկ աջ ձեռքում փայլում եր ատրճանակը:

— Ինչո՞ւ մտար այստեղ, գող, շուն... գողած ատրճանակ բռնած մարդը:

Փողոցից մտածը կախեց գլուխը:

— Յես ուզում եյի միայն հաց վերցնել: Յես քաղցած եմ: Յես 4 ուր ե վոչինչ չեմ կերել:

— Այդպէս ասում են բոլոր գողերը: Ձգիր դանակը: Փողոցի մարդը դանակը նետեց հատակին և բարձրացրեց գլուխը: Լամպը ցնցվեց և քիչ մնաց ընկներ նրան պահող ձեռքից: — Կայ-Պանգուն! Իմ յեղբայրս...

— Այո, յես Կայ-Պանգուն եմ, քո յեղբայրը:

ԴԵՐ ԱՌ ԴԵՐ

Կես ժամ առաջ լուսամտուի յերկու կողմերում կանգնած յերկու անձնավորութիւններն այժմ կանգնած եյին դեմ առ դեմ: Առաջին իսկ հայացքից կարելի յեր հասկանալ, վոր դրանք յեղբայրներ են և յերկվորյակներ: Նրանք բարձրահասակ եյին, բաց շոկոլադագույն կաշվով, բարակ մեջքերով ու թիկնավետ: Նրանց գլուխները մեծ եյին, մտղերը յերկար և ուղիղ, արծվաքիթ, իսկ աչքերը մի քիչ թեք և նեղ բացվածքով: Նույնիսկ կիսալուսնաձև խալը յերևում եր յերկուսի յել բերանի ձախ անկյունում: Յեւ յեթե նրանց հագուստների տարբերութիւնը չլիներ, շատ դժվար կլիներ տարբերել մեկը մյուսից: Տառ-Պանգուն ուղղակի տկլոր մարմնի վրա հագած ուներ չեսուչե բաձկոն և նույնպիսի յել անտրավարտիկ: Իսկ Կայ-Պանգուն համարյա մերկ եր, յեթե չհաշվենք այն կեղտոտ կտորը, վոր փաթաթել եր յուրկայի պես ազդերի շուրջը և

ծայրերը կապել վոտքերի արանքում: Սակայն Տառ-Պանգուն բացի հագուստից տարբերվում եր իր յեղբորից նաև յերեսի գույնով, վորն ավելի սփրթնած եր և մի տեսակ գորշ: Յերեսին այդպիսի պղտոր սփրթնածութիւնն ստացվում ե միմիայն ոպիումից:

— Ի՞նչպէս դու յեկար այստեղ, հարցրեց մռայլված Տառ-Պանգուն:

— Ինձ հետապնդում են սպիտակները... վոստիկանութիւնը... յես թագնվում եմ... Յես չորս ուր վոչինչ չեմ կերել, բացի յեգիպտացորենի չորացած հատիկներից:

Յեւ շեշտակի նայելով յեղբորը, լուսից նեղացած բերելով, Կայ-Պանգուն հարցրեց.

— Այժմ ի՞նչպէս կվարվես ինձ հետ:

Տառ-Պանգուն լամպը դնելով սեղանի վրա, նստեց հյուսված ցածր աթոռի վրա, ատրճանակը միշտ բռնած յեղբոր կրծքին:

— Յես կտանեմ քեզ Սայգոն, ֆրանսիական վոստիկանապետի մոտ:

— Ինչո՞ւ:

Տառ-Պանգուն շրթունքների վրա խաղաց մի սառն ժպիտ:

— Յեղբայր, միթե դու յերեխա յես: Ախր դու Կայ-Պանգուն ես, «Անտառային յեղբայրների» առաջնորդը:

Կայ-Պանգուն հպարտութամբ գլուխը բարձրացրեց, ասելով.

— Այո:

— Յեւ դու կոտորեցիր ֆրանսիական հեծյալների եսկադրոնը, վորը նահանգապետի կարգադրությամբ ուղարկված եր պատժելու ապստամբած Ֆեն-Չա-ժու գյուղը:

— Այո, յես, — լավեց հպարտ պատասխանը:

— Բացի դրանից դու այրեցիր նավահանգստի մոտ գտնված և ֆրանսիացիներին պատկանող ռազմական պահեստը Սայգոնում:

— Նույնպես յես եյի:

— Իսկ միթե դո՞ւ չեյիր ֆրանսիական նահանգապետ Լաբերկի տնկարաններում արդեն հասած յեզիպտացորենի ցանքներն ու լեղակն այրողը:

— Այդ ել յես եյի:

— Փորձիր ստել, վոր քո խումբը չեր մանդարին և պայծառափայլ խորհրդական Վուռ-Նյամո-Չօիի ամարանոցն ավերողը:

— Այո: Յե՛վ մենք միայն մի բան եյինք ավաստում, վոր չկարողացանք կախել և իրան՝ Մանդարինին, այդ արյունոտ շանը: Նա կարողացավ փախչել Սայգոն:

— Դրա համար ֆրանսիացիք նշանակել են հինգ հազար վոսկի պագոդ (դրամ ե) հատուցում քո գլխի համար, և յես ցանկանում եմ ստանալ այդ վոսկին:

— Բայց ինչի՞դ ե պետք այդ վոսկին, յեղբայր: Դու մենակ ես ապրում, չունես կին և յերեխաներ: Ստացածդ քեզ բավականեցնում ե հացի, մսի, և նույնիսկ, յես գուշակում եմ քո դեմքից, ոպիտմի և մի բան ել ավելանում ե:

— Ավելի վոսկին վոր չի ծակում, պատասխանեց Տաո-Պանգուն, — գողի նման թագցնելով աչքերը յեղբոր շեշտակի հայացքից:

— Բայց չե վոր յես քո յեղբայրն եմ, — պարզ ու անկեղծ կերպով ասաց Կայ-Պանգուն:

— Դու իմ յեղբայրը չես այլևս, ճշաց Տաո-Պանգուն, և ատրճանակի նապաստակներս ստվերը շարժվեց առաստաղի վրա: — Բո ավագակությունների պատճառով ֆրանսիացիք ուզում եյին զրկել ինձ այստեղի դատավորի պաշտոնից: Անիծված յեղիր դու, և թող մեր նախնիքների դամբարանների ծածկոցը արատավորվի քո խայտառակությամբ, անտառային գո՞ղ և ավազակ:

Կայ-Պանգուն դառն կերպով ծիծաղեց:

— Յես տեսնում եմ, վոր սպիտակները գյուղական դատավորի պաշտոնով գնել են իմ յեղբորը: Քանիս՞ով ես ծախվել, յեղբայր:

Տաո-Պանգուն վիրավորված շարժեց շրթունքը, սակայն այս անգամ զսպեց իրան և պատասխանեց հանգիստ:

— Դու յե՛լ կարող եյիր լինել նույնը, ինչ վոր յես եմ:

— Ու, վո՞չ, յեղբայր: Ապրել սպիտակների վողորմությամբ: Յերբեք:

Տաո-Պանգուն գրգռված թքեց ծամած բետելը*, արյունոտելով շրթունքները, և վիրավորական շեշտ դնելով ամեն մի խոսքի վրա, ասաց.

— Դու սկսեցիր այդպես խոսել այն որվանից, յերբ ֆրանսիական սպան ծեծեց քեզ մտրակով, ինչպես ծեծում են թափառաշրջիկ շանը:

— Ու, վո՞չ: Դա միայն վերջնականապես ինձ տարավ այն ճանապարհի վրա, վորով այժմ գնում եմ: Միթե դու չես տեսնում և չես լսում, թե ինչպես հառաչում են յեկվոր սպիտակների կրունկի տակ մեր բոլոր յեղբայրները... Տնքում ե Բերման, Կոխինիսինան, տնքում են Աննամն ու Տոնկինը: Տնքում ե մեր ամբողջ յերկիրը: Իսկ դու մի հտոր մսով և մի ծխամորճ ոպիտմով ծախում ես յեղբայրներիդ:

— Լռիր, ավազակ, սպառնական կերպով և աչքերի սպիտակուցը փայլեցնելով ասաց Տաո-Պանգուն:

— Յե՛վ յերբ այնտեղ, փողոցում քաղցած յես նայում եյի քեզ, թե ինչպես ուտում եյիր, յես հասկացա, վոր մենք յերկուսս կանգնած ենք պատուհանի տարբեր կողմերում: Ու մենք յերբեք չենք միանա: Դու ընդմիշտ բաժանվեցիր քո աշխատավոր ժողովրդից:

1) Բետելը բույս ե, Արևելյան Հնդկաստանում, վորը ծամում են. նա արձակում ե մի տեսակ կարմիր հեղուկ, վորը կարմրացնում ե շրթունքները: Ծ. Թ.

— Իսկ դու ցանկանում ես փրկել նրան սպիտակների բարկութունից, արհամարական ժպիտով ասաց Տառ-Պանգուն:

— Այո, մենք, «Անտառային յեղբայրներս» կազատենք մեր աշխատավորութունը: Մեզ մոտ են վազում բոլոր նրանք, ում սեղմում է սպիտակների կրունկը: Ու, յեղբայր, սպիտակների վոսիլու փայլը կուրացրել է քեզ, յեթե վոչ դու կտեսնեիր, վոր մեր յերկիրը մեռնում է սովից, գյուղերը դատարկվում են, դաշտերը լքվում, թեյի թփերը չորացած կմախքների յեն նմանվում, իսկ թթի ծառերը վաղուց կտրատվել են տավարի կեր դառնալու համար: Մի բուռն սպիտակներ սարդի պես կպել են մեր յերկրին և խեղդում են նրան անողորմաբար...

— Իսկ ով պետք է կառավարե յերկիրը, յերբ վոնդեք սպիտակներին: Ինչպես հնում — թագավորն ու մանդարինները:

— Ույ, այդ կնշանակեր մեկ ոձին սպանելուց հետո ժողովրդի թևի տակ գնել մյուսը: Վեչ: Յերկիրը կկառավարեն նրանք, վորոնք ունեն այդ իրավունքը՝ բանվորները քաղաքներից, գյուղացիները, փայտահատները, հովիվներն ու ձկնորսները:

— Դու հիմար ես: Այդպիսի կարգ չկա վոչ մի յերկրում:

— Այդպիսի կարգ է ձյունների հեռավոր ու խիստ յերկրում, նրանց այդ բանը սովորեցրել է մեծ առաջնորդը, վորն ազատել է ձյունների յերկիրը մանդարիններից: Նա յել կվոչնչացնի մանդարիններին վողջ աշխարհում:

— Տառ-Պանգուն կանգնեց: Նրա դեմքը չղաձգությունից ծամովում էր, մութ սարսափից կատաղությունը մեծանում:

— Դու խելագար ես, դու խելքը կորցրած գոմեշ ես, և յես պետք է ազատեմ քո կատաղությունից անմեղ մարդկանց: Դու կերթաս ինձ հետ Սայգոն:

— Յես կերթամ Սայգոն, սակայն վոչ շղթայված ձեռքերով, այլ իմ «Անտառային յեղբայրների» գլուխն անցած:

— Այն ժամանակ յես կսպանեմ քեզ և գլուխդ կտանեմ վոստինանապետին:

— Վեչ, սպիտակների շո՛ւն:

Սրանից հետո տեղի ունեցած կովում դատավոր Տառ-Պանգուն սպանվեց: «Անտառային յեղբայրների» առաջնորդը հագավ նրա շորերը և շնորհիվ նրանց նմանության առանց ճանաչվելու հեռացավ գյուղից: Գալով Սայգոնի արվարձանը (Կոխինխինայի գլխավոր քաղաքը) կայ-Պանգուն սկսում է հավաքել իր շուրջը իր համախոհներին: Սայգոնի արվարձանը՝ Շոլոնը, տեղացի չքավորների քաղաքն է:

Շոլոնում չկան հարուստ պալատներ և հրապուրիչ կոտտեջներ (հարուստի ամարանոց): Այստեղ ապաստան են գտնում տեղացի չքավոր դասը, աննամիտները, չինացիք, հնդիկներն ու մալայցիները, Սայգոնի գործարանի բանվորները, բրնձի չրաղացների բանվորները, նավահանգստում աշխատող կուլիները, ձկնորսներն ու նավաստիները: Շոլոնի ծուռ փողոցներն ու նրբանցքները, վորոնք տղմի, աղաջրի և ոպիումի հոտ են արձակում, չեն կարող պարծենալ մաքրությամբ և իրանց շենքերի գեղեցկությամբ: Չքավորների խուղերը տխուր շարքեր են կազմում, խառնվելով անշուք խանութների, հնդկական մեհյանների և գինեանների հետ: Ուղղահայաց՝ ցուցանակները ուճուխի և համանվող խորհրդավոր տառերով հասկացնում են, վոր այստեղ ապրում է կարասիներ վաճառողը, այստեղ՝ հնավաճառը, այստեղ գտնվում է հասարակ ճաշարանը, կողքին՝ դադադագործի խանութ է, իսկ ղիմացը աղմկոտ գինետուն:

Յերեկոները լուսավորված են լինում միայն գինետոները: Սրանք ձկան փամփուշտից պատրաստած խոշոր ու

կլոր լապտերների յերկշար, յեռաշար մանյակով շքնապատ-
ված, վրդովում են հարավային գիշերվա խաղաղությունը
հարձաժների խապոտ աղաղակներով, կիմբալներ (ծնծղա-
ների) հարվածներով, թմբուկների աղմուկով և չինական
ֆլեյտաների մոնոտոն ու տաղտկալի բղղոցով։ Իսկ մոտա-
կայքում ծառերի տակ, դարպասների անկյուններում կողք
կողքի պառկած են կուլիները (սևագործ բանվոր)։ Նրանք
քարշ գալով այստեղ և ծածկվելով ցնցոտիներով, խորը
քնած են, սպասելով նավահանգստի շահին, վոր կզար-
թեցնի նրանց նոր որվա ծանր աշխատանքի համար։ Խըր-
ճիթների և գինետների կողքին փռվել ե մի ուրիշ քաղաք,
վորի նմանը չի կարելի գտնել վոչ մի տեղ յերկրագնդի
վրա։ Դա Ջրային Շուրհն ե։ Ահա մար ծոցերում և ջրանցե-
ներում այնքան ջոնկաներ (թեթև ու խախուտ նավեր) և
նավակներ կան, վոր կարելի յե հեշտությամբ անցնել
մեկ ավից մյուսը, ինչպես անցնում են կամուրջով։ Յե-
րեկը սրանք ծովային և գետային նավեր են, իսկ գիշերը՝
լողացող տներ, յերկրորդ խորհրդավոր քաղաք ջրանցե-
ների կեդոտ ջրերի վրա։ Ջոնկաների վրայից լավում ե
յերեխաների ծվծվոց, խոզերի խոխոց, ընտանի թռչուն-
ների աղաղակ։ Այստեղ նավի վրա յե ամբողջ տնտեսու-
թյունը։ Իսկ ավերին փռված են չորանալու ձկնորսական
ուռկանները։

Թյունը: Այսպես ե հարուստներին և յեվրոպացիներին
ատող Շոլոնը, նա լոկ մի կայծի սպասող վառողով լի տա-
կառ ե, վոր կարող ե վորոտալ իւռովության և ապստամ-
բության սարսափելի պայթյունից:

Մուտքից վոչ հեռու փայտե լակած շիրմայի յետև
նստած եր մի յեվրոպացի, Հագուստով նա նման եր յեվ-
րոպացի նավաստու: Նրա առջև սեղանի վրա դրված եյին
ողու բաժակն ու բաց ծոցատետրը: Լցնելով ծոցատետրի
մի յերեսը, նա ցած դրեց մատիտը, մի կում խմեց բա-
ժակից և զրեց բերանը ազը դրած մի փոքրիկ ձուկ: Հան-
կարծ նա արագորեն շուռ յեկավ: Իր կողքին լավեց վա-
խեցած, բայց ցածր ճիչ:

Յեվրոպացիին սեղմվեց փայտե շիրմային և հետաքրքրու-
թյամբ նայում եր հարևան սեղանի շուրջը նստած մարդ-

կանց: Նրանք յերկուս եյին: Սեղանի մօտ կանգնած եր
մի հսկա տեղացի: Նրա կաշին բաց շոկոլադի գույն ունեւ:
Մեծ գլուխը հպարտ կերպով յետ եր ընկած: Նրա դեմքը
այնպիսիներից եր, վոր մի անգամ տեսնելով յերբեք չեա
մոռանա: Նա համարյա մերկ եր, յեթե չհաշվենք ազդ-
րերի շուրջը յեղած փաթաթանք: Զիչ արձակած մարդը
նստած եր աթոռի թիկունքին հենւած: Սա արդեն հասակն
առած, կարճահասակ և վտիտ մր տղամարդ եր, հագած
լայն և մուգ կապույտ գույնի կոստյում, ինչպիսիք հագնում
են հյուսիսային չինացիները:

— Ինչի՞ վախեցար, Լյաո-Սու, ծիծաղեց հսկան:

— Լյաո-Սուն իր համար յերբեք չի վախեցել, պատաս-
խանեց նստածը:

Յես վախենում եմ քեզ համար, Կայ-Պանգու: Մի՞թե
չեա կարդացել սա, ավելացրեց նա ձեռքով խփելով սե-
ղանի վրա դրված լրագրին:

— Կարդացել եմ, պատասխանեց Կայ-Պանգուն շատ
հանգիստ: Այսոր նրանք ինձ չեն բռնի, իսկ վաղն արդեն
ուշ կլինի:

— Յեվրոպացին, վոր շիրմայի յետևից հետևում եր
այս տեսարանին, գրպանից հանեց «Անտամիտական ձայն»-ի
համարը: Առաջին յերեսում կարդաց հետևյալը.

Հատուցում

Կայ-Պանգույին բռնելու համար կրկնապատկած և
գինը՝ 10.000 պագոդ վոսկով այդ յեղբայրասպան
ավազակի գլխի համար:

Հետաքրքրությամբ նայեց վերնագրի տակ գրված նկա-
րին, ապա հայացքն ուղղեց հսկային: Նա ցնցվեց, նույն
դեմքը: Յեվրոպացին սկսեց հետաքրքրությամբ լսել յերկու
տեղացիների խոսակցությունը:

— Իմ «Անտառային յեղբայրները», ասում եր Կայ-
Պանգուն, գալիս են այստեղ: Մի գիշերվա ընթացքում

նրանք կարող են մոտենալ Սայգոնին: Իսկ դուք պատ-
րաստ եք:

Լյաո-Սուն դրական նշան արավ:

— Մենք վաղուց պատրաստ ենք: Քինայի, լուցկու,
խմիչքների և ոճառի գործարանների բանվորները Սայգոնում
առավոտյան պետք և սպասեն ազգանշանի: Բացի դրա-
նից մեզ ոգնության են գալիս արդեն շախտորների խմ-
բերն ու «ավադե անդունդի» չինական ձկնորսները: Սա-
բերն և «ավադե անդունդի» չինական ձկնորսները: Սա-
կայն մեր գլխավոր հույսը Շոլոնն ե: Շոլոնը զայրացած
ե, նա դեպի յեվրոպացիներն ու հարուստները ատելու-
թյամբ լցված հորձանք ե տալիս ու յեռում: Քո մի խոսքը,
Կայ-Պանգու, — և Շոլոնը թայֆունի բարձրացրած ալիքի
նման կլցվի Սայգոնի փողոցները:

Կայ-Պանգուն հպարտ կերպով ուղղվեց:

— Շոլոն: Յես այնպես սիրում եմ նրան և այնպե՞ս
հպարտանում նրանով:

Շոլոնն հիշում ե իր հյուրի՝ մեծ Սունի պատգամները:
Շոլոնն առաջինն ե բարձրացնում ապստամբության դրո-
շակը: Յեվ յեթե մենք վաղը չհաղթենք, սարսափեցուցիչ
չի լինի այդ պարտությունը: Մի տարուց, յերկու կամ
տասը տարուց յետ հաղթությունը այնուամենայնիվ մերը
կլինի, վորովհետև մենք հաստատակամ ենք և զորեղ,
ինչպես թայֆունը:

— Այո, մենք զորեղ ենք, ինչպես թայֆուն, հնչեց
ցնծալի մի բացականչություն:

Կայ-Պանգուն և Լյաո-Սուն վեր թռան խայթվածի
նման: Նրանց առջև կանգնած եր յեվրոպացին ծովագնացի
գլխարկով:

ԿՈՒՎ ՊԱՆԴՈԿՈՒՄ

— Յես լսում եյի ձեր խոսակցությունը, ասաց նա,
և յես վաղուց ուզում եյի հանդիպել քեզ, Կայ-Պանգու:

Լյաո-Սունի ձեռքը ոճառ շարժումով ներս սողաց իր
հագուստի ծալքերի տակ: Յեվրոպացին սկսեց այդ շար-
ժումը:

— Մի րոպե սպասիր, Լյառ-Պոռ, ասաց նա հանդիստ։ Սպանել ինձ միշտ ել կարող ես։ Լսեցեք նախ, թե ով եմ յես։ Ինձ անվանում են Կուտանդո։ Ինչպես տեսնում եք, յես յեվրոպացի յեմ և, նույնիսկ խոստովանում եմ, ֆրանսիացի, այսինքն այն ոտարյերկրացիներից, վորոնք ստորկացրել են ձեզ։ Սակայն յես պատկանում եմ կոմունիստական կուսակցությանը և յեկել եմ այստեղ նրա համար, վոր իմանամ տեղացիների ճնշման և հալածանքի վերաբերյալ բոլոր ճշմարտությունը և գրեմ այդ մասին մեր լրագրում, վոր կոչվում ե «Յոլմանիտե»։ Դուք լսել եք այդ թերթի մասին։

— Այո, այո, ինձ կարդացել են այն, բացականչեց
Նալ-Պանգուհն վողկորված:

— Դա շատ լավ թերթ է, դա միայն ճշմարտությունն է ասում, և վրչ թե թունավոր թուրք է սփռում, ինչպես այս գարշելին, նա մատույլ ցույց տվեց սեղանի տակ ընկած «Աննամիտների ձայն» թերթի համարը:

— Իսկ յես մեկն եմ նրանցից, վորոնք գրում են
«Յուժմանիտե» լրագրում, առաջ կուտանզոն:

Կայ-Պանգուն հավատարով վստահորեն ժպտաց և մեկ-
նեց իր ձեռքը Կուսանգոյին:

— Յեա հավատում եմ քեզ, յեղբայր: Դու մերն ես:
Լյառ-Խրուն առաջվա նման հոնքերը կիտած, վոչ բա-
րեկամաբար և կասկածանքով եր նայում Կուտանդոյին:
Հանկարծ նա ցնցվեց և զսպված ճիչով դիմեց Կայ-Պան-
գուլին:

— Մի հավատար, ո՞ր առաջնորդ, մի հավատար նրան։
Նա կեղծում է։ Նա կմատնի քեզ։ Նայիր... ասաց նա
ձեռքը մեկնելով դեպի պանդոկի մուտքը։

Կուտանգոն նայեց այն կողմը. զոններում յերևացին
վռատիկանները կանաչ գոտիները:

— Մատնիչ, կատաղած դիմեց Լյառ-Խուն ֆրանսիացուն:

— Կանգնիր, ծածկելով իր մարմնով թղթակցին, հրա-
մայաբար աղաղակեց Կայ-Պանգուհն: Մատնիչը նա չե,
սի, ով է մատնիչը:

Կայ-Պանգուհուն մատուով ցույց տվեց Ձե-Ձուլին, վորը գախլի յետեից ինչ վոր նշաններ եր տալիս վոստիկաններին: Նկատելով Կայ-Պանգուլի շարժումը, չինացին վախեցած կուչ յեկավ և կռացավ, մտադրվելով թագնվել դախլի տակ: Բայց չկարողացավ: Կուտանգոն չկարողացավ տեսնել այն շարժումը, վորով Կայ-Պանգուհուն դուրս քաշեց գոտկից բղի պես յերկար ու բարակ դանակը: Ապա նրա սեացած ձեռքը կայծակի արագությամբ իջավ չինացու վրա: Ձե-Ձուն յերերաց ու առանց ճչի, առանց տնջոցի յերեսն ի վայր ընկավ դախլի վրա, շուռ տալով և փշրելով շշերը: Սրահը սարսափած հառաչեց, Վոստիկանական կոմիսարը հանեց ատրճանակն ու վճռական քայլերով շարժեց Կայ-Պանգուլի վրա: Բազմությունը վախեցած բաժանվեց, բանալով նրա առաջ ճանապարհը: Լյաո-Սուի ձեռքում փայլատակեց փոքրիկ բրաունինգը:

— Հարկավոր չե՛, շնչաց նրան կուտանգոն: Յես մի
բոպե կզբաղեցնեմ վոստիկաններին, իսկ ղուժ այդ միջո-
ցին փախե՛ք:

Յին փախեց:
Յեւ տեղից յեկնելով Կուտանդոն ուղղակի հարձակվեց
վոստիկանների վրա: Իր շարժումները վարպետորեն նմա-
նեցնելով հարբած մարդու անվստահ շարժումներին, շուռ-
տվեց սեղանը վոստիկանների վոտքերի տակ: Կոմիսարը
սայթաքեց և փռվեց հատակին: Թավալվելով փշրված
ջշերի կտորների մեջ, նա զայրացած գոռում եր.
Հայտնի է, որ այս պահին Կիրակեմ:

— Կանգնիր, կանգնիր քեզ ասում են: Կիրակոս:

— Կորեք, գոչում եր Կուտանգոն: Յես ժամանակ

— Կորեք, գոչումս արժանի է քեզ համար։ Ինչ վոր անամոթներ հեծանիլս փախցրին։ Յես
տեսաւ։ Թողէք։ Յես կհասնեմ նրանց...

Հրելով վոստիկաններին կուտանդոն նրանցից մեկին
գետին գլորեց: Սա ընկնելիս իր մարմնի ծանրությամբ

պառկեցրեց մյուսին: Յերրորդից ինքը Կուտանդոն մի ուժեղ հարված ստացավ գլխին և յերեքարով նույնպես ընկավ դեռ վեր չկացած վոստիկանների վրա: Արդեն պառկած Կուտանդոն քաշեց չորրորդի վոստից և նրան ել շրջեց ընդհանուր կույտի մեջ: Բազմությունը, վոր մինչ այդ ազահ հետաքրքրությամբ միայն դիտում եր այս տուրուդմիտը, նույնպես խառնվեց կովին: Յույց տալով, վոր իբր թե ոգնում են վոստիկաններին, պանդոկի այցելուները ել ավելի սաստկացնում էին քաջքշուկը:

Այդ վայրկյանին լսվեց կոտրված փափակու զրնգոց... մեկ ել... և սրահը թաղվեց մթության մեջ: Դա Լյառ-Նուռն եր, վոր սղիղո նշան առնելով տաքուրեւտով ջարդեց լապտերները: Կուտանդոն ուղղվեց, իր վրայից մի կողմ հրեց ում վոր ծանր մարմինն ու վազեց դեպի դուռը: Շոշափելով, նա մթության մեջ գտավ խտրը, վորը կախված եր դռան փոխաբեն, յետ տարավ ու դուռն թռավ վերանդան: Դռնակը վորոնելու համար ժամանակ չկորցնելով, թռավ բամբուկե ցանկապատից և սկսեց փախչել խաղաղ և մութ փողոցով: Փողոցի անկյունում կանգ առավ և սկսեց ականջ դնել: Պանդոկն աղմկում եր դեռ, ինչպես անհանգստացած փեթակ: Հիշելով կոմիսարին, վոր թավալվում եր ջարդված շների կտորտանքի մեջ, Կուտանդոն մանկան նման ուրախ քշքշաց, և իսկույն լռեց, լսելով վազող մարդկանց արագացած շնչառությունը: Յերկու մութ կերպարանքներ նրա դեմն յելան այնքան անսպասելի և արագ, վոր նա հազիվ կարողացավ զգուշաբար տան պատին սեղմվել: Սակայն վազողները այնուամենայնիվ նկատեցին նրան և կանգ առան: Դիտելով՝ Կուտանդոն ճանաչեց Կայ-Պանգուլին և Լյառ-Նուռն:

— Դուք փախա՞ք, ուրախ բացականչեց Փրանսիացին: Կայ-Պանգուլն մթության մեջ գտավ Կուտանդոյի ձեռքը և լուռ, առանց բառերի ամուր, շատ ամուր սեղմեց նրան իր սրտին: Այս լռելայն շնորհակալությունը խորը կերպով հուզեց Կուտանդոյին:

Յերբ յերկու տեղացիները անհայտացան գիշերային մթության մեջ, Կուտանդոն նույնպես ծովեց և մտավ մի փողրիկ և ծուռումուռ փողոց: Անկյունում կանգնեց, բարձրացրեց աչքերը և չկարողացավ պահել իր աղաղակը, վոր բղխում եր հիացմունքից: Փողոցը կտրող լայն ջրանցքը խիտ կերպով ծածկված եր նավակներով և ջոնկերով: Աղաղակները, համաչափ ծափերը և ֆլեյտաների հնչյունները լսվում էին այնտեղից: Նավերի կայմերը զարդարված էին լապտերներով: Յեվ այդ կրակները, ինչպես գիշերային հարյուրավոր՝ կարմիր, կանաչ, կապույտ, դեղին հրեղեն նուռնուփարներ, կազմում էին սքանչելի լուսեղեն նաշխեր:

— Սքանչելի յերկիր, շնչաց զմայլած Փրանսիացին: Նա պետք ե ազատ լինի: Յեվ կլինի...

ԹԱՅՅՈՒՆ ԱՎԵԼՈՒՄ Ե ՍԱՅՊՈՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Կայ-Պանգուլն հավաքեց իր «Անտառի յեղբայրներին» և ուղարկեց նրանց Սայգոն: Շուրհի չքավոր դասը միացավ նրանց: Ապստամբներին հարկավոր եր գրավել Սայգոնի գլխավոր հրապարակն ու բերդը, վորպեսզի իրանց ձեռքում ունենային ամբողջ քաղաքը: Բայց նրանք չունեին թնդանոթներ և բացի դրանից հարևան շախտյորների և ձկնորսների խմբերը ուշացան ճանապարհին և կռիվն սկսվելիս տեղում չէին: Ապստամբների դեմ կռվում եր ոտարյերկրյա լեզիոնը, վորը գտնվում եր Փրանսիացիների տրամադրության տակ: Փրանսիական զենքերալ նահանգապետն ուներ և զինվորներ, և թնդանոթներ, և վոստիկանություն: Կայ-Պանգուլն զեկավարում եր շարժումը Հինգ աշտարակների բլուրից: Այս կետից քաղաքը հիանալի կերպով յերևում եր: Նրա կողքին էին Լյառ-Նուռն և Կուտանդոն:

Նայտաբղետ խմբերը հարձակման էին գնում լուռ, առանց կրակոցների: Լայն սվինները փայլեցնելով նրանք

համառորեն շարժվում էին առաջ ֆրանսիացիների բարի-
կադներին վրա: Ահա նրանք հարյուր քայլի վրա յեն: Յեվ
այստեղ պայթյունի դղրդոցը բռնեց շրջակայքը: Այս պայ-
թյունի ձայնը ինչ վոր առանձին տեսակ եր, զրնգուն,
կարծես գետին նետեցին ապակու արկղ: Ապա յերկրորդ,
յերրորդ պայթյունը և անընդհատ թնդանոթաձգությունը
խառնվելով կազմեց մի ընդհանուր վոռնոց:

— Ոհո, ձեռքի ուռմբեր, — շնչաց Լյաո-Սուն:

Ապստամբների վտռների տակից սկսեցին բարձրանալ
հողի և ծխի շատրվաններ ձեռքի ուռմբերի պայթյունից:
Այս բոլորը միախառնվելով կազմեցին թանձր, շիկազույն
մառախուղ և վարազույրի նման ծածկեց կովի դաշտը հե-
տաքրքիր հայացքներից:

ԴԵՊԻ ԼԵՌՆԵՐԸ, ՄՈՅԵՐԻ ՄՈՏ

Կուտանզոն մոտեցավ ապառաժուտի ափին և վերահաս
դժբախտության հոգեմաշ զգացումով նայեց ներքև: Յե-
րևում եր, թե ինչպես ապստամբների խայտառղետ բազ-
մությունը լեզիոնների ճնշման տակ, թեև դանդաղ, բայց
հաստատապես նահանջում եր դեպի բլուրը: Նա ուղղում եր
արդեն հեռանալ ապառաժուտի ափից, յերբ անսովոր շար-
ժումը հրապարակում գրավեց նրա ուշադրությունը: Յեր-
կար ութածի լծվածքը արագ դուրս թռավ հրապարակ և կանգ
առավ գեներալ-նահանգապետի պալատի մոտ: Կուտան-
զոն նկատեց փոքր թնդանոթը, վորի փականքի մոտ վրի-
տում էին տասնյակ մարդիկ: Կուտանզոն հասկացավ, վոր
կովոդների ուժերը անհավասար են, վոր ապստամբները
այս անգամ պետք է նահանջեն:

— Կարծես իմ փախչելու ժամանակն էլ հասավ, մոտ-
ծեց ֆրանսիացին: Հենց այդ վայրկյանին թնդանոթը
հրապարակում գոռաց, տրաքվեց շրապնելը, և գնդակները
անձրևի տարափի նման աղմկեցին ծառերի սաղարթում:
Կուտանզոն թռավ մոտոցիկլի վրա և հանդարտ հեռացավ
բլուրից:

Հարյուր մետր դեռ չեր հեռացել, յերբ տեսավ, վոր
դիմացից սրարշավ գալիս է ժանդարմների շուկը: Առջևից
ձիավարող սպան դարձավ Կուտանզոնին հարցնելով.

— Դուք յեղմբ այնտեղ, բլուրի մոտ, պարոն:

— Այո, յեղա:

— Յեվ վոչվոքի չտեսմբ այնտեղ:

— Վոչոքի, աչքը չթարթելով ստեց Կուտանզոն: Իսկ
սև եք փնտրում դուք:

Խթելով ձիու կողերը, սպան բացականչեց.

— Այնտեղ թագնվում է խռովարարների գլխավորը՝
Կայ-Պանգուն:

Ժանդարմները հեռացան: Կուտանզոն նայեց նրանց
յետևից արհամարական ժպիտով: Յեվ հանկարծ սպիտակ
ակացիայի թփուտում ճրթճրթացին վոստերը և ծառուղու
վրա կանգնեց Կայ-Պանգուն:

— Առաջնորդ, առաջնորդ, թագնվիր, փախիր, քեզ ար-
դեն փնտրում են ժանդարմները, աղաղակեց Կուտանզոն
վախեցած:

Կայ-Պանգուն գունատ եր, բայց անվրդով:

— Փախչելու տեղ չկա, պատասխանեց նա. ֆրանսիա-
ցիք շրջապատել են պուրակը:

— Նստիր, կանչեց Կուտանզոն, ցույց տալով մոտո-
ցիկլի կողքի նստելատեղը:

— Ինչո՞ւ. Դու ինձ չես փրկի, իսկ ինքդ կկորչես:

— Նստիր, արդեն խիստ ձայնով կանչեց Կուտանզոն:
Կայ-Պանգուն մի վոստույնով թռավ մոտոցիկլի վրա:
Մոտորն աղմկեց: Կուտանզոն տեսնում եր, վոր ամե-

նից դժվարը ծառուղուց դուրս պրծնելն է, վորովհետե
նրա վերջում փոքրիկ բամբուկե կամուրջի մոտ կանգնած
էին յերեք ձիավոր ժանդարմ: Կուտանզոն լրիվ բնթաց
ավեց մոտոցիկլին: Քամու սուլոցն ականջներում խլա-
ցրեց մոտորի կատաղի վոռնոցը: Մոտոցիկլն արագ մոտե-
նում եր, սակայն վարժեցրած ձիերը կանգնած էին ինչ-

պես արձան, անվախ նայելով մոտեցող և վտռնացող հրե-
շին: Ժանդարմները դեմ յեւան մոտոցիկլին... Մեջտեղի
ժանդարմի կարմիր ու խոշոր յերիվարը խրտնելով ծառս
կանգնեց... Մի վայրկյան նրա սմբակները կախվեցին մո-
տոցիկլի վրա: Կուռտանդոն ակամայից կռացավ, բայց յերբ
յերիվարը սմբակները գետին դրեց, մոտոցիկլը կամուր-
ջից արդեն շատ հեռացել էր: Փախչողների գլխի վերեւ
սուլեց գնդակը: Ժանդարմները սլանում էին նրանց յե-
տևից կրակելով: Մոտոցիկլը թռչկոտում եր սալահատակի
խորդուբորդերի վրա: Շողացին Սայգոնի տները, խանութ-
ները, մեհյանները: Անցան ուղարգելի մոտով: Քաղաքը
վերջացավ:

— Ո՞ւր գնանք, առաջնորդ:

Կայ-Պանգուն ձեռքը հեռացրեց յերեսից և հնչուն ձայ-
նով աղաղակեց.

— Դեպի լեռները, մոյերի* մոտ: Յեվ այնտեղից ու-
ժերս հավաքած կլցվենք Սայգոնի փողոցները:

Արեգակն իջնում էր: Նրա շողերի տակ ջրով վողող-
ված բրնձի արտերը կարմրին էին տալիս: Մոտենում եր
գիշերը:

Կոստյան և Կոլյան առանց ընդհատելու կարդացին
մինչև վերջ այս յերկար պատմվածքը:

— Այո, «կուլտուրական յեմրոպացիների» լծի տակ
ընկած ժողովուրդների դրությունը շատ վատ է, — մտա-
ծում էին նրանք:



*Մոյերը — լեռնային ցեղ են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	5
ԱՆԳԼԻԱ	5
Լոնդոն	9
Հանդիպում են անգլիական պիոներներին	19
Դպրոցականները ծանոթանում են անգլիական պիո- ներների կյանքին	29
Գործադուրկներ	36
Անգլիայի ֆարրիկները և գործարանները	48
Ընտրությունների գիշերը	56
Վիճակագրական տվյալներ	59
ԳԵՐՄԱՆԻԱ	61
Գերմանական դպրոցի մասին	62
Բեռլին	70
Թշվառներ	74
Բեռլինի ցույցը	80
Գերմանական բանվորները	82
Գերմանիան պատերազմից հետո	90
Ճամբորդություն Գերմանիայում	100
ՖՐԱՆՍԻԱ	111
Պարիզ	120
Պարիզի լվացարարուհիները	122
Պարիզի անցյալից	128
Ֆրանսիական դյուղը	142
Որագնացության ցուցահանդեսը Պարիզում	145
Ֆրանսիայի պարտքերը	149
Ինչպես և կառավարվում Ֆրանսիան	151
Ֆրանսիան — գաղութների գերիշխող	156
Պատուհանի յերկու կողմում	159

«Ազգային գրադարան»



NL0405979

95 4лм.

755
41509

244
Цена 95 коп.
У. 14.



Германия, Англия,
Франция

(Перевод с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, Центр, Никольская, 10.